





533

ՀԱՇՈՒԵԿՇՈՒ

ԼՈՒԾՈՒՄ


ԳՐԵՑ՝

ՏԻՐԱՆ Ա. ԻՍՊԷՆՉԵԱՆ

Վ.Ա.ՃԱՌՈՒՄԷ ԶԵՐԾ ՕՐԻՆԱԿ

ՍԵՓԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԻՍԹԱՆՊՈՒԼ, 1933



ՀԱՇՈՒԵԿՇՈՒ

ԼՈՒԾՈՒՄ

ԳՐԵՑ՝

533

ՏԻՐԱՆ Ա. ԻՍՊԵՆՉԵԱՆ

Վ. Ա. ՃԱՌՈՒՄԷ ԶԵՐԾ ՕՐԻՆԱԿ

ՍԵՓԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՍԹԱՆԳՈՒԼ, 1933



---

---

Ամէն իրաւունք վերապահուած է:

---

---

---

ՅՊԱԳՐ. 3. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԻԲ



---

---


Ամէն իրաւունք վերապահուած է:

---

---

---

ՅՊԱԳՐ. 3. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԻԲ



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Առեւտրական գիտութիւնները, որոնք մինչեւ շուրջ երկու տասնեակ տարիներ առաջ միայն ելմտագիտութիւն, սնտագիտութիւն եւ հաշուագիտութիւն միջավայրին մեջ կ'ուսումնասիրուէր, այսօր ընտանեկան է բոլորին, երբ առեւտրականութիւնը օր ըստ օրէ փորձառութենէ գիտութիւն կը փայէ: Միջազգային հրատարակին վրայ մեր դէմը գտնուող անանուն ընկերութիւնները, ֆոնդերները, բըրսները եւն. գիտութեան վրայ հիմնուած են եւ պիտի որ հիմնուած ըլլան: Եւ այսօր երբ գիտական առեւտրականութիւնը փափաքէ մը աւելի ստիպողականութիւն մը եղած է հեղինակը փափաքած է հանրութեան գրութիւն մը ներկայացնել, որ ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԼՈՒՇՈՒՄ (գերմաներէն *Bilanz-Analyse* կամ *Bilanz-Kritik* եւ կամ ֆրանսերէն *Lecture d'un bilan*) անունը կը կրէ եւ կոչուած է առեւտրական ձեռնարկները սնտագիտի դաստիարակութեամբ մը ուսումնասիրելու:

Գրին բովանդակութեան գալով, եթէ ըսուէր թէ՛ բոլորն ալ հեղինակին յօրինութիւնն է այս ապերախտութիւն մը պիտի ըլլար հանդէպ անոնց, որոնք առեւտրական գիտութիւնները այսօրուան վիճակին բերած հասցուցած են: Սակայն, սա ըսել կրնայ թոյլատրուիլ որ, մեր գիրքը ոչ մէկ օտար գրի վրայ հիմնուելով գրուած չ'է. քանի որ արդէն բարգմանուած մասնագիտական հրատարակութիւն մը շատ քիչ անգամ հաշտ կուգայ ազգի մը խորհելակերպէն եւ գործելակերպէն:

Հաստիճակ պատկան օրինակները գրին վերջաւորու-



քեան անջատաբար ներկայացնել որքան նորոյք մը այն-  
քան ալ ստիպողականութիւն մըն էր, քանի որ իւրաքան-  
չիւր Ֆրոմիւլի եւ կրօնաբանական բացատրութիւնները գրին  
զանազան մասերուն մեջ կը գտնուին:

Կրնայ ըլլալ որ կարգ մը սպագրական սխալներ  
սպրդած ըլլան որով հեղինակը իր յարգելի ընթերցող-  
ներէն պիտի խնդրէր որ զանոնք նկատի չ'առնէին:

Իսթանպուլ, Ապրիլ 1933

Տիրան Ա. ԻՍՊԷՆՉԵԱՆ

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԳԵՐՄԱՆՆԵՐԻՆԷ

- Adler W., *Gundriss der Betriebswirtschaftslehre*  
(10 հատոր), Լայպցիկ 1927
- Coutre W., *le, Praxis der Bilanzkritik* (2 հատոր), Վլիենհա 1926
- Eichenseer C., *Technik des Bankbetriebs*, Լայպցիկ 1925
- Fischer R., *Sanierung*, Լայպցիկ 1911
- Gerstner P., *Betriebes — Analyse*, Պերլին 1928
- „ „ *Bilanz — „* „ 1928
- „ „ „ *— Schlüssel*, „ 1928
- „ „ *Kaufmann, Buchhaltung und Bilanz*, Լայպցիկ 1918
- „ „ *Revisions— Technik*, Պերլին 1930
- Heinzerling W., *Prüfung und Kritik einer Bilanz im Warengeschaeft*, Պերլին 1914
- Jores, *Bilanzkritik*, Շբուքհարթ, 1929
- Kalveram W., *Bankbuchhaltung*, Լայպցիկ 1926
- Knörk O., *Kontorhandbuch*, Պերլին 1910
- Konrad H., *Bilanzraetsel*, Վլիենհա 1928
- Leitner F., *Bilanztechnik und Bilanzkritik*, Լայպցիկ 1929
- „ „ *Finanzierung von Unternehmungen*, Լայպցիկ
- Lexis W. *Kredit und Bankwesen*, Պերլին 1920
- Manheimer W., *Sanierung*, Պերլին 1924
- Minialow E., *Bilanzgeheimnisse*, Վլիենհա 1928
- Mussfeld R., *Das Lexikon des Kaufmanns*, Պերլին 1932
- Rosenbach, *Wie bleibe ich flüssig ?*, Շբուքհարթ
- Rotschild, *Taschenbuch für Kaufleute*, Լայպցիկ 1927
- Schmalenbach E., *Grundlagen dynamischer Bilanzlehre*, Լայպցիկ 1926
- Schmidt Fr., *Die organische Bilanz im Rahmen der Wirtschaft*, Լայպցիկ 1923
- Somary F., *Bankpolitik*, Թիլպինկեն 1915
- Stein R., *Bilanz-Delikte*, Պերլին 1923

- Weyrich, *Bilanzkritik* Կօրէն 1912  
 Wolff E., und Birkenbihl L., *Die Praxis der Finanzierung bei  
 Errichtung, Erweiterung, Verbesserung, Fusionierung  
 und Sanierung von Aktengesellschaften*, Լայրցիկ 1908  
 Ziegler J., *Buchhaltung*, (3 հատր) Վիեննա 1924

### ՖՐԱՆՍԵՐԻՆԷ

- Alheinc R., *Organisation bancaire*, Բարիկ 1918  
 Alsace A., *d'Fondation et administration des sociétés  
 anonymes*, Բարիկ 1929  
 Bandran, *Un vrai bilan*, Բարիկ 1883  
 Batardon, *L'inventaire et le Bilan*, Բարիկ 1929  
 „ *Traité pratique des sociétés commerciales*, Բարիկ 1929  
 Courcelle-Seneuil J-G, *Les opérations de Banque*, Բարիկ 1929  
 Charpentier, *Traité des Bilans et inventaires*, Բարիկ 1924  
 Expinadel, *Pour bien administrer une société anonyme*,  
 Բարիկ 1926  
 Gersten C., *Lire un Bilan*, Բարիկ  
 Larousse *commercial*, Բարիկ 1930  
 Lejeune Ch., *Notions élémentaires de Banque*, Բարիկ  
 Leroy—Beaulieu P., *L'art de placer et gérer sa fortune*, Բարիկ  
 Nancey, *Comment va mon affaire?*, Բարիկ 1929  
 Reisu J., *Les fraudes en comptabilité*, (գերմաներէնէ) Բարիկ  
 1932  
 „ *Organisation de contrôle*, Բարիկ 1930  
 Quesnot L., *Administration financière*, Բարիկ 1930



## ՑԱՆԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	1
Ա. ՀԱՇՈՒԵԿՇՈՒՆ ԷՈՒԹԻՒՆԸ	
1.— Ընդհանուր գաղափար	4
2.— Կացուքեան կռիւն պատաստութիւնք	7
3.— Արդիւնքի կռիւն պատաստութիւնք	11
4.— Հաշուեկէռի տեսութիւնները	12
5.— Հաշուեկէռի թուականք	15
Բ. ԼՈՒԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ	
1.— Լուծելի հաշուեկէռները	17
2.— Հաշուեկէռով հետաքրքրուողները	18
3.— Լուծման նախապայմանները	20
4.— Ներքին եւ արտաքին լուծում	21
5.— Էնտրիքիք եւ տեսիլքիք դրութիւններ	23
Գ. ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	
1.— Համեմատական դրութիւնք	25
2.— Բաղդասական »	27
3.— Վիճակագրական »	27
4.— Համեմատան թիւերու դրութիւնք	28
5.— Կրաձիք դրութիւնք	29
Դ. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ	
1.— Առեւտրական ձեռնարկները	31
2.— Առեւտրական ձեռնարկներու կազմութեան երջանք	40
3.— Առեւտրական ձեռնարկները իբր օրկանգ	48

4.— Առեւտրական ձեռնարկի մը օրկանները	58
5.— Առեւտրական ձեռնարկի մը մեխանիզմը	64
6.— Տնտեսական կազմութեան ազդեցութիւնը	74
7.— Հաշուեյարդար	87
8.— Տկարացած ձեռնարկներու վերակենդանացումը	94
9.— Սնանկութիւն	100
10.— Զուլում	104

#### Ե. ԼՈՒԾՈՒՄԸ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՃԻՒՂԵՐՈՒՆ ՄԷՋ

1.— Ճիւղերու բաժանումը	106
2.— Վանառասանց հաշուեկէռի լուծումը	107
3.— Ճարտարարուեստական ձեռնարկներու հաշուեկէռներու լուծումը	134
4.— Դրամասանց հաշուեկէռի լուծումը	148
5.— Ապահովագրական ընկերութեանց հաշուեկէռի լուծումը	160
6.— Քօնցերներու հաշուեկէռի լուծումը	163

#### Զ. ԼՈՒԾՄԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ

1.— Հաշուեկէռի երբեմնի անկասարութիւնը	165
2.— Տեղեկագրութիւն	167
3.— Տնտեսական կազմութեան ուսումնասիրութիւնը	167



# Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տնտեսագիտութիւնը՝ որ ապրող մարդոց պէտքերուն գոհացման գիտութիւնն է, իր դանազան ճիւղերը ունի: Այս ճիւղերէն մէկն է քաղաքական տնտեսագիտութիւնը, որով զբօշի մը տակ հաւաքուող անհատներու տնտեսութիւնը կը ստանձնէ: Կայ անհատական տնտեսութիւնը, որով անհատները իրենց գոյութիւնը կ'ապահովեն: Կան նաեւ գիւղի մը, քաղաքի եւլն, տնտեսութիւնները: Ասանց կարգին է նաեւ առեւտրական ձեռնարկներու տնտեսութիւնը, որ **ՁԵՌՆԱՐԿԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ** կը կոչուի:

Այս բոլոր տնտեսութեանց ընդհատուր տնտեսագիտութեան հիմերն են որ ի զօրու կը նկատուին, որովհետեւ ամէնքն ալ ուղղակի կամ անուղղակի գործօն օռկաններն են համաշխարհային տնտեսութեան: Ուրեմն՝ ընդհանուր տնտեսագիտութեան հիմերուն վրայ հաստատուած է նաեւ ձեռնարկային տնտեսագիտութիւնը:

Ձեռնարկային տնտեսագիտութիւնը ըսելով պիտի հասկընանք առեւտրական ձեռնարկի մը ղեկավարումը: Այս առեւտրական ձեռնարկները, որոնք անհատակա-

նութեամբ (*individualisme*) կամ աւելի անձնասիրութեամբ (*égoïsme*) է որ իրենց գոյութիւնը կ'ապահովեն պիտի դիմանան մրցակցութեան, պիտի տոկան տաղնապներուն եւն.։ Այս պարագան զանոնք կը ստիպէ որ իրենց ձեռնարկներուն մէջ կիրարկեն ձեռնարկային անտեսագիտութեան կանոնները։ Այս կանոնները չեն փոխուիր ձեռնարկէ ձեռնարկ։ Փոքր խանութպանին ի զօրու եղող կանոնը ի զօրու է նաև միլիոնաւոր գրամագլուխով գործող անանուն ձեռնարկի մը համար։ Նոյնպէս Հայերու, Թուրքերու, Գերմանացիներու կամ Չինացիներու կողմէ հաստատուած առեւտրական ձեռնարկներու կանոնները, այսինքն ձեռնարկային անտեսագիտութիւնը տարբեր չէ նոյնն է։ Սակայն կազմերնին, կացութիւննին յաճախ իրարմէ տարբեր են։ Ասոնց պատճառը, ուրիշներու կարգին, կրնանք ըսել առաջ կուգան անհատներու խորհելակերպի, բնական հարստութեանց, ինչպէս նաև բնութեան աննախատեսելի ըլլալէն։ Այս պատճառաւ մէկուն ղեկավարման համար գործադրուած միջոցը միւսին հակառակ ազդեցութիւնը կ'ունենայ։ Որպէս զի ձեռնարկի մը լաւ ղեկավարութիւնը ապահովուի և ձեռնարկային անտեսագիտութեան կանոնները կիրարկուին, պէտք է ձեռնարկին կազմը և ապրելակերպը մեզի ծանօթ ըլլայ։

Անոնք գիտենք որ ապրող օսկաններ են, կըրնան գէշ կամ առողջ կազմ մը ունենալ կամ փոփոխակի կացութեան մը կրնան ծնունդ տուած ըլլալ։ Այս պարագան պարտադրած է այնպիսի փաստ մը նիշ մը գտնալ որով հետաքրքրուողը կարենայ ձեռ-

նարկին կեանքը գիտնալ և ապա անոր մէջ կիրարկէ կամ կիրակրուած անսնէ ձեռնարկային անտեսագիտութիւնը:

Ոչինչ աւելի լաւ պիտի կրնար մեզ ձեռնարկին կեանքը, ապրելակերպը պատկերացնել քան թէ ձեռնարկի մը հաշուեկշիռը: Այս պատճառաւ այսօր ամէն կողմ հաշուեկշիռն է որ իբր այս ընդունուած է: Սակայն շատ մը պարագաներու տակ հաշուեկշիռները շատ մակերեսային զազափար մը կուտան ամէն անոնց որոնք միայն անոր վրայի թուանշանները նկատի կ'առնեն: Այսպէսով սխալ զազափար մը կ'ունենան թէ ձեռնարկին կեանքին և թէ ձեռնարկին մէջ կերակրուող ձեռնարկային անտեսագիտութեան:

Այսպիսի սխալմունքէ մը զերծ մնալու համար պէտք ունինք ամէն մէկ հաշուեկշիռը լուծելու, ինչ որ ՀԱՇՈՒԵԿՇԻՌՆԵՐՈՒ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՆՍԳԻՏՈՒԹԻՒՆԸ կը կոչուի:

Գալով այն հարցին թէ՛ հաշուեկշիռներու լուծումը գիտութիւնն է թէ փորձառութեան վրայ հիմնուած զրութիւն մը, մենք անվարան պիտի ըսէինք գիտութիւն մը, որովհետեւ ան կարգ մը կանոններ ունի որոնցմէ շատը փորձառութեան անձանոթ են և որոնց ուրացումը աննպաստ հետեւանք կ'ունենայ:

Ան կը բաժնուի տոմարակալութենէն և հաշուակալութենէն իր կանոններու, ձգտումի և պարտականութեան տարբերութենէն:



ԳԼՈՒԽ Ա.

## ՀԱՇՈՒԵԿՇՈՒՆ ԷՈՒԹԻՒՆԸ

### Ի.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ

Հաշուեկշիռ ըսելով պիտի հասկնանք կարգ մը տուեալներ, որոնք պատկան ձեռնարկին կեանքը կը նկարագրեն: Կեանքին նկարագրութեան համար երկու բան հասկնալու պէտք էնինք. առաջին պատկան ձեռնարկին օրուան կացութիւնը և երկրորդ ձեռնարկին գործունէութեան արդիւնաբերութիւնը:

Ըստ կրկնատամարի գրութեան առնք կ'որոշուին ելքի կշիռին և շահ ու ֆեաստի հաշիւէն: Այս ճիշդ գաղափար մ'է, սակայն սա պէտք ենք ըսել թէ հաշուեկշիռը տոմարակալութեան մաս չի կազմեր: Տոմարակալը գործունէութեան շրջանին մէջ հաշիւները լաւ դասաւորելու, զանոնք ուղիղ արձանագրելու կ'աշխատ-

տի և փակման շրջանին ալ ամէն մէկ հաշիւին ուղիղ փոխանցմամբ կ'ըբաղի, այսպէսով ան ելքի կշռին և շահու Քլասսի հաշիւին վրայ բոլոր հաշիւները կ'ամփոփէ: Հոս տոմարակալին ընելիքը կ'անդ կ'առնէ, որովհետեւ տոմարներու հետ գործը լմնցած է:

Ասկէ վերջն է որ հաշուեկշիռ մը կը պատրաստուի, որպէս զի ձեռնարկին կեանքը պատկերացուի: Այս պատճառաւ ան ալ երկու մասի կը բաժնուի.

ա) Կացութեան կշիռ.

բ) Արդիւնքի կշիռ:

Կացութեան կշիռը ելքի կշռին շնորհիւ է որ կը պատրաստուի, սակայն ան անոր ընդօրինակութիւնը չի կրնար ըլլալ, որովհետեւ երկուքին պարտականութիւնները տարբեր են: Կացութեան կշիռը նախ այնպիսի բառերով կը բացատրուի, որ տոմարակալութեան մաս կազմած չըլլայ և թէ կրկնատոմարի վրայ զաղափար չունեցող մը իսկ զայն հասկնայ: «Ելքի կշիռը» փոխուած կ'ըլլայ «կացութեան կշիռ, այսինչ թուականին համար»: Այսպէսով թուականն ալ գրուած կ'ըլլայ: Ասկէ զատ անոր երկու կողմերը «պարտի» և «պահանջէ» չեն կոչուիր, որովհետեւ այդ երկու բառերը կրկնատոմարի հաշիւներուն յատուկ են քանի որ կրկնատոմարը հաշիւները անհատականացնելու սկզբունքը ունի, և միջադրային երկու բառերը կը գործածենք աքթիֆ և բասիֆ: Հաշիւներու անուններու տեղ կացութիւն մը կը ցուցուի. օրինակի համար չըտուիք սնտուկի հաշիւ այլ պատրաստ դրս մ և լն.:

Ատոնցմէ զատ կացութեան կշիռը ելքի կշռին վրայի շատ մը բաները կը փոխէ որպէս զի տեղի լաւ պատկեր մը դառնայ:

Հաշուեկառնի մաս կազմող արդիւնքի կշիռն ալ նոյն փոփոխութեանց կ'ենթարկուի որպէս զի աւելի լաւ արդիւնքին տեղեկացուի: Օրինակ, չըսուիր շահու և վնասի հաշիւ և վարը թուականն այլ «այսինչ տարուոյ արդիւնքը»: Չըսուիր սոկոսի հաշիւ այլ վճարուած սոկոսներ: Նոյնպէս հոս ալ «պարտի» և «պահանջէ» բառերը «վնասներ» և «շահներ» կը կոչուին:

Գալով այն գաղափարին թէ հաշուեկառնը հոմանիշ է ելքի կշիռն, այս բոլորովին սխալ է: Նոյնպէս սխալ է հաշուեկառնը սոմարակալութեան մաս կազմել տալ և կացութեան կշիռը ելքի կշիռն և արդիւնքի կշիռն ալ շահու և վնասի հաշիւին ընդօրինակութիւնները ենթադրել:

Այսպիսի ճշգրտւմ մը ամէն լեզուի մէջ կ'ըլլայ, երբ նման մասնագիտական դիրք մը հրատարակուի: Ֆրանսացիք հաշուեկառնը *bilan* կը կոչեն որ կը բաժնեն երկուքի. «*situation*» և «*resulta*», որոնք կը գանազանուին կրկնատոմարի «*balance de sortie*» և «*pertes et profits*» հաշիւներէն:

Մեր 1 քիւ ֆորմիւլիկն վրայ Բ.ք ելքի կշիռ մը եւ Գ.ք շահ ու վնասի հաշիւ մ'ե, որոնք հաշուեկառնի մը վերածուած են Գ. եւ Ե.ի վրան: Հոս միայն արտաքին ձեւը փոխած ենք, զայն հասկնալի դարձնելու համար: Տակաւին ներքին մասերուն մեջ ալ փոփոխութիւններն ելու կը ստիպուինք շահ մը պարագաներու սակ: Օրինակ, պարտականները 10,134 ըսելով գոհացած ենք, կրնայ ըլլալ որ պարտականները բաժնենք: Ասկէ զաւել, կրնանք քանի մը հաշիւներ իրար միացնել, օրինակ դրամասունները եւ պարտաս դրամը, որովհետեւ սովորական պարագաներու սակ երկուքն ալ նոյն նշանա-

կուրծիւնն ունին: Սակայն, այս օրինակը այսպէս պարզ ձգելու կարելորութիւնը զանոնք զանց առնել տուած է:

Հաշուեկշռին պատրաստութեան համար ելքի կշիռը և շահ ու վնասի հաշիւը կրնան իբր հիմ ծառայել, սակայն եթէ հնարաւոր ըլլայ ՓԱԿՄԱՆ ՅՈՒՅԱԿ մը ունենալ և ան իբր հիմ բռնել, այդ աւելի լաւ կ'ըլլայ, որովհետև անոր վրայի զանազան մասերը շատ մը պարագաներու մէջ մեծ օգտակարութիւն կ'ունենան լուծման համար, որուն վերջը պիտի անդրադառնանք:

Մեր 1 քիւ Ֆօրմիւլին ա.ը վիակման ցուցակ մըն է, որ իբր հիմ ծառայած է նաեւ հաշուեկշիռին շինութեան երբեք կրկնատմարի հաշիւները նկատի չառնենք:

## 2.- ԿԱՅՈՒԹԵԱՆ ԿՇՈՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Հաշուեկշռին երկու մասերը եղող կացութեան և արդիւնքի կշիռներուն պատրաստութեան համար վիակման ցուցակը իբր հիմ օգտագործել միշտ լաւ կ'ըլլայ, սակայն անոր պակասը երկնատմարի ելքի կշիռը և շահ ու վնասի հաշիւը կը լրացնեն:

Կացութեան կշիռը, որ ձեռնարկի մը օրուան կացութիւնը պատկերացնելու նպատակը ունի:

Երկու կողմ կ'ունենայ.— ԱֆրիՅ և բասիՅ: Աքթիֆը կը ներկայացնէ ձեռնարկին ստացուածքները

(գոյք, պահանջք ևլն), բասիֆն ալ զրամագլուխները (սեփական և օտարներու զրամները):

Այս երկու կողմերուն ալ պատրաստութիւնը երեք մասի կը բաժնուի, որոնք են՝

ա) **ՏԱՐՐԱՆՈՒԾՈՒՄ**, որով կը հասկնանք կարգ մը հաշիւներու մասերու բաժանումը: Օրինակ. եթէ պարտականներ կարդանք կ'ուզենք գիտնալ թէ ասոնց որքանը զանձելի մուրհակներ տուած են և որքանը առանց մուրհակի են: Այս եթէ կարելի ըլլայ շատ մը պարագաներու մէջ մեծ օգտակարութիւն կրնայ ունենալ:

բ) **ՄԻԱՑՈՒՄ**, որով կը հասկնանք կարգ մը հաշիւներու միացումը որոնք նոյն նպատակը ունին: Օրինակ. եթէ երկու տեսակ ապրանքի հաշիւ մը ունինք, զանոնք կը միացնենք՝ եթէ նոյն նպատակը ունին: Հաշուեկշիռ լուծողը չի հետաքրքրուիր թէ ամէն մէկ ապրանքէն որքան ունի, այլ իր ապրանքի մթերքի քանակութեամբն է որ աւելի կը հետաքրքրուի: Կամ շատ մը պարագաներու տակ ալ պատրաստ զրամը և ապահով պահանջք եղող զրամատուներէ պահանջքը կրնանք միացնել:

գ) **ԽՈՒՄԲԵՐՈՒ ԲԱԺՆԵՆ և քթիֆ և բասիֆը:**

Խումբերու բաժանման մէջ արթիֆի վրայ երեք խումբեր կ'ուսենանք.

Կապուած ստացուածք:

Շրջող ստացուածք:

Ազատ ստացուածք:

Բասիֆն ալ երեք խումբ ունի.

Սեփական զրամագլուխ:

Օտար երկար պայմանաժամով զրամագլուխ:

Օտար կարճ պայմանաժամով զրամագլուխ:

ԿԱՊՈՒԱԾ ՍՏԱՅՈՒԱԾՔԻ խումբին մաս պէտք են կազմել՝ ձեռնարկի մը այն բոլոր ստացուածքները որոնք վաճառելի չեն: Այն է որ շատ մեծ փաստերով վաճառել կարելի կ'ըլլայ կամ թէ անոնց վաճառումը ձեռնարկին գործունէութիւնը կը դադրեցնէ և կամ թէ վաճառումը բնաւ կարելի չէ: Օրինակ, ձեռնարկ մը իր սեփական վաճառատունը երբ ծախած է իր յաճախորդներէն մեծ մասը կը կորսնցնէ: Նոյնպէս երկաթուղիի ընկերութեան մը համար իր կայարանները երկաթուղիի կազմածները և ինչ վաճառել կարելի չէ:

ՇՐՋՈՂ ՍՏԱՅՈՒԱԾՔԸ ատոր փոխարէն այն մասն է որ գտնալու պարտականութիւնը ունի, որպէս զի ձեռնարկը շահաւոր ըլլայ: Օրինակ. ապրանք մը չրջող ստացուածքին մաս կը կազմէ որովհետեւ ան դարձեալ դրամ պիտի ըլլայ և դարձեալ ապրանք: Նոյնպէս պարտականները որովհետեւ անոնք վաճառումէն առաջ կուգան և դարձեալ դրամ կամ ապրանք պիտի ըլլան:

ԱԶԱՏ ՍՏԱՅՈՒԱԾՔԸ այն մասն է որ ձեռնարկը իր գործառնութեան առանց մաս կազմել տալու կ'օգտագործէ: Օրինակ, ձեռնարկ մը կալուած, արժեթուղթ և ինչ կ'ունենայ, ըլլայ հասոյթ մը ապահովելու համար, ըլլայ ապագայ պահանջի մը առջեւ դրամի վերածելու համար:

Յաճախ այդ երեք ստացուածքները իրարմէ զանազանել դժուար կ'ըլլայ, սակայն երբ իրենց պարտականութիւնը որոշուին գործը կը դիւրանայ: Օրինակ, արժեթուղթ մը կրնայ կապուած, չրջող կամ ազատ ստացուածք ըլլալ: Այս շատ դիւրին է: Եթէ արժեթուղթը ձեռնարկը միշտ իր քով պահելու համար գնած է, որուն նպատակը վաճառում չէ, այս կապ-

ուած ստացուածք մ'է: Երբ արժեթուղթ մը կը գնուի շահադիտական նպատակաւ, սպառաչին վաճառման համար, այս շրջող ստացուածք մ'է, և երբ արժեթուղթ մը կը գնուի անգործածելի ստացուածքը շահաբեր դարձնելու համար, այդ ազատ ստացուածք մ'է:

Նոյնպէս կապուած ստացուածքը պէտք չէ շփոթել անշարժ ինչքերու հետ, որոնք կրնան նաև ազատ ստացուածքին մաս կազմել:

Դրամագլուխի կազմի վրայ գանուող առաջին մասը եղող ՍԵՓԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՆ մաս կը կազմեն այն բոլորը որ ձեռնարկին գրամագլուխը կը կազմեն. նախկին գրամագլուխ, պահեստ (եթէ անանուն ընկերութիւն մըն է) և շահ:

ՕՏՍՐ ԵՐԿԱՐ ՊԱՅՄԱՆԱԺԱՄՈՎ, ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ մասին մէջ կը գանուին օտարներու այն պահանջները որոնք անմիջապէս ետ պահանջուելու հաւանականութիւն չունին:

ՕՏՍՐ ԿՍՐՃ ՊԱՅՄԱՆԱԺԱՄՈՎ, ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ կը պարունակէ այն օտար պահանջները որոնք կարճ միջոցէ մը վերջը ետ պիտի պահանջուին: Օրինակ պարտամուրհակները:

Մեր 1 քիւ ֆօրմիւլին վրայ ելող Գ. կացութեան կէիւր նման խմբաւորում մը ի յայտ կը բերէ, սակայն վերջին երկու խումբերը չի բաժնէր:

Ասոնցմէ զատ, մնասի մը պարագային հաշուեկշռին վրայ, փոխանակ անմիջապէս գրամագլուխէն իջեցնելու, զայն մաս կազմել կը արուի աքթիֆի կողմին: Նոյնպէս առժամաբար աքթիֆի մաս կը կազմեն գրամագլուխի այլ նուազուրդները: Օրինակ, անհատական ձեռնարկի տէրերուն քաշած գրամը անձնական

ծախքերու համար և անանուն ընկերութեանց ալ ետ վճարած դրամագլուխները:

Մեր քիւ 2 Ֆօրմիւլի Ա. կացութեան կէիւր, որ անանուն ընկերութեան մը կը պատկանի, կը ցուցնէ քէ ինչպէս իր վնասուած դրամագլուխը եւ վնասը աքթիֆին մաս կը կազմեն, եւ Բ. քիւ կացութեան կէիւրն ալ մեզ կը ցուցնէ քէ ձեռնարկի մը տիրոջ անձնական (սան) ծախքերը աքթիֆի մաս կազմած են:

Դրամագլուխի նուազումները դուրս մնայով աքթիֆը և բասիֆը երեք մասի կը բաժնենք: Սակայն ամէն ձեռնարկի անպատճառ երկու կողմն ալ երեք խումբ ունենալ ստիպողական չէ: Օրինակ. երբ ձեռնարկ մը սկզբունքի պատճառաւ բնաւ պարտքով չի գործեր, ոչ երկար ոչ ալ կարճ պայմանաժամով դրամագլուխ մը չունենար: Կամ եթէ երկար պայմանաժամով պարտք չընէր միայն մէկ տեսակ օտար դրամագլուխ մը կ'ունենայ: Այնպէս է նաեւ աքթիֆին համար. ձեռնարկ մը կրնայ ըլլալ որ կապուած ստացուածք չունենայ կամ թէ ազատ ստացուածք չունենայ:

Մեր 2 քիւ Ֆօրմիւլին Ա. կացութեան կէիւր ազատ ստացուածք մը չունի:

### 3.- ԱՐԴԻՒՆՔ ԿՇՈՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Արդիւնքի կշիւը փակման ցուցակի չգոյութեան պարտագային, շահ ու վնասի հաշիւին օգնութեամբ



կ'ըլլայ: Հաշուեկոչին մէջ անոր պարտականութիւնն է ձեռնարկին գործունէութեան արդիւնքը պատկերացընել: Հոս տարրալուծման և միացման կանոնները կացութեան կոչին վրայ եղածին պէս հարկաւոր են: Օրինակ, եթէ ընդհանուր ծախքերու մէջ մասնակի ծախքեր գանուին, գանոնք կրնանք բաժնել և եթէ նոյնիմաստ ծախքեր կան կրնան հաւաքուիլ: Օրինակ, վառելանիւթ և ելեքարական վարձք:

Գալով խումբերու բաժանման, մէկ գլխաւոր խումբ մը կայ, այն ալ գործունէութեան ծախքերու և հասոյթներու խումբն է: Այս խումբը ծախքի կողմը բոլոր ձեռնարկին գործունէութեան ծախքերը կը ցուցնէ և շահերու կողմէն ալ այդ ծախքերու չնորձիւ եղող հասոյթները, որպէս զի կարողանանք տեսնել թէ ծախքերը շահարկ եղած են թէ ոչ:

Առկէ զատ կայ նաև ազատ ստացուածքի շահարկութեան խումբը: Ինչպէս նաև արտակարգ ծախքերու և արտակարգ շահերու խումբը, որոնք մասնաւոր դասաւորման կանոն մը չունին:

Մեր 1 քիւ Ֆորմիւլի վրայ Ե. արդիւնքի կեօնը նման դասաւորում մը ունի:

#### 4.- ՀԱՇՈՒԵԿՈՇՈՒ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հաշուեկոչի մասնագիտութեան պատկանող բոլոր եղինակներու գործերուն մէջ հաշուեկոչիւրը երկու մաս

սի կը բաժնուի, որովհետեւ երկու բան մեզ կը հետաքրքրէ, կացութիւնը և արդիւնաբերութիւնը: Բոլոր հեղինակները կ'ընդունին թէ՛ կացութեան կշիռը կացութիւնը և արդիւնքի կշիռն ալ արդիւնաբերութիւնը կ'որոշեն: Սակայն շատ մը բաներու մէջ իրարու համամիտ չեն: Այս տեսութիւնները երեք խումբի կը բաժնուի, որոնք ստորև կը գտնենք.

Ա.) ՏԻՆԱՄԻՔ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ որ հիմնուած է միայն ձեռնարկին միջոցներով եղած արդիւնաբերութեան վրայ: Քանի որ կ'ըսէ՝ առեւտրական ձեռնարկի նպատակը գործել և շահիլ է, իր պարտականութիւնը և նպատակը լրացուցած ըլլալը իր արդիւնաբերութիւնն է որ կ'որոշէ: Ուրեմն այս արդիւնաբերութիւնը այնպէս մը ի յայտ գալու է որ ձեռնարկին զեկաւարումը յայտնէ:

Այն բոլոր շահերը որոնք ձեռնարկը իր միջոցներով ըրած չէ՝ անոնք շահ չեն նկատուիր: Օրինակ. եթէ ձեռնարկ մը իր ձեռքը ապրանք ունենայ և եթէ այդ ապրանքը հաշուեկշռին ժամանակ արժէքի բարձրացում մը ունեցած ըլլայ, այդ բարձրացումը շահ չի նկատիր, քանի որ վաճառում մը չէ եղած: Արդիւնքի կշիռը, կ'ըսէ զրութիւնը, այնպէս մը շինուելու է որան միայն վճարած զրամներուն միջոցաւ իրականացուած շահերը ի յայտ բերէ:

Սակայն զրութիւնը նկատի առնելով թէ՛ այս պարագան ապրանքներու նուազ արժողութիւնը մեաս չի սեպելով շատ մը պարագաներու տակ շահ մը կ'երևուայ, և որուն ձեռնարկէն իբր շահ քաշուիլը կը վատազարայնէ ձեռնարկին կացութիւնը, անոր համար տեսութիւնը կը յանձնարարէ զրամ քաշուելու (շահի

կ'ըլլայ: Հաշուեկէտին մէջ անոր պարտականութիւնն է ձեռնարկին գործունէութեան արդիւնքը պատկերացընել: Հոս տարրալուծման և միացման կանոնները կացութեան կէտին վրայ եղածին պէս հարկաւոր են: Օրինակ, եթէ ընդհանուր ծախքերու մէջ մասնակի ծախքեր գանուին, զանոնք կրնանք բաժնել և եթէ նոյնիմաստ ծախքեր կան կրնան հաւաքուիլ: Օրինակ, վառելանիւթ և ելեքտրական վարձք:

Գալով խումբերու բաժանման, մէկ գլխաւոր խումբ մը կայ, այն ալ գործունէութեան ծախքերու և հասոյթներու խումբն է: Այս խումբը ծախքի կողմը բոլոր ձեռնարկին գործունէութեան ծախքերը կը ցուցնէ և չափերու կողմէն ալ այդ ծախքերու շնորհիւ եւ զող հասոյթները, որպէս զի կարողանանք տեսնել թէ ծախքերը շահաբեր եղած են թէ ոչ:

Առկէ դատ կայ նաեւ ազատ ստացուածքի շահաբերութեան խումբը: Ինչպէս նաեւ արտակարգ ծախքերու և արտակարգ չափերու խումբը, որոնք մասնաւոր դասաւորման կանոն մը չունին:

Մեր 1 քիւ ֆորմիւլի վրայ Ե. սողիւնի կեիւր նման դասաւորում մը ունի:

#### 4.- ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ՏԵՍՈՒՅԻՒՆՆԵՐԸ

Հաշուեկէտի մասնագիտութեան պատկանող բոլոր եզրինակներու գործերուն մէջ հաշուեկէտը երկու մա-

սի կը բաժնուի, որովհետեւ երկու բան մեզ կը հետաքրքրէ, կացութիւնը և արդիւնաբերութիւնը: Բոլոր հեղինակները կ'ընդունին թէ՛ կացութեան կշիռը կացութիւնը և արդիւնքի կշիռն ալ արդիւնաբերութիւնը կ'որոշեն: Սակայն շատ մը բաներու մէջ իրարու համամիտ չեն: Այս տեսութիւնները երեք խումբի կը բաժնուի, որոնք ստորեւ կը գտնենք.

Ա.) ՏԻՆԱՄԻՅ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ որ հիմնուած է միայն ձեռնարկին միջոցներով եղած արդիւնաբերութեան վրայ: Քանի որ կ'ըսէ՝ առեւտրական ձեռնարկի նպատակը գործել և շահիլ է, իր պարտականութիւնը և նպատակը լրացուցած ըլլալը իր արդիւնաբերութիւնն է որ կ'որոշէ: Ուրեմն այս արդիւնաբերութիւնը այնպէս մը ի յայտ գալու է որ ձեռնարկին ղեկավարումը յայտնէ:

Այն բոլոր շահերը որոնք ձեռնարկը իր միջոցներով ըրած չէ՝ անոնք շահ չեն նկատուիր: Օրինակ եթէ ձեռնարկ մը իր ձեռքը ապրանք ունենայ և եթէ այդ ապրանքը հաշուեկշռին ժամանակ արժէքի բարձրացում մը ունեցած ըլլայ, այդ բարձրացումը շահ չի նկատեր, քանի որ վաճառում մը չէ եղած: Արդիւնքի կշիռը, կ'ըսէ զրութիւնը, այնպէս մը շինուելու է որ ան միայն վճարած զրամներուն միջոցաւ իրականացուած շահերը ի յայտ բերէ:

Սակայն զրութիւնը նկատի առնելով թէ՛ այս պարագան ապրանքներու նուազ արժողութիւնը փաստ չի սեպելով շատ մը պարագաներու տակ շահ մը կ'երեւայ, և որուն ձեռնարկէն իբր շահ քաշուիլը կը վատ-զարացնէ ձեռնարկին կացութիւնը, անոր համար տեսութիւնը կը յանձնարարէ զրամ քաշուելու (շահի

բաշխման) միջոցին ձեռնարկին կացութիւնը չլատթա-  
րացնելու պարագան նկատի առնել:

Բ.) ՄԹԱԹԻՔ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ: Այս ալ հիմնուած է  
այն սկզբունքի վրայ թէ ասեւարական ձեռնարկի մը  
նպատակը չա՛ն է, սակայն շահերը ոչ միայն ձեռնարկին  
գործելակերպէն այլ նաև արտաքին ազդակներէ  
ալ առաջ կուզան: Օրինակի համար ձեռնարկ մը նը-  
պատակ ունի ապրանք ծախել և շահիլ: Այս շահ մը  
կ'աւրանովէ: Ասկէ զատ եթէ չծախուած ապրանքները  
բարձրացում մը ունենան, այդ բարձրացումը ինչպէս  
միւսը շահ մըն է: Այս վերջինը ինչպէս որ ըսինք,  
կ'անտեսէ արնամիք տեսութիւնը: Նոյնպէս վնասներն  
ալ կ'ըսէ արտաքին պարագաներէ կ'ստեղծուին: Օրի-  
նակ, եթէ ապրանքները անկում մը կրեն հրապարա-  
կին վրայ ձեռնարկին ապրանքի մթերքին արժէքն  
ալ նուազած կ'ըլլայ, ինչ որ վնաս է:

Գ.) Վերջապէս կուզայ ՕՐԿԱՆԻՔ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ,  
որ երկուքին միջինն է: Ան կ'ընդունի թէ ձեռնարկի  
մը արդիւնաբերութիւնը իր ներքին ղեկավարումէն  
դատելու է: Սակայն միանգամայն ալ կ'ըսէ թէ՛ եթէ  
ձեռնարկ մը արտաքին պատճառներով շահի կամ վը-  
նասէ այն ալ նկատի առնել պէտք է:

Անոր համար ան շահերը և վնասները երկու մասի  
կը բաժնէ. ՕՐԿԱՆԻՔ շահեր և ՊԱՏԱՀԱՅԱՆՈՒԹԵԱՆ  
(conjoncturel) շահերը:

Որով այն շահերը որոնք ներքին ղեկավարումէն  
(առուծարէն) առաջ եկած են, ասոնք օրկանիք շահեր  
կը կոչէ, և անոնք որոնք արտաքին՝ ձեռնարկին մի-  
ջոցներէն դուրս, դանուող տարրերէն առաջ եկած են  
ասոնք ալ պատահականութեան շահեր կը կոչէ: Այս-

պէսով կացութեան կշիռը օրուան արժէքով ընել կը յանձնարարէ, սակայն ստոր առաջ բերած շահերը կամ վնասները ձեռնարկին գործունէութենէն առաջ եկող շահերէն կամ վնասներէն կը բաժնէ արդիւնքի կշիռն վրայ:

Այս առաւթիւններէն որը նարատակայարմար ըլլալը ձեռնարկ մը ինք է որ պիտի որոշէ էնվանթերի մը շինութեան ժամանակ:

## 5.- ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԹՈՒԱԿԱՆԸ

Հաշուեկշիռը ըսինք որ կրկնատոմարի հաշիւներու մէջ պէս գործողութեան օրուան թուականը չունենար:

Եւրի կշիռը կամ շահ ու վնասի հաշիւները փոխանցման թուականը կ'ունենան: Ենթադրենք թէ փակման թուականը 31 դեկտ. է, այս թուականը կը դրուի թուականի սիւնակին մէջ: Սակայն հաշուեկշիռը փոխանցումի թուականը չէ որ կ'արձանագրէ այլ այն թուականը որուն կացութիւնը և արդիւնքը կը պատկերացնէ: Ստոր համար ան կը կոչուի «այսինչ թուականի կացութիւնը» և «այսինչ տարուոյ արդիւնքը»: Որովհետեւ հաշուեկշիռին կրկնատոմարի հաշիւներու փակման կամ փոխանցման օրը ըլլալը կարելի չէ:

Սակայն ո՞ր թուականին համար պատրաստուելիքը մեծ կարեւորութիւն մը ունի տոմարակալին համար: Որովհետեւ այն թուականին համար որ պիտի պատրաստ-

պէսով կացութեան կշիռը օրուան արժէքով ընել կը յանձնարարէ, սակայն ստոր առաջ բերած շահերը կամ փնասները ձեռնարկին գործունէութենէն առաջ եկող շահերէն կամ փնասներէն կը բաժնէ արդիւնքի կշիռն վրայ:

Այս անտւթիւններէն որը նպատակայարմար ըլլալը ձեռնարկ մը ինք է որ պիտի որոշէ էնվանթէրի մը շինութեան ժամանակ:

## 5.- ՀԱՇՈՒԵԿՇՈՒԻ ԹՈՒԱԿԱՆԸ

Հաշուեկշիռը ըսինք որ կրկնատոմարի հաշիւներուն պէս գործողութեան օրուան թուականը չունենար:

Եւքի կշիռը կամ շահ ու փնասի հաշիւները փոխանցման թուականը կ'ունենան: Ենթադրենք թէ փակման թուականը Յ1 դեկտ. է, այս թուականը կը դրուի թուականի սիւնակին մէջ: Սակայն հաշուեկշիռը փոխանցումի թուականը չէ որ կ'արձանագրէ այլ այն թուականը որուն կացութիւնը և արդիւնքը կը պատկերացնէ: Ստոր համար ան կը կոչուի «այսինչ թուականի կացութիւնը» և «այսինչ տարուոյ արդիւնքը»: Որովհետեւ հաշուեկշիռին կրկնատոմարի հաշիւներու փակման կամ փոխանցման օրը ըլլալը կարելի չէ:

Սակայն ո՞ր թուականին համար պատրաստուելիքը մեծ կարեւորութիւն մը ունի տոմարակալին համար: Որովհետեւ այն թուականին համար որ պիտի պատրաստ-

տուի այդ օրը պէտք է որ հաշիւները փակուին էն-  
փանթէրի մը շինութեամբ:

Չորս տեսակ հաշուեկշիւի թուական կրնայ ըլլալ:

ա) Հաշիւներու փակման և հաշուեկշիւի թուա-  
կանը կրնայ ձեռնարկի մը հիմնարկութեան տարեդարձը  
ըլլալ:

բ) կրնայ ձեռնարկին ամէնէն շատ ընդլայնուած,  
ոգեւորուած և զանազան ընտրուիլ, որպէս զի գործու-  
նէութեան մէջ և զող շրջանը տեսնուի:

գ) կրնայ մեռել (*saison morte*) և զանազան ընտ-  
րուիլ, որպէս զի գործունէութիւնը լինցած ըլլայ, կա-  
ցութիւնը և արդիւնքը աւելի որոշ ըլլան:

դ) Եւ սակայն ամէնէն աւելի ընդունուած թուա-  
կանը տարւոյն վերջը՝ Յ1 դեկտեմբերն է: Այսպէսով  
կարելի կ'ըլլայ բոլոր ձեռնարկները իրար բախտատել,  
որովհետեւ ամէնքն ալ նոյն շրջանը անցուցած կ'ըլլան:  
Այս պարագան շատ մը երկիրներ նկատի առնելով ի-  
րենց օրէնքներով կը պարտադրեն որ հաշուեկշիւը  
Յ1 դեկտեմբերին համար պատրաստուի և որոշ առին  
մը վերջը ներկայացուի:



ԳԼՈՒԽ Բ.

## ԼՈՒԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ

---

### 1.- ԼՈՒԾԵԼԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՌՆԵՐԸ

Այսօր չկայ ձեռնարկ մը որ հաշուեկշիռ մը ունենալ չուզէ և չպատրաստէ: Հետեւաբար կրնանք ըսել թէ ամէն ձեռնարկ իր հաշուեկշիռը ունի: Սակայն, այս բոլորին հաշուեկշիռները մեզ ներկայանալու ստիպողականութեան տակ չեն: Այսպէս ըլլալով բնականէն լուծումը կ'ըլլայ միայն լուծողներուն ձեռքը հասնող հաշուեկշիռներուն վրայ:

Լուծողներու ձեռքը հասնող վեց տեսակ հաշուեկշիռներ կան: Ասոնք հետեւեալներն են.

ա) Անանուն ընկերութիւններունը կամ առհասարակ

րակ այն բոլոր ձեռնարկներունը որոնք պարբերաբար հաշուեկշիռներն հանրութեան ներկայացնելու ստիպողականութեան տակ են (մամուլին կամ այլ միջոցներով):

բ) Այն հաշուեկշիռները որոնք հանրութեան ներկայացուցելու ստիպողականութեան տակ չի գտնուելով հանդերձ, վստահութիւն ներշնչելու համար կը հրատարակեն:

գ) Այն հաշուեկշիռները որոնք հանրութեան ներկայանալու ստիպողական չեն սակայն շահատուրքի և ինչի համար ելմտական պաշտօնատան մը կը ներկայացուի:

դ) Այն հաշուեկշիռները որոնք արտակարգ պարագաներու տակ կը պատրաստուին: Օրինակ, սնանկութիւն, ձեռնարկներու միացում, հաշուեյարգար և ինչ:

ե) Կարգ մը պարագաներու տակ պահանջուած և ստացուած հաշուեկշիռներ: Օրինակ, երբ մեծ փոխառութիւն մը կնքուելիք կ'ըլլայ, փոխատուն հաշուեկշիռ մը կը պահանջէ տեսնելու համար թէ իր վճարելիք զրամը ինչի՞ պիտի յատկացուի: Նոյնպէս երբ մէկը ընկերութեան մը անգամակցիլ կ'ուզէ՝ հաշուեկշիռ մը կը պահանջէ:

զ) Առեւտրականի մը իր իսկ ձեռնարկին հաշուեկշիռը, որ ամէնէն շատ կը հետաքրքրէ զինքը և որուն լուծումը շատ մեծ տեղ գրաւած է:

Ասոնք ամէնքն ալ տարբեր դասակարգի լուծողներու ձեռքը կը հասնին:

## 2.- ՀԱՇՈՒԵԿՇՈՒՎ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՈՂՆԵՐԸ

Վերը ըսուած հաշուեկշիռները իրենց զանազան

տեսակներով հետաքրքրուողները ունին, որոնց յենակէտերը իրարմէ շատ տարբեր ըլլալով ստորեւ կը զանազանենք.—

ա) Առեւտրական ՉեմօնԱրկի ՄԸ ՎԱՐԻՉԸ (անհատական ձեռնարկի մը տէրը կամ անանուն ընկերութեան մը անօրէնը) որպէս զի կարենայ տեսնել թէ իր քայլերը զէպի ո՛ւր կ'ընթանան, ի՞նչ ուղղութիւն ունենալու են:

բ) ՈՉ ՎԱՐԻՉ ԲԱԺՆԵՏԷՐԵՐԸ (սփոսներ և ֆամասիքեր)․ ասոնք որքան ալ վարչութեան մէջ գործօն դեր մը չունին, հաշուեկշտով կը հետաքրքրուին, իրենց ձեռնարկին մէջ ունեցած զրամագլուխնուն գործածութիւնը տեսնելու համար:

գ) ՊԱՐՏԱՏԷՐԵՐՆ ԵՒ ԱԵԺ շահ մը ունին իրենց պարտական ձեռնարկին հաշուեկշիռը լուծելու մէջ:

դ) ՄՐՑԱԿԻՑ ՉեմօնԱրկներԸ, որոնք օգտուիլ կ'ուզեն ուրիշ ձեռնարկի մը փորձառութենէն և թէ միանգամայն ալ անոր մրցակցութեան կարողութիւնը գիտնալ կ'ուզեն:

ե) ՊԵՏՈՒԹԵԱՆ հետաքրքրութիւնը երեք տեսակի կրնայինք բաժնել: Առաջին՝ ելմտական տեսակէտով պիտօճէն հաւասարակշռելու և համադաստասխան տուրք գանձելու համար: Երկրորդ՝ անտեղական պատճառաւ կը հետաքրքրուի որպէս զի լաւ մը ըմբռնէ ներքին ձեռնարկներու գործառնութիւնը և անոր հաշտ անտեսական քաղաքականութեան մը հետեւի: Երրորդ՝ պիտական զրամատունը: Այս ալ կը հետաքրքրուի իր շրջաբերութեան հանած թղթագրամները ի՞նչպէս օգտագործուիլը տեսնելու համար:

դ) Տնտեսական մամուլը, որ ստանձնած է իր ընթերցողներուն տնտեսական տեղեկութիւններ տալու պարտականութիւնը:

է) Ելմտական և տնտեսական մասնագէտները, որոնք փորձառութիւն չափի կ'ուզեն, սպաղաջին օգտագործելու համար զանազան առիթներով:

### 3.- ԼՈՒԾՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հաշուեկշիռ մը կատարեալ լուծելու համար շատ մը նախապայմաններ ունի, որոնք վեց մասի մէջ կրնանք խտացնել.

ա) Ծանօթ պէտք է ըլլուի պատկան ձեռնարկին հաշուակալութեան և հաշուեկշիռներու պատրաստութեան սկզբունքներուն, որպէս զի կարելի ըլլայ զանազանմասերու նշանակութիւնը հասկնալ:

բ) Պէտք է տեղեակ ըլլալ տնտեսական հրապարակին և մասնաւորաբար ձեռնարկին պատկան ճիւղին:

գ) Պէտք է գիտնալ թէ ձեռնարկը իր առած քայլերը գիտակցաբար կ'առնէ թէ պարզապէս բախտին ձգուած է անոր ղեկավարումը: Այսպէսով կը հասկնանք թէ ձեռնարկային տնտեսագիտութիւնը ի՞նչ աստիճան կիրարկուած է: Նոյնպէս պէտք է գիտնալ թէ ի՞նչ է անոր ձեռնարկային տնտեսագիտութեան ուղղութիւնը:

դ) Օրինական տրամադրութիւններուն ալ ծանօթ

ըլլալ հարկաւոր է, որովհետեւ օրէնքը շատ անգամներ որոշ ձեւով հաշուեկշիռ պատրաստել կը պարտադրէ:

ե) Շատ մը պարագաներու տակ մայր սոմարէն կամ օժանդակ հաշիւներէն լրացուցիչ մասեր քաղելու պէտք կայ:

զ) Վերջապէս պէտք է գիտնալ թէ հաշուեկշիռը ի՞նչ աստիճան անկեղծութեամբ մը պատրաստուած է:

Ասոնք նախապայմաններն են հաշուեկշիռը լաւ մը լուծելու համար: Ասոնք գիտնալ շատերու համար գիւրբին և շատերու համար ալ դժուար պիտի ըլլար: Այս նախապայմաններուն տեղեակ ըլլալու համար յաճախ պիտի խօսինք:

#### 4.- ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերը ըսինք թէ եօթը տեսակ հաշուեկշիռով հետաքրքրուողներ կան: Ասոնց ամէնուն ալ նպատակը նոյնն է. պատկան ձեռնարկին վրայ ճշգրիտ տեղեկութիւն մը ունենալ: Սակայն, այս կարելիութիւնը շատերու համար կատարելապէս գոյութիւն ունի և ուրիշներու համար միայն որոշ սահմանի մը մէջ կարելի կ'ըլլայ: Լուծումը, որ շատ մը դժուարութեանց յաղթահարումը կը պահանջէ, երկու տեսակ կ'ըլլայ.

ա) Ներքին լուծում:

բ) Արտաքին լուծում:

Ամէն անոնք որոնք ձեռնարկին բոլոր գաղտնիքներուն, գործելակերպին, հաշուակալութեան, ձեռնարկային անտեսագիտութեան և շն. տեղեակ են, այսինքն բոլոր այն նախապայմանները որոնք միայն ձեռնարկի մը մէջ գտնուողը կրնայ լրացնել, ընելիք լուծումներն ՆԵՐՔԻՆ ԼՈՒԾՈՒՄ կը կոչուի:

Ասոր փոխարէն կայ ԱՐՏԱՒԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ: Այս կ'ըլլայ ամէն անոնց կողմէ որոնք որոշ չափով մը միայն նախապայմանները լրացնելու կարելիութիւնը կ'ունենան:

Ձեռնարկի մը վարիչը ներքին լուծում մը կ'ընէ որովհետեւ ան տեղեակ է արդէն ձեռնարկին բոլոր գործելակերպին և գաղտնիքներուն: Ասոր փոխարէն անանուն ընկերութեան մը բաժնետէրը արտաքին լուծում մը կ'ընէ. որովհետեւ ան ներքին կեանքին վրայ միայն սահմանափակ տեղեկութիւններ ունի:

Երկու լուծումները իրարմէ բնաւ տարբերութիւն մը չունին նպատակի տեսակէտով: Տարբերութիւնը միայն յառաջանալու կարելիութեան մէջն է:

Ներքին լուծումը ընելու համար այն բոլոր ներքինէն կախեալ նախապայմանները լրացուած ըլլալու են և անկէ ալ արտաքինէն կախեալ նախապայմանները լրանալու են. օրինակ, միջազգային հրապարակը, տագնապի մը ազդեցութիւնը յարակից ձեռնարկներուն վրայ են: Արտաքին լուծողն ալ նախ պէտք է արտաքինէն պէտք եղած նախապայմանները լրացնէ և վերջը ձեռնարկին ներքին կեանքէն կախեալ նախապայմաններուն տեղեակ ըլլալու աշխատի:

Այս երկու լուծումները յաճախ ալ ԱՆԱԼԻԹԻԲ և ՍԻՆԹԵԹԻԲ գրութիւններ կը կոչուին:

Ներքին լուծումը անալիթիք գրութիւն կը կոչուի որովհետեւ ան ամենափոքրէն, մասնակիէն ընդհանուրին կը քալէ: Արտաքին լուծումն ալ սինթէթիք գրութիւն կը կոչուի, որովհետեւ ան ընդհակառակը ընդհանուրէն մասնակիէն կը զիմէ մինչեւ որ զժուարութեան մը, գաղտնիքի մը առջեւ գտնուի:

Այս երկու լուծումները զստ զստ առնել կարելի չէ, որովհետեւ երկուքին ալ ձգտումը և նպատակը նոյնն է և տարբերութիւններն միայն զժուարութեան յաղթահարման մէջն է:

## 5.- ԷՆՏԻԻՔԹԻՑ ԵՒ ՏԷՏԻԻՔԹԻՑ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ո եւ է հաշուեկշիռ մը լուծելու ժամանակ բնական է ձեռնարկի մը կեանքին տեղեակ կ'ըլլանք: Այս լաւ կամ գէշ կացութիւն մը կը պարզէ մեր առջեւ: Մենք պատկան ձեռնարկին լաւ կամ գէշ վիճակի մը մէջ գտնուած ըլլալը հասկնալով չենք գոհանար, այլ անոր վրայ կը ծանրանանք:

Եթէ ձեռնարկի մը համար «սնանկ է» ըսուի, հաշուեկշիռ լուծողը չի կշտանար նման նախադասութեամբ մը:

Ծանրանալու գրութիւնը երկու տեսակ է էնթիքթիֆ և տէտիքթիֆ:

ՏԷՏԻԻՔԹԻՑ ԴՐՈՒԹԵԱՆ համար ձեռնարկային տնտեսագիտութիւնը որոշ կանոններ ունի և ամէն բարեկաւում, վատթարացում կամ առհասարակ փոփոխութեան պատճառները կրնայ մեզ գիտականօրէն բացատրել:

ԷՆՏԻԻՔԹԻՑ ԴՐՈՒԹԵԱՆ մէջ սակայն ձեռնարկային տնտեսագիտութեան կանոնները կ'ուրացուին և հաշուեկշռին վրայ ամէն մէկ խորացում, ըստ վերջինին, պիտի ծառայեն ապագային օգտագործելու համար անցեալի փորձառութենէն:

Գործնականին մէջ այս երկու գրութիւնները իրարմէ զանազանել անկարելի է: Իրաւ է թէ ձեռնարկային տնտեսագիտութիւնը որոշ կանոններու ենթակայ է, այնպէս ինչպէս երկրաչափութիւնը, սակայն ո՞ւր պիտի գտնենք այս կանոնները: Նախ որ տնտեսագիտութեան կանոններու որոշման ծառայող ազդակները շատ են և սակէ՛ զատ ալ տակաւին գիտութիւնը շատ երիտասարդ է: Ուրեմն շատ մը պարագաներու տակ պէտք ունինք էնտիւքթիք գրութեամբ գիտութեան ուսմանը կամ փոփոխութեանց վրայ ծանրանալ, և որոշ կանոններ ձեռք ձգել և գտնող իբր նորութիւն մը ընդունիլ, և թէ նախկիններուն մէջ չի գտնուին:





## ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

### Լ.- ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Հաշուեկշիռներ լուծելու համար շատ մը եղանակներ կան, ասոնք ամէնքն ալ հարկաւոր են: Ասոնցմէ մէկն է ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ: Հոս 100 թիւը իբր որոշ թիւ մը ընդունուած է կացութեան կամ արգիւնքի կշիռներու գումարին համար: Նախ ամէն խումբին համեմատութիւնը կ'որոշուի, կշիռներուն գումարը 100 ընդունուելով: Վերջը խումբին մէջի մասերուն համեմատութիւնը կ'որոշուի զարձեւալ կշիռներուն գումարը 100 ընդունելով: Եթէ զանազան խումբերու բաժիններուն գումարը գումարենք նախապէս գտնուած խումբին համեմատութեան հաւասար կուգայ: Այս ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ կը կոչուի:

Ասկէ զատ ալ կայ ՆեՐԻՆ ՆԵՐԻՆ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ. երբ խումբին զումարը 100 ընդունուի և մէջի բաժինները այդ համեմատութեամբ որոշուին, հոս ալ զարձեալ զատէն խումբի զումարին արտաքին համեմատութիւնը արձանագրել կարեւոր է:

Ուրեմն ամփոփելով սա ըսել պիտի ուզենք թէ զումարի սիւնակէն զատ երկու սիւնակ կ'աւելցնենք, երկրորդ սիւնակը անպատճառ խումբին ամբողջութեան համեմատութիւնը կ'որոշէ կշիռներուն զումարը 100 ընդունելով:

Առաջին սիւնակը կամ կշռին ընդհանուր զումարի համեմատութեամբ կ'որոշուի, ինչ որ արտաքին համեմատութիւն կը կոչուի կամ թէ խումբի զումարը 100 ընդունելով այդ համեմատութեամբ կ'որոշուի ինչ որ ներքին համեմատութիւն կը կոչուի:

Մեր 3 եւ 4 թիւ Ֆորմիւլները որոնք 1 թիւ Ֆորմիւլին վրայի հաշուեկոշիկն երկու մասերն են համեմատական դուրեամբ ներկայացած են:

3 թիւը որ կացութեան կշիւը կը ներկայացնէ ա.ին եւ բ.ին երկրորդ սիւնակը յասկացուած է խումբի զումարի համեմատութեան: Օրինակ երջող ստացուածք 85 առ հարիւր է  $(75223 \times 100 = 7522300 : 88589 = 85)$ . ա.ին եւ բ.ին սարքերուքիւնը սա է քէ ա.ք կշիւն ընդհանուր զումարի համեմատութեամբ կը ցուցնէ (զանազան մասեր) Օրինակ եքէ առնելու ըլլանք ապրանք համեմատութեանն է 46 առ հարիւր  $(40.500 \times 100 = 4.050.000 : 88589 = 46)$  (արտաքին համեմատութիւն): Իսկ բ.ք բաժիններուն խումբին մեջի համեմատութիւնը կը ցուցնէ: Օրինակ ապրանք 54 առ հարիւր  $(40.500 \times 100 = 4.050.000 : 75223 = 54)$  ներքին համեմատութիւնը:

Արդիւնքի կշիռն ալ իր ա.ովը եւ բ.ովը նոյնպէս  
ներկայացած է 4 թիւ ֆորմիւլին վրայ:

## 2.- ԲԱԽԴԱՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԽԴԱՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ մէջ կշիռները իրենց  
գումարին քովը գտնուող սիւնակներուն մէջ նախկին  
կշիռներուն հետ ունեցած տարբերութիւնը կը ցուցնեն:  
Հոս ոմանք նախորդ կշիռներուն գումարներն ալ կը  
գնեն, աւելի յստակ ըլլալու համար, սակայն եթէ  
միայն յաւելումը (+) կամ նուազումը (—) նշանակ-  
ուի բաւական կը նկատուի: Առաջին սիւնակը առա-  
ւելի (+) կը յատկացուի և երկրորդը նուազման (—):

Մեր 5 թիւ ֆորմիւլը որ դարձեալ ա. 1 թիւ ֆոր-  
միւլի կացութեան կշիռը կը ներկայացնէ երկու սիւ-  
նակներուն վրայ զանազան մասերուն կրած սարբերու-  
թիւնները արձանագրուած է: Նախկին կացութիւնը մեզ  
ծանօթ է 1 թիւ ֆորմիւլին վրայ փակման ցուցակէն:

## 3.- ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆ ԵՆ ԱՂ ՆԱՐՔ ԺՐ ՄԱՆ

բիներու հաշուեկշռի թուանշանները կ'արձանագրէ:  
 Երբեմն ալ գումարներուն քով համեմատական  
 թիւերն ալ կը նշանակուի:

Մեր 6 թիւ Ֆորմիլի վիճակագրական դրութեամբ  
 ներկայացուած երեք տարւոյ հաշուեկշիւը կը պարու-  
 ցակէ:

#### 4.- ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԹԻՒԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Շատեր փոխանակ նախկին երեք դրութիւնները  
 գործածելու և մասնաւոր սիւնակներով գործելու հաշ-  
 ուեկշռին կը միացնեն ցուցակ մը որ զանազան համե-  
 մատութիւններ կը ցուցնէ: Ասոնք երկու տեսակ են և  
 կը կոչուին ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԹԻՒԵՐ: Առաջինը այն  
 բոլորը որոնք կարելի կ'ըլլայ գիտնալ միայն հաշուե-  
 կշռին վրայէն: Երկրորդը կը ստիպէ որ այլ աղբիւր-  
 ներուն ալ դիմուի: Օրինակ փակման ցուցակին:

Մեր 7 թիւ Ֆորմիլը որ 1 թիւ Ֆորմիլի վրայ ձեռ-  
 նարկին կը պատկանի համեմատական թիւերու ցուցակ  
 մըն է մէկ մասը միայն կշիռներու օգնութեամբ շին-  
 ուած է և մաս մըն ալ փակման ցուցակի շնորհիւ:

բիներու հաշուեկշռի թուանշանները կ'արձանագրէ:  
 Երբեմն ալ գումարներուն քով համեմատական  
 թիւերն ալ կը նշանակուի:

Մեր 6 թիւ Ֆորմիլի վիճակագրական դրութեամբ  
 ներկայացուած երեք տարւոյ հաշուեկէիւր կը պարու-  
 նակէ:

#### 4.- ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Շատեր փոխանակ նախկին երեք դրութիւնները  
 գործածելու և մասնաւոր սիւնակներով գործելու հաշ-  
 ուեկշռին կը միացնեն ցուցակ մը որ զանազան համե-  
 մատութիւններ կը ցուցնէ: Ասոնք երկու տեսակ են և  
 կը կոչուին ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԹԻԻԵՐ: Առաջինը այն  
 բոլորը որոնք կարելի կ'ըլլայ գիտնալ միայն հաշուե-  
 կշռին վրայէն: Երկրորդը կը ստիպէ որ այլ աղբիւր-  
 ներուն ալ դիմուի: Օրինակ փակման ցուցակին:

Մեր 7 թիւ Ֆորմիլը որ 1 թիւ Ֆորմիլի վրայ ձեռ-  
 նարկին կը պատկանի համեմատական թիւերու ցուցակ  
 մըն է մեկ մասը միայն կէիւրներու օգնութեամբ շին-  
 ուած է և մաս մըն ալ փակման ցուցակի շնորհիւ:

## 5 - ԿՐԱՑԻՔ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Շատ մը սարազաներու տակ թուանշանները խօսուեն չեն նկատուիր: Այս պատճառաւ կ'ուզուի որ ան պատկերի մը ձեւով երեւայ որպէս զի տեսնողը առաջին տկնարկին իսկ գողափար մը կազմէ: Այսպիսի պահանջի մը առջեւ ԿՐԱՑԻՔ ԴՐՈՒԹԻՒՆԸ կը գործածուի, որ զանազան ձեւերով կրնայ ըլլալ:

Պլխաւորները երկու տեսակ են.

ա) Ծաւալի դրութիւնը:

բ) Բեկեալ գիծերու դրութիւնը:

Երբ հաշուեկշռի մը մէկ մասը ԾԱԽԱԼԻ դրութեամբ ընել ուղենք փոխանակ թիւեր գործածելու կրնանք թուղթին վրայ գծուած տարածութիւն մը որոշ թիւ մը նկատել և այս չափի համեմատութեամբ հաշուեկշռի զանազան մասերը ծաւալներով ներկայացնել: Բնականէն աքթիֆը բասիֆէն բաժնուած ներկայացնել հարկաւոր է: Ասկէ զատ կարելիութեան սահմանին մէջ ալ խումբերու բաժանումը և ներքին դասաւորումը օգտակար է:

Մեր 1 քիւ կրամիֆին վրայ զտնուող երկու ծաւալի դրութեամբ ներկայացուած կէիւները 1 քիւ Ֆօրմիլի վրայ հաշուեկէիւներուն կը պատկանին: Անոր ա.ք կացութեան համար պատրաստուած է բ.ք արդիւնքին համար:

Եթէ ուղուի վիճակագրական գրութիւնը կրաֆիքի մը վերածել այն ստեն ԲեկեՍ.Լ ԳիՅԵՐՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ կը գործածուի: Այս որ իր չափերը ունի կը ցուցնէ թէ ստացուածքի և զրամագլուխի զանազան մասերը տարուէ տարի ի՞նչ ուղղութիւն կ'առնեն: Հոս ընդհանրապէս աքթիֆը (ստացուածքները) սովորական, սեւ գիծերով կ'ըլլան և բասիֆն ալ (զրամագլուխները) կարմիր գիծերով: Լաւ դասաւորում մը հարկաւոր է սակայն որքան քիչ գիծ ըլլայ այնքան յստակ կ'ըլլայ: Արդիւնքի կշռին համար ալ սեւ գիծերը շահերը և կարմիրները վնասները կը ներկայացնեն:

Մեր 2 քիւ կրաֆիքը 6 քիւ Ֆօրմիւլին վրայի վիճակագրական դրութիւնը բեկեալ գիծերով կը ներկայացրնէ: ա.ը կացութիւնը որուն մեջ սեւ գիծերը ստացուածքները կը նշանակեն եւ կարմիրներն ալ զրամագլուխները: Բ.ը արդիւնքը կը ցուցնէ, որուն մեջ սեւ գիծերը շահերը եւ կարմիրներն ալ ծախսերը:

Կրաֆիք գրութիւնը կրնայ նաեւ զանազան ձևերով օգտագործուիլ:

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ Կ Ե Ա Ն Ք Ը

## Ի.- ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Աշխարհիկ լեզուին մէջ գիտենք որ ձեռնարկ բառը շատ կը գործածուի, ինչ որ իրաւացիօրէն շատ լայն իմաստ մը ունի: Մեզ հոս հետաքրքրող ձեռնարկները այս լայն և ընդհանուր իմաստէն բաժնելու համար առեւտրական ձեռնարկներ կը կոչենք: Արդէն մեր նըստապահը եզրով հաշուեկշիռներու լուծումը միայն առեւտրական ձեռնարկներու յատուկ եզրղներուն համար է:

Նախ պիտի ուզէինք առեւտրական ձեռնարկներու սահմանը գիտնալ և այս պատճառաւ ալ միւս ձեռնարկներէն իրենց ունեցած տարբերութիւնները պիտի ուսումնասիրէինք:

Այս ուսումնասիրութեան պատճառը օրինական



կամ աւելի իրաւաբանական հարց մը լուծելու հանգամանքը չունի: Մեր նպատակը սա է թէ՛ քանի որ մեր լուծելիք հաշուեկշիռները ասեւորական ձեռնարկներու յատուկ են պէտք ենք այս ձեռնարկներուն նըկարագրական պայմաններուն տեղեակ ըլլանք: Ասկէ զատ հաշուեկշիռներու լուծման կապ ունեցող ձեռնարկային անասագիտութեան կիրարկման սահմանը որոշելու համար այ ուսումնասիրելու ստիպուած ենք: Այս վերջինը արդէն անասագիտութեան առեւտրական ձեռնարկներու յատուկ ճիւղն է:

Առեւտրական ձեռնարկներուն տարբերութիւնները այլ ձեռնարկներէն վեց նկարագրական կէտերու մէջ ի յայտ կուգան, որոնք հետեւեալներն են.

ա) Աշխատանքի և գրամագլուխի իրարօգնական արտադրողականութիւնը:

բ) Աշխատանքի և գրամագլուխի իրարմէ բաժանելիութիւնը:

գ) Արուեստական գործունէութիւն:

դ) Մրցակցութեան ազատութիւն:

ե) Նիւթական պէտքերու գոհացում:

զ) Անհատականութիւն:

Եթէ ձեռնարկ մը այս վեց պայմաններէն մէկը լրացուցած չըլլայ իբր առեւտրական ձեռնարկ ընդունիլ կարելի չէ:

Այս պարագան օրինակներով և ամէն մէկուն նըշանակութեան վրայ շեշտուած ստորեւ կը գտնենք.

Առաջինը եղող ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ ԻՐԱՐՕԳՆԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ այնքան կարեւոր տեղ մը բռնած է որ շատ մը մասնագէտներ իբր առեւտրական ձեռնարկներու յատուկ միակ նկար

րագրական տարբերութիւնը առաջ կը քշեն: Ենթադրենք թէ դրամատէր մը խանութ մը բանալ ուղէ: Երբ խանութը բանայ առանց աշխատանքի իր դրամը կամ դրամագլուխը ոչ մէկ շահաբերութիւն չունենար: Այս դրամագլուխը շահաբեր և արտադրող զարցնելու համար որոշ աշխատանք մը պէտք է, որ է ապրանք գնել և ծախել:

Նոյնպէս առեւտրական կեանքին մէջ անհատը չի կրնար իր աշխատանքը օգտագործել առանց դրամագլուխի: Մէկը որքան ալ աշխատանքի վարժ և աշխատելու փափաք ունենայ, չի կրնար առեւտուրը անել երբ ապրանք չունի: Ուրեմն կը տեսնենք թէ առեւտուրին մէջ դրամագլուխը և աշխատանքը կը միանան և այս միացումը առաջին պայման է առեւտրական ձեռնարկի մը համար:

Աշխարհիկ լեզուին մէջ յաճախ դանազան մարդոց կարողութիւնները կամ շահու աղբիւրները դրամագլուխներ կ'անուանուին: Օրինակ, երբ մէկը կրցած է տարիներու աշխատանքէ մը վերջ իրաւաբան մը ըլլալ, կ'ըսեն թէ «այսքան տարիներու աշխատանքէ մը վերջ դրամագլուխ մը ձեռք ձգած է»:

Մենք առանց ըսել ուզելու թէ իրաւաբան մը դրամատէրէ մը նուազ կը շահի, սա ըսել հարկաւոր կը տեսնենք թէ՛ դրամագլուխը միայն մարմնային, նիւթական բան մը ըլլալուն նման կարողութիւնները դրամագլուխներ չեն սեպուիր անտեսական ըմբռնումով:

Երկրորդ պայմանը եղող ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ ԻՐԱՐՄԷՆ ԲԱԺԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ ըսելով սա պիտի հասկնանք թէ առեւտրական ձեռնարկ մը

կարելիութիւն տալու է որ զրամատէրը և աշխատողները մասամբ կամ ամբողջովին տարբեր անձեր ըլլան: Օրինակ, անանուն ընկերութեան մը մէջ զրամագլուխ հայթայթողները և աշխատողները ամբողջովին տարբեր անձեր են: Անհատական ձեռնարկի մը մէջ ալ զրամատէրը կարող չէ բոլոր աշխատանքը ինք վրան առնելու: Ան պաշտօնեաներ կ'առնէ և անոնց հետ աշխատանքի բաժանում մը կ'ունենայ: Ասկէ դատ ալ ան շատ անգամներ իր զրամագլուխին անբաւարարութիւնը տեսնելով ուրիշներէ զրամագլուխ կը ստանայ: Ուրեմն այսպէսով կը տեսնենք թէ հոս որքան ալ ձեռնարկին տէրը զրամագլուխ և աշխատանք կը տրամադրէ զրամագլուխը և աշխատանքը մասամբ փոխատուներու և պաշտօնեաներու միջեւ բաժնուած է:

Ասոր փոխարէն որ եւ է արհեստաւոր մը որ առանձին կ'աշխատի և քիչ կամ շատ զրամագլուխ մըն ալ ունի (կօշկակարի մը գործիքները) ան առեւտրական մը չէ որովհետեւ իր զրամագլուխը և աշխատանքը իրարմէ բաժանելի չեն: Այդ արհեստաւորը միայն ինքը կրնայ իր փոքր զրամագլուխը իր աշխատանքովը օգտագործել:

Հողագործական ձեռնարկներն ալ առեւտրական ձեռնարկներ ընդունիլ կարելի չէ որովհետեւ հողագործը միայն ինքը կրնայ իր հողը օգտագործել: Ներկայիս սակայն մեծ երկիրներու մէջ հակում մը կայ երկրագործութիւնը առեւտրական ձեռնարկներու վերածել: Այս կարելի պիտի ըլլայ շնորհիւ արմատաւորման (*rationalisation*) կամ նոր մեքենաներով (*cultur intansif*): Այսպիսի քայլի մը քաջալերման

համար գիւղացին պէտք եղած յարմարութիւնը չունի: Ան իր հօրմէն կամ նախնիքներէն տեսածէն զատ բան սորվիլ չուզեր և այս պատճառաւ կ'ուզուի որ այդ ձեռնարկներուն մէջ ալ զրամատիրութիւնը մտնէ:

Այս մասամբ Ամերիկայի մէջ յառաջ քալած է և Եւրոպայի հողագործութեան ալ նման ուղղութիւն մը տալ կ'ուզեն, սակայն տակաւին հողագործութիւնը կամ գիւղատնտեսութիւնը իբր առեւտրական ձեռնարկ ընդունիլ կարելի չէ:

Առեւտրական ձեռնարկ մը ԱՐՈՒԵՍՏՍԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ մը նպատակաւ հիմնուած ըլլալու է: Այսինքն իր նպատակը շահ ըլլալու է: Առանց ասոր, եթէ նախկին երկու պայմանները լրացուցած իսկ ըլլայ, առեւտրական ձեռնարկ մը չէ:

Շահու ակնկալութեամբ չեղող ձեռնարկներուն պետութեան մը ներքեւ կը հանդիպինք որոնք կը բանեցուին տնտեսական կամ այլ գործավարութեանց (նախարարութեանց) կողմէ: Օրինակի համար պետական երկաթուղիները: Ասոնք զրամազլուխի և աշխատանքի կը կարօտին և իրարմէ ալ բաժանելի են սակայն առեւտրական մը չեն որովհետեւ իրենց նպատակը արուեստ կամ շահ չէ: Կրնայ ըլլալ որ ալ շահին սակայն իրենց բուն նպատակնին երկրին տնտեսութեան ծառայելն է:

Զորբորդը ՄՐՅԱԿՅՈՒԹԵԱՆ ԱԶՍՏՈՒԹԻՒՆՆ է: Ասով սա պիտի հասկնայինք թէ՛ առեւտրական ձեռնարկ մը ազատ մրցակցութեան պատկանող ճիւղի մը պատկանելու է: Ան մրցակցութեան զիմադրելու ստիպողականութեան տակ գտնուելու է: Եթէ ու է ձեռնարկ մը առանձնաշնորհում մը ունենայ (մենաշնորհ,

համար գիւղացին պէտք եղած յարմարութիւնը չունի: Ան իր հօրմէն կամ նախնիքներէն տեսածէն զատ բան սորվիլ չուզեր և այս պատճառաւ կ'ուզուի որ այդ ձեռնարկներուն մէջ ալ զրամատիրութիւնը մտնէ:

Այս մասամբ Ամերիկայի մէջ յառաջ քալած է և Եւրոպայի հողագործութեան ալ նման ուղղութիւն մը տալ կ'ուզեն, սակայն տակաւին հողագործութիւնը կամ գիւղատնտեսութիւնը իբր առեւտրական ձեռնարկ ընդունիլ կարելի չէ:

Առեւտրական ձեռնարկ մը ԱՐՈՒԵՍՏՍԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ մը նպատակաւ հիմնուած ըլլալու է: Այսինքն իր նպատակը շահ ըլլալու է: Առանց ասոր, եթէ նախկին երկու պայմանները լրացուցած իսկ ըլլայ, առեւտրական ձեռնարկ մը չէ:

Շահու ակնկալութեամբ չեղող ձեռնարկներուն պետութեան մը ներքեւ կը հանդիպինք որոնք կը բանեցուին տնտեսական կամ այլ գործավարութեանց (նախարարութեանց) կողմէ: Օրինակի համար պետական երկաթուղիները: Ասոնք զրամազլուխի և աշխատանքի կը կարօտին և իրարմէ ալ բաժանելի են սակայն առեւտրական մը չեն որովհետեւ իրենց նպատակը արուեստ կամ շահ չէ: Կրնայ ըլլալ որ ալ շահին սակայն իրենց բուն նպատակնին երկրին տնտեսութեան ծառայելն է:

Զորբորդը ՄՐՅԱԿՅՈՒԹԵԱՆ ԱԶՍՏՈՒԹԻՒՆՆ է: Ասով սա պիտի հասկնայինք թէ՛ առեւտրական ձեռնարկ մը ազատ մրցակցութեան պատկանող ճիւղի մը պատկանելու է: Ան մրցակցութեան զիմադրելու ստիպողականութեան տակ գտնուելու է: Եթէ ու է ձեռնարկ մը առանձնաշնորհում մը ունենայ (մենաշնորհ,

գիւտի իրաւունք և չն.) առեւտրական ձեռնարկ մը ընդունիլ կարելի չէ:

Այս չորս պայմանները լրացնելէ վերջ ձեռնարկ մը պէտք է որ ՆԻԻԹՍԿԱՆ ՊԷՏԲԵՐՈՒ ԳՈՀԱՅՈՒՄ տայ. այսինքն ընկերութեան մը մարմնային (*matériel*) պէտքերուն և ոչ անմարմնային (*immateriel*) պէտքերուն: Օրինակ, լրագրական ձեռնարկ մը դրամագլուխի մը և աշխատանքի մը կը կարօտի և թէ այդ երկուքը իրարմէ բաժանելի են, իրեն նպատակը շահ և արուեստ է, մրցակցութեան ալ դիմադրելու ստիպողականութեան տակ կը գտնուի, սակայն առեւտրական ձեռնարկ մը չէ, որովհետեւ իրեն արտադրութիւնը, այսինքն լրագիրը մարմնային պէտքի մը գոհացում չի տար այլ ոչ մարմնային պէտքի մը, որքան ալ ան կարենայ շօշափելի ըլլալ:

Ասոր փոխարէն վաճառականին սպրանքը մարմնային և նիւթական պէտք մը կը գոհացնէ հետեւաբար վաճառականը առեւտրական ձեռնարկ մըն է:

Անհատական և մասնաւոր վարժարաններն ալ նախկին չորս պայմանները լրացնելով հանդերձ առեւտրական ձեռնարկներ չեն որովհետեւ անոնք ոչ մարմնային քաղաքակրթական պէտքերու գոհացում կուտան:

Վերջապէս առեւտրական ձեռնարկի մը լրացունելիք վեցերորդ պայմանը կուգայ, որ է ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Հոս անհատականութեան տակ հասկնալիքնիս քաղաքական անտեսագիտութեան և իրաւաբանութեան շատ բարդ հարցերուն պատկանող մասը չէ: Մենք հոս անհատականութիւնը ըսելով սա պիտի հասկնանք

թէ՛ առեւտրական ձեռնարկ մը ո եւ է օժանդակութեան  
 և ո եւ է հակակշռի ենթակայ ըլլալու չէ: Երբեմն ձեռ-  
 նարկներ հակառակ որ շահու (արուեստի) նպատակաւ  
 հիմնուած կ'ըլլան օժանդակութեան մը կ'ենթարկուին  
 երբ վնասեն: Այսպիսի ձեռնարկ մը եթէ նախկին հինգ  
 պայմանները լրացուցած ըլլայ իսկ առեւտրական ձեռ-  
 նարկ մը չէ:

Այսօր նման պարագայի մը առջեւ կը գտնուինք,  
 երբ տագնապը շատ մը գործաւորներ իրենց գործա-  
 րանէն հեռացուցած է: Ասոնք բնական է առանց ապ-  
 բուստի մնալով կը դիմեն պետական օժանդակութեան,  
 պետութիւնը եթէ իր ելմտական կացութիւնը թոյլա-  
 տու տեսնէ այս անդործները կը գոհացնէ:

Այս երկու տեսակ կ'ըլլայ:

ա) Ուղղակի դրամ կուտայ անոնց առանց աշ-  
 խատելու:

բ) Նկատի առնելով թէ անոնց առանց աշխա-  
 տանքի մնալնին ընկերային կարգուսարքին խանգար-  
 ման պատճառ կ'ըլլայ և թէ միանգամայն ալ առանց  
 դանոնք աշխատցնելու դրամ տալ ողորմութիւն տալու  
 հանգամանքը կ'առնէ ինչ որ անոնց արժանապատ-  
 ուութիւնը կը վիրաւորէ, այս պատճառաւ անուղղակի  
 օժանդակութեան մը կը գիմէ: Կամ պետական գոր-  
 ծերու մէջ կ'աշխատցնէ կամ թէ առեւտրական ձեռ-  
 նարկներուն կ'առաջարկէ որ անդործները վերստին  
 հրաւիրեն, անոնք աշխատցնեն և եթէ անոնց գոր-  
 ծունէութիւնը վնաս մը պատճառէ, այդ վնասը ուղ-  
 ղակի կամ անուղղակի հատուցանել կը ստանձնէ:

Այսպիսի պարագայի մը տակ այդ ձեռնարկը ա-  
 ռեւտրական ըլլալէ կը դադրի որովհետեւ անհատա-

կանութիւնը կորսնցուցած է: Անոր հիմնարկութեան նստակը շահ է, սակայն ան վնասի մը պարագային օժանդակութիւն գտնելու յոյսով կ'ընթանայ:

Շատ մը ձեռնարկներ նոյնպէս ունեն օժանդակութիւն գտնելու յոյսով կը գործեն, ստոնք նոյնպէս անհատականութիւննին կորսնցուցած են: Այս օժանդակութիւնը անպատճառ պետութեան մը կողմէ: Ըլլալ չենք եզրակացնէր բնականէն:

Հակակշռի տակ ալ գտնուելու չէ առեւտրական ձեռնարկ մը երբ ան բոլոր օրինական պայմանները լրացուցած է:

Այս վեց պայմանները լրացնող ձեռնարկ մը առեւտրական ձեռնարկ անունը կը կրէ:

Այսպէս վաճառականութիւնը, ճարտարարուեստը, անանուն երկաթուղիները, ապահովագր. բնկերութիւնները եւն. երբ վերը դրուած վեց պայմանները լրացնեն առեւտրական ձեռնարկներ կը կոչուին:

Առեւտուրը պէտք չենք շփոթել իրեն մաս կազմող վաճառականութեան հետ:

Բոլոր այս առեւտրական ձեռնարկներուն կազմութեան, գործունէութեան և վերջաւորութեան համար որոշ կանոններ գոյութիւն ունին, որոնք ամբողջութիւնը կը կաղմեն ձեռնարկային անտեսագիտութեան: Այս կանոնները հիմնուած են ընդհանուր արեւ-



տեսութեան հիմերուն վրայ այնպէս ինչպէս քաղաքական տնտեսագիտութիւնը:

Այս երկու տնտեսագիտութեանց միջև տարբերութիւն մը կայ և ան ալ սա է թէ՛ քաղաքական տնտեսագիտութիւնը ձեռնարկները արտաքինէն պաշտպանելու գիտակցութիւնը կուտայ, որպէս զի այդ քաղաքական տնտեսութեան սահմաններուն մէջ ապա հովուի տնտեսական բարգաւաճ կեանք մը: Մինչդեռ ձեռնարկային տնտեսագիտութիւնը առեւտրական ձեռնարկներուն ներքինէն իրենց գոյութիւնը ապահովել կուտայ:

Անոնց կազմուելու, գործելու, մրցելու, տագնապներէ կղզիանալու ելն. գիտակցութիւններ կուտայ:

Սա ալ ըսել հարկաւոր է սակայն թէ՛ ձեռնարկային տնտեսագիտութիւնը պէտք չենք շփոթել առեւտրական ձեռնարկներուն արհեստական մասին հետ: Մենք հոս գնման համար որոշ ապրանքի մը տեսակը կարող չենք գիտնալու: Կամ եթէ մետաղագործական ձեռնարկի մը հաշուեկշիռը լուծելու ելլենք չենք կըրնար մետաղի հանքերու արհեստին մասին խօսիլ: Սակայն հիմնուելով ձեռնարկային տնտեսագիտութեան կանոններուն, պիտի կրնայինք ըսել թէ՛ որոշ կացութիւններու առջև ի՞նչ ուղղութիւն ունենալու է, այսինքն շատ ապրանք ունենալու կամ ոչ, վարկային քաղաքականութիւնը ի՞նչ ըլլալու է ելն.:

Հաշուեկշիռներու լուծումը, որ մեզ համար միայն առեւտրական ձեռնարկներու համար գոյութիւն ունի, մենք անոնց շատ մը գաղտնի կէտերը երեւան պիտի հանենք:

Այս գլուխին մէջ բոլոր առեւտրական ձեռնարկներու ամբողջութեան զանազան չըջաններու զանազան գործունէութեան և զանազան կացութիւններու առջեւ զանուեւնին պիտի ուսումնասիրենք հաշուեկշռին շնորհիւ:

Ամէն ճիւղի կամ զանազան տեսակ առեւտրական ձեռնարկներու համար մասնակի ուսումնասիրութիւններ յաջորդ գլխուն մէջ պիտի պարզենք:

## 2.- ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐՈՒ

### ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ

Ամէն առեւտրական ձեռնարկ ապրող օրկանիզմ մըն է: Այսինքն օրկաններու ամբողջութիւն մը: Անիւր օրկաններուն շնորհիւ է որ կը գործէ և իր պարտականութիւնը կը կատարէ:

Ձեռնարկի մը նպատակը շահաբերութիւն մը ունենալ է, սակայն այս շահը առանց օրկաններուն գործունէութեան անկարելի է: Օրինակ՝ եթէ ապրանք չի գնուի և համեստ շահ մը չըլլայ, կամ եթէ սնտուկին միջոցաւ դրամ չի գանձուի վճարում չըլլար ևլն.:

Ձեռնարկ մը իր օրկանները կ'ստանայ որոշ ատենուան մը մէջ որ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ Կը կոչուի:

Չեռնարկ մը կեանքի կոչուած օրէն իսկ կատարեալ օտկանիզմ մը կոչել անկարելի է իր օտկանները որոշած չըլլալուն համար:

Կազմութեան շրջանը հետեւեալ մասերէն կը բաղկանայ.

ա) Դրամագլուխի կազմութիւն:

բ) Ստացուածքի »

գ) Առեւտրական »

Հոս *USU.ՅՈՒԱԾԻ* և *ԴՐԱՄԱԳԼՈՒԽ* բառերը թարգմանաբար առնուած է գերմաներէն *Vermögen* և *Kapital* բառերէն: Այս երկու բառերը որքան ալ ընդհանուր անտեսագիտութեան մէջ ասկաւին իրենց լուծումը գտած չեն մեր ճիւղին մէջ որոշ նշանակութիւն մը ունին: Դրամագլուխը ձեռնարկին դրամ արամագրողներուն փոփոխակի (ձեռնարկի մը ախրով) կամ անփոփոխ (պարտատէրին) առնելիքը կը ցուցնէ:

Ստացուածքը այդ դրամագլուխներուն փոխարէն գոյութիւն ունեցող զանազան մասերը ի յայտ կը բերէ: Իրաւունքներ (պահանջք) կամ թէ իրական (ապրանք, կալուած) և երեւակայական խտեալ (թղթադրամ, չէք) ինչքեր:

Դրամագլուխները մաս կը կազմեն հաշուեկշիւին աջ կողմը զանուող ԲԱՍԻՖին և ստացուածքներն ալ անոր ձախ կողմը գտնուող ԱՔԹԻՖին:

Ֆրանսացիք այս երկուքը իրարմէ զանազանելու միջոցը չունին. իրենց *capital* բառը մեր ճիւղին մէջ իսկ շատ վիճելի է: Օրինակ, նախ մէյ մը սեփական դրամագլուխին *capital* անունը կուտան անկէ ալ աքթիֆին մաս կազմող զանազան խումբերուն ալ նոյնպէս *capital* ներով կ'անուանեն:

Երբեմն ամբիֆի խումբերուն համար *valeur* բառը կ'ընդունին (*valeurs immobilisées*) սակայն ստիկա յաճախ բասիֆին մէջ ալ կը գործածուի:

Նախ պէտք է զբամագլուխ մը: Այս զբամագլուխը կը հայթայթուի զբամատէրերու կողմէ որոնք իրենց զբամը շահաբեր դարձնել կ'ուզեն առեւտրական ձեռնարկի մը մէջ:

Որոշ ստացուածք մը կը յանձնեն ձեռնարկին և այդ օրէն առնելիք մը կ'ուշենան որ է իրենց զբամագլուխը:

Տնտեսական ըմբռնումով սա ըսել հարկաւոր է թէ՛ ձեռնարկի մը զբամ հայթայթողը ձեռնարկէն իբր պահանջ ոչ թէ ձեռնարկին ստացուածքները կ'ուշենայ, այլ պարզապէս միայն իր զբամագլուխը: Արդէն կրկնատամարի գրութիւնն ալ այս հիման վրայ հաստատուած ըլլալը կը տեսնենք երբ ձեռնարկի մը տիրոջ առնելիքը անոր պահանջին կ'արձանագրենք:

Խնդիր է սակայն թէ որոնք պիտի յօժարին այս ձեռնարկին ստացուածք մը տալով անկէ առնելիքուոր ըլլալ:

Այս ԴՐՍՄՍԳԼՈՒԽԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԵՆ է: Ձեռնարկ մը կրնայ զանազան միջոցներով զբամագլուխ հայթայթել սակայն իրեն համար մնայուն զբամագլուխ մը պէտքը կայ:

Այս երկուքի կը բաժնուի. Առաջինը այնպիսի մէկը կը արամադրէ որ ընդունած ըլլայ գործունէութիւնէն առաջ եկող շահը կամ վեասը իր արամադրած զբամագլուխին վրայ աւելցնելու կամ անկէ պակսեցնելու: Երկրորդը այնպիսի մէկը որ որոշ առնելիք մը կ'ու-

նենայ և շահուն ու մնասին մէջ բաժին ունենալ չու-  
ղէր:

Առաջինը կը կոչուի ՍԵՓԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ որ  
բնական է մնայուն հանգամանք մը ունենալու է:  
Երկրորդը ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ կ'անուանուի սակայն ա-  
սոր մէկ մասը մնայուն ու երկար ժամանակի համար  
տրամադրուած ըլլալ հարկաւոր է և կը կոչուի ՕՏԱՐ  
ԵՐԿԱՐ ՊՍՅՄԱՆՍՏԱՄՈՎ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ:

Այս երկու գրամազուխներու հայթայթումով ա-  
ւարտած կ'ըլլայ գրամազուխի կազմութեան շրջանը:

Մեր 8 եւ 9 թիւ ֆորմիլներուն ա. երբ երկու սար-  
քեր ձեռնարկներու դրամազուխի կազմութեան շրջանը  
ի յայտ կը բերեն: 8 թիւ ֆորմիլի ա.ին վրայ 20,000ի  
դրամազուխ մը կը տեսնենք որուն մեջ սեփական դրա-  
մազուխը 15000ի եւ օտար դրամազուխը 5000ի մաս  
մը ունի:

Դրամազուխը երբ կազմուի բնականէն ստաց-  
ուածք մըն ալ գոյութիւն ունեցած պիտի ըլլայ, քա-  
նի որ ձեռնարկէ մը գրամազուխի առնելիքը որ մը  
պէտք է բան մը արուած ըլլայ, ինչ որ ստացուածք  
կը կոչուի:

Տրուած, տրամադրուած ստացուածքը կրնայ շատ  
տեսակ ըլլալ. գրամ, գրամատունէ պահանջ, ասրանք,  
կարասի, կալուած և յն.: Ասոնք ձեռնարկին ստաց-  
ուածքներն են, սակայն այս ստացուածքները անփո-  
փոխ մնալով օգտագործուելու համար տրամադրուած  
չեն ըլլար: Պէտք է անոնք այնպիսի ստացուածքնե-  
րու վերածուին որ նպատակայարմար ըլլան շահ մը  
ասպանովելու: Օրինակ՝ ենթագրեանք թէ մէկը 25000  
ոսկի ինքը և 25000 ալ ուրիշ մէկը գրամ ըլլալով կը

արամադրենն և 50000ի պատրաստ զրամով վաճառատուն մը կը բանան: Եթէ այս 50000ը զրամ ըլլալով պահուի ու եւ է շահ ունենալ անկարելի է: Պէտք է դայն այնպիսի ստացուածքի մը վերածել որ շահ մը ապահովէ: Երբ ապրանք գնուի կրնայ աւելի սուղ ծախուիլ և շահ մը ապահովել:

Այսպէս նախապէս արամադրուած ստացուածքը նպատակայարմար ստացուածքներու վերածման շրջանը ՄՏԱՑՈՒՄԾԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՇՐՁԱՆ կը կոչուի:

Առեւտրական ձեռնարկին առաջին գործը կ'ըլլայ այնպիսի յատկացումներ ընել որոնք ձեռնարկի մը գոյութեան կապուած են: Այնպիսի յատկացումներ որոնք այլևս վերատին զրամի կամ այլ ստացուածքի վերածուելու հանգամանքը չունին: Իրենցմէ սպասուելիք շահը միայն ձեռնարկին լաւ գործունէութեան մէջ կը կայանայ և ոչ թէ անոնց վաճառումէն: Իրենց օգուտը ձեռնարկը իր բոլոր կեանքի տեւողութեան ղգայ: Օրինակ, երբ երկաթուղիի ընկերութիւն մը հաստատուի և որուն նախնական ստացուածքը զրամ ըլլալով գոյութիւն ունենայ, այս զրամին կարեւոր մէկ մասը կայարաններու շինութեան, երկաթուղագծին երկարման ևլն. պիտի յատկացնէ: Կամ եթէ վաճառատուն մը բանալով վաճառականութիւն մը ընել ուզուի պէտք է որ կարասիներ, մեքենաներ ևլն. գնուի, կամ աւելի առաջ երթալով եթէ շահաւոր տեսնուի վաճառատան չէնքն ալ կը գնուի:

Այս երկու ձեռնարկներուն այս կարգի յատկացումներնին ձեռնարկին գոյութեան կապուած են: Առանց այս յատկացումներուն ձեռնարկը չի կրնար գործել: Կարելի չէ առանց կայարանի և երկաթուղագծի

երթեւեկի ընկերութիւն մը երեւակայել, ոչ ալ առանց կարասիի վաճառատուն մը: Աստուք, եթէ վաճառելու հնարաւորութիւնը իսկ ոտնեցուի ծախու չեն: Իրենցմէ սպասուած շահը գնուածէն աւելի ծախելով շահ մը ապահովել չէ: Անոնք ձեռնարկին բոլոր տեւողութեան համար պէտք են: Այս պատճառաւ այս յատկացումները կ'ԱՊՈՒԱԾ ՍՏՍՅՈՒԱԾՔԻՆ մաս կը կազմեն:

Ասոր փոխարէն մաս մըն ալ այնպիսի ստացուածքի մը կը վերածուի որուն շարունակ փոփոխութիւնը ձեռնարկին շահ մը կ'ապահովէ: Օրինակի համար ապրանք գնելու է որպէս զի դայն գնուածէն աւելի սուղի ծախուի և շահ մը ապահովուի:

Այս տեսակ ստացուածքները շարունակաբար փոխուելով ձեռնարկը շահաբեր կը դարձնեն: Ապրանք կը գնուի այս դարձեալ դրամ կ'ըլլայ և կամ վարկով տալով պահանջը մը կը գոյանայ որոնք դարձեալ ապրանք կ'ըլլան ևլն.:

Այսպէս ապրանքը, դրամը և պահանջը շարունակաբար փոփոխութեան կ'ենթարկուին և շրջող ստացուածք անուան տակ դառնալու պարտականութիւնը կը ստանան:

Այսպէս կ'ունենանք կապուած և շրջող ստացուածքներ: Եթէ այս ստացուածքներէն զատ բան մը աւելնայ, նախապէս անկազմ եղած միջոցի ստացուածքէն, անշահաբեր պահել չուզուիր և որոշ կերպով շահաբեր դառնելու համար կալուածներու, արժեթուղթերու կամ ուրիշ կերպով ձեռնարկին գործունէութեան մաս չի կազմող ստացուածքի մը կը վերածուի:

Նման ստացուածք մը, քանի որ ձեռնարկին մաս չի կազմեր կրնայ առանց վնաս մը պատճառելու անկէ

քաշուիլ և այս պատճառաւ ալ ազատ ստացուածք կը կոչուի:

Այսպէսով երկրորդ շրջանը եզոյ ստացուածքի կազմութեան շրջանը լրացած կը նկատուի:

Մեր 8 և 9 թիւ ֆորմիւլներուն վրայի բերք երկու տարբեր ձեռնարկներու ստացուածքի կազմութեան շրջանը կը ներկայացնեն:

Ցին բ.բ կապուած ստացուածքին 8000 և շրջով ստացուածքին ալ 10000 յատկացնելով եղած է 18000: 2000 աւելնալով ան ալ ազատ ստացուածքի յատկացուած է:

Յին բ.բ կապուած և շրջով ստացուածքը 20000 լրացուցած ըլլալով ազատ ստացուածքի մը կարելիութիւն չէ տուած:

Այսպէս ստացուածքը և զրամագլուխը որքան ալ կազմուած ըլլան տակաւին կատարեալ օրկանիզմ մը չենք ունենար մեր առջեւ: Ձեռնարկը պէտք է առան մը առեւտուրի մէջ գանուի որպէս զի կարենայ գիտնալ թէ իր կացութեան մէջ բան մը փոխել յարկ է թէ ոչ: Այս շրջանը ԱՌԵՏՏՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ կը կոչուի:

Կրնայ ըլլալ որ աւելի շրջող ստացուածքի մը պէտք տեսնուելով ազատ ստացուածքը իրեն յատկացուի: Կամ եթէ բնաւ ազատ ստացուածք գոյութիւն չունի և ո եւ է ստացուածքի մը պէտք կայ այն առան այս ստացուածքը զրամագլուխի նոր յաւելումով մը ընելու հնարը կ'ըլլայ: Այս զրամագլուխը կրնայ ձեռնարկին տէրը հայթայթել կամ թէ օտարը: Եթէ օտարը հայթայթէ հաւանական է որ երկար պայմանաժամի մը համար տալ չուզէ և կարճ պայմանաժամէ



մը վերջ կա ուղելու իրաւունքը ունենայ: Օրինակ, ենթադրենք թէ վաճառական մը ապրանքի պէտք ունենայ (չրջող սաածուածք) զայն ապառիկ կը գնէ: Ասոր փոխարժէքը կարճ պայմանաժամէ մը վերջ պիտի պահանջուի:

Նման պարտքերը (օտար գրամագլուխ) պէտք չէ նախապէս գրամագլուխի կազմութեան շրջանի գոյութիւն ունեցող օտար երկար պայմանաժամով գրամագլուխին մէջ մտցնել: Այս պատճառաւ այս տեսակի պարտքերը կը հաւաքուին ՕՏԱՐ ԿԱՐՃ ՊԱՅՄԱՆԱԺԱՄՈՎ ԴՐԱՄԱԳՆՈՒԽ կոչուող նոր խումբի մը մէջ:

Կամ ուրիշ շատ տեսակ փոփոխութիւններ առեւտրական կազմութեան շրջանին կը պատկանին:

8 եւ 9 թիւ ֆորմիւլներուն գեր երկու տարբեր ձեռնարկներու առեւտրական կազմութեան շրջանին կը պատկանին: Առաջինին վրայ կը տեսնենք թէ նախկին (ստացուածքի կազմութեան շրջանին) 10000ի շրջող քստացուածքը քիչ ըլլալով 1000 ալ ազատ ստացուածքին յատկացուած է: Երկրորդը 7000ի նոր շրջող ստացուածք մը պէտք տեսնելով եւ ազատ ստացուածք ալ գոյութիւն չունենալով դիմած է օտարին որ կարն պայմանաժամով այդ 7000ի գումարը տուած է:

Գալով այն հարցումին թէ ե՞րբ է առեւտրական կազմութեան շրջանի լրացումը, այս հարցումին պատասխանել շատերու համար դժուար կուգայ սակայն այդպէս չէ: Երբ առեւտրական ձեռնարկը գործունէութեան մէջ մտնէ եւ այլեւս ստացուածքները եւ գրամագլուխները որ եւ է մեծ փոփոխութիւններու չենթարկուին կամ եթէ այս փոփոխութիւնը շարունակաբար նոյն գնացքով ընթանայ այն առեւտրական

առջեւի առեւտրական ձեռնարկը բոլորած կ'ըլլայ իր երրորդ կազմութեան շրջանը: Ան այլեւս կատարեալ ապրող օրկանիզմ մըն է մեր առջեւ, ունի իր օտկանները և որոնց պարտականութիւնները որոշ են անոր լաւ մեքանիզմ մը ապահովելու համար:

Երբեմն անհատական ձեռնարկները շահազիտութեան կամ այլ պատճառներով շարունակաբար սեփական դրամազրուխի բարձրացում մը կ'ունենան և այնպիսի գնացքով որ նախկինը տասնապատուած կը տեսնենք: Այսպիսի պարագայի մը առջեւ անոր այս գնացքը առեւտրական կազմութեան շրջանին կը պատկանի: Երբեմն ալ սակայն բնաւ չի կազմուիր: Նման հարցերը անկանոն կազմերուն մէջ պիտի լուծենք:

### 3.- ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՁԵՆԱՐԿՆԵՐԸ

#### ԻՐ ՕՐԿԱՆԻԶՄ

Կազմութեան երեք շրջաններուն մէջ գոյացած ստացումքի և դրամազրուխի լուրաքանչիւր մասը առեւտրական ձեռնարկի մը օրկանը կը նկատուի: Օրինակ այսպէս՝ սնտուկը միջոց մըն է դրամ գանձելու, ապրանքը միջոց մըն է վճարուածէն աւելի գանձուելու և սեփական դրամազրուխն ալ միջոց մըն է

այս աւելին (չահը) ընդունելու եւն։ Այս բոլոր օրկաններուն ամբողջութիւնը օրկանիզմ մը մէջնեղ կը բերէ, որ է՝ առեւտրական ձեռնարկը։

Գիտենք որ բոլոր ապրող օրկանիզմները մէկ կազմ մը կ'ունենան մէկ մ'ալ կացութիւն մը։

Կացութիւնը յաճախ կրնայ փոփոխութեանց ենթարկուիլ, սակայն կազմը ոչ։ Եթէ կազմը փոխուելիք իսկ ըլլայ անոր փոփոխութեան նշանակութիւնը կացութեան փոփոխութեան նշանակութիւնէն բոլորովին տարբեր է։

Կացութիւնը լաւ մը ըմբռնելու, առեւտրական ձեռնարկ մը զեկաւարելու և անոր ապագան գուշակելու համար պատկան ձեռնարկին կազմին ծանօթ ըլլալ հարկ է։

Կազմը կացութեան պէս կացութեան կշիռն վրայէն կը գիացուի։ Որ եւ է առեւտրական մը կացութեան կշիռն վրայէն այդ առեւտրական կացութիւնը հասկնալ կարելի է։ Ստոր փոխարէն կազմը գիտնալու համար այնպիսի միջոցներու գիմելու է որոնք նօրմալ ժամանակուան մը պատկանին։ Տագնապի մը մէջի կացութեան կշիռը կարող չէ այդ առեւտրական ձեռնարկին կազմը ի յայտ բերելու։ Սակայն, ան կրնայ անոր օրուան կացութիւնը ի յայտ բերել։

Յաճախ կազմը և կացութիւնը իրարու հետ կը շփոթեն։ Ստոր պատճառը շփոթելի ըլլալէն չէ, այլ պարզապէս կազմը ըմբռնելու դժուարութենէն յառաջ կուգայ։

Այս դժուարութիւնը ուրանալ անկարելի է, բայց

առանց այս խնդիրը լուծելու որ և է հաշուեկշիռ լուծելու կարող պիտի չըլլայինք:

Նոյն ճիւղին վրայ աշխատող երկու առեւտրական ձեռնարկներ առնենք: Ասոնք նոյն գործունէութիւնը կ'ընեն, նոյն յաճախորդներուն կը դիմեն: Տագնապ մը վրայ կը հասնի, երկուքն ալ նոյն կացութեան մէջ կը գտնուին, այսինքն անվաճառ ապրանքի մը թերք, անգանձելի պահանջք ևլն.: Մէկը կարող չըլլար իր գործունէութիւնը շարունակելու, կը դադարի և միւսը կը տոկայ և որոշ ատեն մը վերջը դարձեալ նորմալ վիճակ մը կ'ստանայ:


Այսպէս տագնապ մը տարբեր ազդեցութիւն կ'ընէ երկու տարբեր կազմով առեւտրական ձեռնարկներու վրայ: Առաջինը չդիմացաւ որովհետեւ տկար կազմ մը ունէր, երկրորդը դիմացաւ որովհետեւ առողջ կազմ մը ունէր:

Կազմի մը ճանաչման դժուարութիւնները երկունս. —

ա) Ո՞ր ատենուան հաշուեկշիռը իբր կազմի տըւեալ ընդունելու է:

բ) Տկարութեան և առողջութեան աստիճանները և սահմանները:

Առաջինը եզող խնդիրը թէ՛ ո՞ր ատենուան հաշուեկշիռն վրայէն առեւտրական ձեռնարկի մը կազմը գիտնալ կարելի է, լուծելը քիչ մը անորոշ պիտի ըլլար: Ընդհանուր առումով սա ըսել հարկ է թէ՛ իբր կազմի տուեալ առեւտրական ձեռնարկի մը կազմութեան շրջանը անմիջապէս բոլորելէն վերջի հաշուե-



կշիռը ընդունելու է: Ասոր պատճառը սա է թէ՛ երբ առեւտրական ձեռնարկ մը կազմութեան երեք չրջանները բոլորէ, այդ առեւտրական օրկաններուն պարտականութիւններն ալ որոշած կ'ըլլայ. հետեւաբար օրկաններուն ամբողջութիւնը եզոզ օրկանիզմին կազմը գիտնալ կարելի կ'ըլլայ:

Երկրորդին դալով՝ այս աւելի որոշ է: Այսինքն առեւտրական ձեռնարկ մը երբ առողջ և երբ տկար կ'ըլլայ:

Այս հասկնալու համար կազմը չորսի կը բաժնենք: Ասոնք ստորեւ կը գտնենք.

ա) Գիտենք որ առեւտրական ձեռնարկէ մը պահանջողներ կ'ըլլան: Այս պահանջողները ձեռնարկին դրամազուլի տրամադրողներն են:

Այս տրամադրողները երկու զլխաւոր դասակարգի կը պատկանին: Մէկը՝ ձեռնարկին տէրն է և որուն դրամազուլի շահի մը պարագային կ'աւելնայ և փեսաի մը պարագային կը նուազի: Միւսը՝ այնպիսի դրամազուլի հայթայթողի մը որուն դրամազուլի փոփոխութեան չենթարկուիր շահու կամ փեսաի մը պարագային: Առաջինին անելիքը ի յայտ կուգայ սեփական դրամազուլի անունին տակ, երկրորդին առնելիքը ի յայտ կուգայ օտար դրամազուլի անունին տակ, կացութեան կշիռն վրայ:

Այս սեփական և օտար դրամազուլիներուն համեմատութեան որոշուիլը առեւտրական ձեռնարկի մը ԴՐԱՄԱԳՆՈՒՄԻ ԿԱԶՄԸ ի յայտ կը բերէ:

Ընդհանուր դրամազուլին մէջ որքան սեփական

գրամագլուխի համեմատութիւնը բարձր ըլլայ այնքան առողջ կ'ըլլայ գրամագլուխի կազմը: Ասոր պատճառները շատ են: Շահու մը պարագային առանց օտարին գրամագլուխին համար շատ տոկոս վճարելու, շահին մեծագոյն մասը սեփական գրամագլուխի բարձրացման կը յատկացուի: Վնասի մը պարագային ալ երբ սեփական գրամագլուխը բարձր ըլլայ, օտարին պահանջը ապահովուած կ'ըլլայ: Երբ ձեռնարկ մը բարձր սեփական գրամագլուխով մը դորձէ իր պարտատէրերուն կամքէն անկախ դորձելու հնարաւորութիւն կ'ունենայ եւլն.:

8 եւ 9 թիւ Ֆորմուլները, որոնք արբեր առեւտրական ձեռնարկներու կեանքը կը պատկերացնեն, ասոնց գ.երը կրնայ իբր նորմալ ժամանակի մը տուեալ բնդունուիլ եւ կազմի նանաչման օգտագործուիլ:

Ցի գ.ը առողջ գրամագլուխի կազմ մը ի յայտ կը բերէ. որովհետեւ բնդանուր գրամագլուխին մեջ սեփական գրամագլուխի համեմատութիւնը հարիւրին 75 է: Մինչդեռ 9ին գ.ը սկար գրամագլուխի կազմ մը ունի որովհետեւ սեփական գրամագլուխի համեմատութիւնը հարիւրին 19 է միայն:

Օտար գրամագլուխը հոս երկուքի բաժնել հարկաւոր է: Ասոնց համեմատութիւնը եւս որոշելու է: Նախ որքանը երկար պայմանաժամով են և որքանը կարճ պայմանաժամով: Որքան երկար պայմանաժամով օտար գրամագլուխները աւելի ըլլան կարճ պայմանաժամովներէն կազմը այնքան առողջ կ'ըլլայ: Ասոր պատճառը սա է թէ՛ կարճ պայմանաժամով պարտք մը անմիջապէս ետ կը պահանջուի և ձեռնար-

կին մէջ մնալուն պարտականութիւն մը չի կրնար ունենալ: Ասոր փոխարէն երկար պայմանաժամով պարտքերը, որոնք անանուն ընկերութեանց մէջ պարտաթուղթերը կը ներկայացնեն և անձնական ձեռնարկներու մէջ ալ երբեմն բարեկամներու և ընտանեկան պարագաներու դրամները, ասոնք որքան ալ շահուն և վնասին մասնակից չըլլան մնալուն են և անմիջապէս ետ պահանջուելու հաւանականութեան տակ չեն:

Տ քիւ Ֆօրմիլիին գ.ը ալ աւելի առողջ դրամագլուխի կազմ ունեցած կ'ըլլայ եւր ան կարն պայմանաժամով օսար դրամագլուխ մը չունի: Գին գ.ը սակայն ալ աւելի սկար դրամագլուխի կազմ մը կ'ունենայ, որովհետեւ ընդհանուր դրամագլուխին մէջ հարիւրին 26 ալ կարն պայմանաժամով օսար դրամագլուխ մը գոյութիւն ունի:

բ) Դրամագլուխի կազմը ուսումնասիրելէ վերջ կ'անցնինք աքթիֆի կոզմը և հաս **ՍՏԱՅՈՒԱԾՒԻ** **ԿԱԶՄԻՆ** տեղեակ կ'ըլլանք:

Առեւտրական ձեռնարկի մը ստացուածքները որքան գիւրին դրամի վերածելի ըլլան այնքան առողջ կ'ըլլայ այդ ձեռնարկին ստացուածքի կազմը: Եւ սակայն շահաբերութիւնը հակառակը կը պահանջէ: Այս պատճառով սահման մը որոշել հարկ է:

Գիտենք որ կապուած ստացուածքը սկզբունքի տեսակէտով անմիջապէս դրամի վերածել անհնարին է: Ասոր փոխարէն չըջող և ազատ ստացուածքները կրնան ուշ կամ կանուխ դրամի վերածուիլ: Այս երեքը իրարու փոխադարձաբար համապատասխան ըլլալու են:

Կապուած ստացուածքը առեւտրական ձեռնարկի մը համար անհրաժեշտ է, սակայն այս ստացուածքին օգտագործման համար պատրաստ զրամ պէտք է: Օրինակ՝ գործարանի մը մեքենաները անհրաժեշտ են, սակայն այս մեքենաները օգտագործելու համար ալ զրամի պէտք կայ որ նախանիւթ դնուի: Ասոր փոխարէն ալ հրք մեքենայի պակաս մը գոյութիւն ունենայ կարելի չէ գործարանը բանեցնել: Նոյնպէս ազատ ստացուածք մըն ալ ունենալ հարկաւոր է տապալաններու դիմադրելու համար եւլն.: Երբ այս չըլլայ և ստացուածքները իրարու համապատասխան բարձրութեամբ չըլլան տկարակազմ ստացուածքով ձեռնարկ մը կ'ըլլայ:

Մեր 8 քիւ եւ 9 քիւ ֆօրմիւլներուն գ.երը իրարու հետ բախուսեմք: Կը տեսնենք քէ 8ը 9ին առողջ ստացուածք կազմ մը ունի, որովհետեւ անոր կապուած բացացուածք միայն հարիւրին 40 է եւ միւսինը 44: Ասոր փոխարէն 8ը 5 առ հարիւրի ազատ ստացուածք մը ունի, ինչ որ կը պակսի 9ին մօտ:

դ) Այս երկու կողմերու կազմերը ուսումնասիրելէ վերջ անոնք իրարու հետ կը բախուստենք որով ԵԼՄԸ-ՏԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ տեղեակ կ'ըլլանք:

Հոս ստացուածք և զրամագլուխի կազմերէն անկախ սա խնդրով կը հետաքրքրուինք թէ օտարը ինչով ապահովուած է:

Եթէ տեսնենք թէ օտարին զրամագլուխը կապուած ստացուածքի մը յատկացուած է այս արդէն շատ լաւ ելմտական կազմ մը ըսել չէ:



Եւ եթէ տեսնենք թէ կարճ պայմանաժամով օտար դրամազուխը կապուած ստացուածքին յատկացուած է, այս բոլորովին տկար ելմտական կազմ մը ի յայտ կը բերէ: Երբ ասոր փոխարէն տեսնենք թէ կապուած ստացուածքը սեփական դրամազուխէն նուազ է, օտար դրամազուխներուն փոխարէն ալ ազատ ստացուածք մը գոյութիւն ունի այս առողջ ելմտական կազմ մը մէջտեղ կը բերէ:

Առնենք մեր 8 եւ 9 քիւ Ֆօրմիլներուն գ.երբ: Տիւն ելմտական կազմը առողջ է որովհետեւ ան 15000ի, այսինքն 75 առ հարիւրի սեփական դրամազուխին փոխարէն միայն 40 առ հարիւրի կապուած ստացուածք մը ունի եւ օտար դրամազուխը 25ի դեմ 55 առ հարիւր շրջող եւ 5 առ հարիւրի ազատ ստացուածքով մը պահովուած է: Ասոր փոխարէն 9ը սկար ելմտական կազմ մը ունի որովհետեւ կը տեսնենք քիւ կապուած ստացուածքը 44 առ հարիւր (12000) է եւ ասոր փոխարէն միայն 19 առ հարիւր (5000)ի սեփական դրամազուխ մը գոյութիւն ունի: Օտար դրամազուխները (15000 + 7000) 81 առ հարիւր են եւ ասոր փոխարէն ազատ ստացուածք մը գոյութիւն չունի:

դ) Ասկէ վերջ անոր ի՞նչ պայմաններով կարենալ դործելը կը գտնենք: Այսինքն այս կազմը անխախտ պահելով շահաբեր պիտի ըլլա՞յ թէ ոչ եւլն. : Օրինակ իրական մետաքսի դործարան մը իր դէմ մրցորդ մը կ'ունենայ միշտ որ է արհեստական մետաքսը: Եթէ իր կազմը թոյլատու չըլլայ այս մրցակցութեան զիմանալու, ան տկար ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԼՄ մը ունեցած կ'ըլլայ, նոյնիսկ եթէ ստացուածքի, դրամազուխի եւ ելմտական առողջ կազմ մը ունենայ:

Այս չորսը միանալով առեւտրական ձեռնարկի մը ամբողջական կազմը սուսած կ'ըլլան:

Այս ամբողջական կազմը իր առողջութեան և արեւկարութեան աստիճանները ունի: Ասոնք հետեւեալներն են.

ա). Առողջ կազմով ձեռնարկներ:

բ). Սովորական կազմով »

գ). Տկար » »

դ). Անկանոն » »

Կազմը, ինչպէս ըսինք, ձեռնարկ մ'ը երկար տանուան համար կ'ունենայ: Ան բնածին կամ ստացական կ'ըլլայ: Բնածին կ'ըլլայ երբ արտաքին ազգակները զայն կ'որոշեն: Օրինակ՝ ձիւղի մը մէջ դոյութիւնն ունեցող տեւական մրցակցութիւնը: Ստացական կ'ըլլայ այն ատեն երբ ան կազմութեան միջոցին կամայ կամ ակամայ ձեռնարկը հիմնողներուն կողմէ կը տրուի: Օրինակ՝ երբ կապուած ստացուածքին համար շատ աւելորդ յատկացումներ կ'ըլլան և տկար ստացուածքի կազմ մը կը ստեղծուի:

Այսպէսով կազմը կը հասկնանք և կ'անցնինք կացութեան: Կացութիւնն է որ մեզ կը հետաքրքրէ, սակայն կացութիւնը ըմբռնելու համար կազմին տեղեակ ըլլալ հարկ էր. Օրինակ՝ ինչպէս որ վարը պիտի տեսնենք տկարակազմ ձեռնակ մը երբ օտար կարճ պայմանաւճանակով զրամագլուխով մը ընդլայնուած է ան չի կրնար տաքնապի մը առկալ և հետեւաբար անոր կացութեան կշիռը լուծած ժամանակնիս տկարակազմ ըլլալը գիտնալնիս հարկաւոր է:

Կացութեան մէջ, բախդատմամբ կազմին, աւելի կարճ ապագայով մը կը հետաքրքրուինք:

Կացութեան ուսումնասիրութիւնը կացութեան կշռին վրայ կ'ըլլայ: Զայն ուսումնասիրելու համար պէտք է անոր առեւտուրի ո՛ր ճիւղին պատկանիլը գիտնալ որպէս զի այդ ճիւղին կարգ մը նրբին կէտերը նկատի առնուին: Մենք այս ուսումնասիրութիւնը յետագայ գլխուն մէջ պիտի ընենք:

Սակայն բոլոր առեւտրական ձեռնարկներու զանազան ճիւղերուն մէջ մեծ նշանակութիւն ունեցողը ԼԻԲԻՏԻԹԷԻ հարցն է:

Ասով հասկնալ ուղեղնիս սա է թէ առեւտրական ձեռնարկը պիտի կարենա՞յ իր որոշ առնուան մը վըճարումները ընել: Այս ալ երկուքի կը բաժնուի.

ա) ԲԱՅԱՐՉԱԿ ԼԻԲԻՏԻԹԷ (liquidité absolue). — Հոս կը հետաքրքրուինք թէ ձեռնարկը կարճ պայմանաժամով պարտքերը և երկար պայմանաժամով պարտքերուն մասնավճարները պիտի կարենա՞յ օրին վճարել:

բ) ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԼԻԲԻՏԻԹԷ (liquidité relative). — Հոս ալ մեր հետաքրքրուելիքը սա է թէ ձեռնարկը իր յանձնարարութիւններէն զատ գործունէութեան համար պէտք եղող պատրաստ զրամը ունի՞ թէ ոչ:

Ստոնք հասկնալու համար պէտք է ձեռնարկի մը զանձին տեղեակ ըլլալ:

ԳԱՆՁ ԸՆԵՂՈՎ ձեռնարկի մը շրջող և սպաս ստացուածքին այն մասերը կը հասկնանք, որոնք զրամ են կամ թէ զրամի վերածուելու հաւանականութիւնը ունին: Օրինակ՝ զրամատունէ պահանջ:

Կացութիւնը կրնայ միշտ փոխուիլ: Փոփոխու-

Թեանց պատճառները և նշանակութիւնները մասնաւոր պլուխի մը մէջ բացատրած ենք:

Կացութեան փոփոխութիւնը առաջ կուգայ տկար կազմէն, տնտեսական կացութենէն և այդ ձեռնարկին գործունէութեան քաղաքականութենէն: Անոր փոփոխութիւնը մեծ նշանակութիւն մը չունի եթէ կազմը փոխուած չէ:

Սակայն երբեմն կացութիւնները կրնան կազմը փոխել: Այս մասին ալ «տնտեսական կացութեան ազդեցութեանը» բաժնին մէջ պիտի խօսինք: Ամէնէն շատ փոփոխութեան ենթարկուողներն են անկանոն կազմովները:

#### 4.- ԱՌԵՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՍԸ

##### ՕՐԿԱՆՆԵՐԸ

Նախորդ բաժնին մէջ տեսանք թէ՛ առեւտրական ձեռնարկ մը օրկանիզմ մըն է, այսինքն օրկաններու ամբողջութիւն մը: Որո՞նք են անոր օրկանները:

Առեւտրական ձեռնարկի մը օրկանները նախ երկուքի կը բաժնուին, այսինքն «աքթիֆ»ի և «բասիֆ»ի:

Ասանք ալ դարձեալ իրենց կարգին երեքի կը բաժնուին և որոնք ալ ունին դարձեալ իրենց ստորաբաժանումները:

Աքթիֆին մէջ նախ կապուած ստացուածք մը կայ ըսինք: Այս ստացուածքին մաս կը կազմեն գործառնութեան անհրաժեշտ բոլոր կալուածները, մասնակցութեան համար գնուած արժեթուղթերը և այն բոլոր ծախքերը որոնցմէ ձեռնարկը ստան մը, կամ իր բոլոր գործունէութեան մէջ պիտի օգտուի: Այս վերջինէն օրինակ մը՝ անանուն ձեռնարկի մը հիմնարկութեան համար եղած ծախքեր: Ասանք ծախքեր են և որ եւ է վաճառման արժէք չի ներկայացնելուն համար փնաս սեպել պէտք էր սակայն այս ճիշդ պիտի չըլլար որովհետև անոր օգուտը յառաջիկային ևս պիտի տեսնուի:

Գործարանի մը մեքենաները կամ վաճառատան մը կարասիները կապուած ստացուածքի մաս կը կազմեն: Կապուած ստացուածքը միշտ արժէքի նուազում մը կ'ունենայ: Նախ որ ան գործածուելով կը հիննայ կամ կը մաշի և ասկէ զատ ալ նորոյթները անոր արժէքը ալ աւելի կը նուազեցնեն: Այս արժէքի նուազման ԱՄՕՐԹԻՍԸՄԱՆ անունը կուտան: Այս «ամօրթիւրման»ը պէտք է շփոթել վերջը ըսուելիք պարտքերու մասնավճարը եղող «ամօրթիւրման»ներուն հետ:

Ամօրթիւրմանը, այսինքն կապուած ստացուածքին նուազ արժէքը, երկու տեսակ կրնայ նկատի առնուած ըլլալ:

Կամ կապուած ստացուածքը նուազ արժէքով մը կ'երեւայ արթիֆին վրայ և կամ թէ՛ ան անփոփոխ

մնալով և ամօրթիսըմանը բասիֆին մաս կազմել կը արոււի: Այս բասիֆի սեփական գրամագլուխի խումբին մէջ կը տեսնենք:

Կապուած ստացուածքէն վերջը աքթիֆին մէջ շրջող ստացուածք մը կը տեսնենք: Ասոր մաս կը կազմեն այն բոլոր ստացուածքները որոնք միշտ փոփոխութեան պիտի ենթարկուին: Նախ կուգայ գրամը, վերջը գրամատունէ պահանջը, անկէ վերջ եթէ վաճառական մըն է՝ անոր ապրանքը, եթէ գործարան մըն է՝ անոր նախանիւթը ևւին: Ասոնք միշտ պիտի դառնան, գրամատունի պահանջը ապրանք պիտի ըլլայ, ապրանքը գրամ ևւին:

Շրջող ստացուածքին այն մասը որ գրամ է կամ անմիջապէս գրամի վերածելու հնարը կայ այս ԳԱՆԶ կ'անուանուի: Դրամէն զատ գանձին մաս կը կազմեն գրամատուններէ պահանջները, զեղչելի գանձամուրհակները, անմիջապէս վաճառելի ապրանքները ևւին:

Կապուած և ազատ ստացուածքները յաճախ ԳՈՐԾԻ ՄՏԱՅՈՒՄՅՐԳ (Betriebsvermögen) անուան տակ կը միանան: Գործի ստացուածք կը կոչուին որովհետեւ երկուքն ալ գործելու կը ծառայեն: Առաջինը կապուած վիճակի մէջ և երկրորդը դառնալով ձեռնարկին գոյութիւնը կ'ապահովեն:

Մեզ համար երկուքը իրարմէ բաժնել հարկաւոր ըլլալուն մեր օրինակներէն շատերուն մէջ բաժնուած կը տեսնենք:

Ասկէ վերջը կուգայ ազատ ստացուածքը: Ասիկա քիչ մը խառնուած կ'ըլլայ նախորդ երկուքին հետ և այս պատճառաւ շատեր այսպիսի ստացուածքի մը գոյութիւնը կ'ուրանան: Սակայն մենք որ հաշուեկշիռ

ները պիտի լուծենք՝ ճանչնալնիս հարկաւոր է: Անշատ դժուար պիտի չըլլար զանազանել կապուած ըստացուածքէն: Անոր մաս կը կազմեն գործառնութեան մաս չունեցող ստացուածքները և որոնք շահ մը կ'սպահովեն այլ կերպով:

Ասոնք գլխաւորաբար կալուածներէ և արժեթուղթերէ կը բաղկանան: Վերջին երկուքը կրնան նաեւ կապուած ստացուածքին մաս կազմած ըլլալ, սակայն եթէ անոնք ձեռնարկին գործունէութեան հետ կապ մը չունին, անոնք ազատ ստացուածքին մաս կը կազմեն: Օրինակ՝ ճարտարարուեստական ձեռնարկի մը գործարանի շէնքը և գործաւորներուն համար շինուած բոլոր բնակարանները կապուած ստացուածքին մաս կը կազմեն: Եթէ ասոնցմէ դուրս, ուրիշ տեղ մը, պարզապէս հասոյթ մը ունենալու համար, կալուած մը գնուած է, այս շրջող ստացուածք մըն է:

Իրաւ է թէ երբեմն շրջող ստացուածքը դժուար զանազանելու պարագայի առջեւ կը գտնուինք: Այսպիսի պարագայի մը առջեւ, եթէ միւս ստացուածքներուն հետ խառն երեւայ, մեծ խառնաշփոթութիւն մը յառաջ չի բերեր:

Մեր ֆորմիւլներէն շատերը որոշ ըլլալու համար շրջող ստացուածքով մը ներկայացուցած ենք:

Ազատ ստացուածքը կրնայ դիւրաւ կամ դժուար դրամի վերածուիլ: Ան անոր տեսակէն կախեալ է:

Ստացուածքներուն արժէքի որոշման համար երեք դրութիւն գոյութիւն ունի, որոնք 12րդ էջին վրայ «Հաշուեկշռի տեսութիւնները» գլխուն մէջ բացատրած էինք:

Գալով դրամազրուիսի երեք խումբերուն, առա-

Չինը երդող սեփական գրամագրուխը, եթէ անձնական ձեռնարկ մըն է, մէկ գումարով մը կը ներկայացուի: Լուծման համար շահը զատ ցուցնել հարկաւոր է սակայն, եթէ քանի մը անձերու պատկանող ընկերութիւն մըն է այս բոլոր անձերուն համար զատ զատ գումարներ կը տեսնենք:

Անանուն ընկերութեանց մէջ սեփական գրամագրուխը զանանան մասեր կ'ունենայ: Նախ ընկերութեան գրամագրուխը, որ միշտ անփոփոխ կը մնայ: Վերջը զանազան ՊԱՀԵՍՏՆԵՐԸ: Պահեստները ընկերութեան գրամագրուխին հետ էական տարբերութիւն մը չունին: Պահեստները երեք տեսակ են՝

ՊԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ (*réserves statutaires*), որոնք հիմնարկութեան ժամանակ ընկերութեան պայմանագրութեան մէջ ընդունուած են,

ՕՐԻՆԱԿԱՆ (*réserves légales*), եթէ օրէնքը կը պարտադրէ, և

ՅԱԻՆԵԼՈՒԱԾԱԿԱՆ (*réserves supplémentaires*), եթէ բացառիկ նպատակներու համար կ'ըլլայ:

Անանուն ընկերութեանց կացութեան կշիռներուն մէջ «չպահանջուած շահաբաժին» անուան տակ գումար մը կը տեսնենք: Ասիկա այն բաժնետէրերուն պահանջն է որոնք տակաւին ներկայացուցած չեն իրենց կարօնները:

Ամէն անանուն ձեռնարկի շահն ալ անոր սեփական գրամագրուխին մէջ կը տեսնենք: Ան երկու մասէ կը բազկանայ. առաջինը պատկան տարւոյ շահը և երկրորդը նախորդ տարիներէն մնացեալը:

Եթէ ձեռնարկը՝ ամօրթիւրմանը բասիֆին մաս



կազմել տալու սովորութիւնը ունի, ասոնք սեփական զրամագլուխին մաս կազմած կը տեսնենք:

Ասկէ վերջ կուգայ օտար երկար պայմանաժամով զրամագլուխները Ասոնք օտարներու այն պահանջներն են, որոնք մնայուն դեր մը ունին: Օրինակ՝ անանուն ընկերութիւնները պարտաթուղթ շրջաբերութեան կը հանեն: Ասոնք մնայուն օտար զրամագլուխին մաս կը կազմեն:

Օտար երկար պայմանաժամով զրամագլուխը որքան ալ մնայուն ըլլայ ան օր մը ետ պիտի վճարուի: Այս վճարումը կամ որոշ ատեն մը վերջը ամբողջութեամբ կ'ըլլայ, կամ թէ մասնավճարներով: Եթէ մասնավճարներով ըլլայ՝ ամօրթիարման կը կոչուի:

Վերջապէս կուգայ օտար երկար պայմանաժամով զրամագլուխը որուն մէջ կը գտնուի օտարներու այն բոլոր պահանջները, որոնք անմիջապէս կամ կարճ ժամանակէ մը վերջ ետ պիտի վճարուին. այսինքն անոնք որոնք մնայուն չեն:

Գրամատուներուն ընթացիկ հաշուով ունեցած պարտքերնին, զանազան աւանդ զրամները, պարտամուրհակները ևլն. օտար կարճ պայմանաժամով զրամագլուխներ կը կոչուին:

Սեփական զրամագլուխին պարտականութիւնն է ձեռնարկին շահը կամ մլասը վրան առնել: Օտար զրամագլուխները ձեռնարկին շահուն և մլասին մասնակից չեն:

## 5.- ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՄԸ

## ՄԵՔԱՆԻՉՄԸ

Գիտենք որ մեքանիզմ ըսելով օրկանիզմի մը գործունէութիւնը կը հասկնանք: Առեւտրական ձեռնարկն ալ իր մեքանիզմը ունի, այսինքն իր օրկաններուն գործունէութիւնը: Առեւտրական ձեռնարկի մը օրկանները որոնք ըլլալը նախորդ բաժնին մէջ ուսումնասիրեցինք:

Առեւտրական ձեռնարկի մը մեքանիզմը երկու գետնի վրայ կ'ուսումնասիրուի:

Ա) Օրկանիք գործունէութիւն,

Բ) Ղեկավարում:

ՕՐԿԱՆԻՔ ԳՈՐԾՈՒՆԷՆԵՒԹԻՒՆ ըսելով շարունակաբար և մեքենաբար կրկնող գործունէութիւնը կը հասկնանք: Օրկանիք գործունէութեան մէջ միայն գործի ստացուածքն է որ շարժման մէջ կը դրուի: ԳՈՐԾԻ ՍՏԱՑՈՒԱԾՔԸ այնպէս ինչպէս նախորդ բաժնին մէջ տեսանք՝ կապուած և ազատ ստացուածքէն կը բազկանայ:

Անոր գործունէութիւնը հետեւեալ կերպով կ'ըլլայ: Գանձը, որով դրամ կամ դրամի վերածելի ստացուածք

կը հասկնանք, դրամ կը արամադրէ որ և է ԱՐ-  
ժէԲԻ ՄԸ ՄՈՒՏԻՅԻՆ համար: Արժէքի մը մուտքը ը-  
սելով կրնանք ապրանքի մը գնում, գրամատանց զեղ-  
չած գանձամուրհակները են. հասկնալ, Այս արժէքը  
երբ մտնէ ՄԴՆԻՖ անունը կ'ունենայ աստեղան մը  
համար: Վերջը եւք մը կ'ունենայ: Եւք մը կ'ըլլայ  
երբ ծախուի կամ վերը ըսուած գանձամուրհակը գան-  
ձուի: Ուրեմն երեք շրջանէ կ'անցնի, այսինքն մուտք,  
մթերք և եւք: Մուտքին ժամանակ գանձէն դրամ մը  
պակասած կ'ըլլայ: Այդ գումարին վրայ կ'աւելնան այդ  
երեք շրջանին ծախքերը: Այդ երեք շրջանի ծախքե-  
րը բոլոր ձիւղերու մէջ տարբեր համեմատութեամբ են,  
սակայն ամէնքն ալ նոյն ծախքերը ունին: Օրինակ՝  
վաճառական մը ապրանք կը գնէ: Այդ ապրանքին  
գնման համար կարգ մը ծախքեր կ'ընէ: Ան գնման  
համար պաշտօնեաներ բռնած կ'ըլլայ կամ մինչև որ  
ապրանքը վաճառատուն փոխադրէ գանանան ծախքեր  
ըրած կ'ըլլայ: Երբ այս ապրանքը վաճառատունը կը  
կենայ հոն հոս կարգ մը ծախքեր կ'ըլլան վաճառման  
համար: Լուսավառութեան վարձք, պաշտօնէից թոշակ,  
վտանգի կամ ապահովագրութիւն են. Նոյնպէս եւք  
մը այսինքն վաճառում մը եղած ասնն ալ փոխարժէ-  
քը մինչև գանձուի այլազան ծախքեր կ'ըլլան: Օրի-  
նակ՝ մինչև գնորդին ձեռքը հասնելուն երթեւեկի կամ  
նման ծախքեր, եթէ գանձամուրհակի մը փոխարէն  
ծախուած է անոր զեղչի գումարը են. Այսպէս ալ կը  
տեսնենք թէ երեք շրջաններու, որոնք առեւտրական  
ձեռնարկի մը գործունէութիւնը կը ներկայացնեն  
ծախքեր կ'ըլլան: Այս ծախքերը նախ գանձեն իբր  
ծախք քաջուած գումարներ են և երկրորդ կապուած

ստացուածքին ունեցած արժէքի նուազումէն (ամօրթիսըմանէն) կը բաղկանան:

Օրինակ՝ հիւսուածեղինի գործարան մը հուսկ ծախելու համար բուրդ կը գնէ և դայն հիւսել տալով կը ծախէ: Այս ծախուած ապրանքին իրեն քանիի ապրանք եղած ըլլալը հասկնալու համար նախ գանձէն, նախանիւթի գնման համար վճարուած գրամը հաշիւ կ'ընէ. և վերջը անոր գնման, մթերման, գործուելուն և վաճառման ծախքերը վրան կը գումարէ: Այս ծախքերը կամ գանձէն ծախսուած են կամ թէ ամօրթիսըմաններու փոխարժէքը կը ներկայացնեն:

Այսպէսով կ'ընդունինք թէ՛ ծախքը՝ ըլլայ գանձէն ելած, ըլլայ ամօրթիսըման, երևք գործունէութեան կը պատկանի: Արդեօք ասոր փոխարէն կրնայինք որ և է ծախքի մը ո՞ր գործունէութեան պատկանած ըլլալը հասկընալ, Այս քիչ մը դժուար և անգործնական է: Գետական տեսակէտով երբեմն ծախքերը կրնան զանազանուիլ: Եւ այս պատճառաւ ծախքերը կրնան կը բաժնենք:

ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՔԸ որ որոշ գործունէութեան մը համար չըլլար: Օրինակ՝ երբ ձեռնարկ մը գործատեղին վարձքը կը վճարէ չի կրնար գիտնալ թէ այս վարձքը արժէքի մը (ապրանք ևլն.) մուտքին, մթերքին կամ ելքին համար վճարուած է:

բ) ՄԱՍՆԱԿԻ ԾԱԽՔԵՐ, որոնք որոշ գործունէութիւններու համար կ'ըլլան և որուն պատկանելին որոշ է: Օրինակ՝ երբ ներածուած ապրանքի մը համար մաքս վճարուի կրնանք գիտնալ թէ՛ այս ծախքը, այսինքն մաքսը ապրանքի մուտքի գործունէութեան համար վճարուած է: կամ եթէ՛ ապրանք մը ապառիկ

ծախուի, փոխարէն պարտամուրհակ մը անուի և այս պարտամուրհակն ալ գրամատուհը զեղչուի, զեղչը որ ծախք մըն է, գիտենք որ ապրանքի ելքին համար եղած է:

գ) ԽԱՌՆ ԾԱԽԻԵՐ, որոնք որքան ալ որոշ գործունէութեան մը համար կ'ըլլան զժուար կամ անկարելի կ'ըլլայ զանազանել: Օրինակ՝ երբ հեռաձայնով խօսուի ապրանք դնելու համար այս ապրանքի մուտքի գործունէութեան պատկանող ծախք մըն է: Սակայն, հեռաձայնով կրնայ ուրիշ բաներու համար ևս խօսուած ըլլալ և ասոնք իրարմէ զանազանել շատ զբոսորին և անգործնական է:

Ամօրթիւ ըմամններուն ալ ո՞ր գործունէութեանց համար ըլլալին նոյն բաժանումներուն ենթակայ են:

Վերջապէս երեք գործունէութիւն կ'ըլլայ: Ասկէ վերջը ելքին (վաճառման) փոխարէն դարձեալ գրամբ գանձ կը մտնէ: Այսպէսով գանձէն ելլելով երեք գործունէութեան մէջ կը գտնուի և վերջը դարձեալ գանձ կը մտնէ: Այս գանձէն ելլելով գանձ մտնելու գործունէութիւնը առեւտրական ձեռնարկին ՇՐՋԱՆԷ կը կոչուի, որ յաճախ ճիրօ կ'ըսուի:

Նախապէս գանձէն ելած գրամին և շրջան մը ընելէ վերջ դարձեալ գանձ մտած գրամին մէջ տարբերութիւն մը ըլլալ հարկ է: Այդ եթէ աւելի է ան ՇՐՋԱՆԻՆ ՇԱՀՆ է:

Այս շահին մէկ մասը գանձը դարձեալ կապուած ստացուածքին կը յատկացնէ նախապէս անկէ պակասած ըլլալուն համար: Մնացեալը ձեռնարկին տիրոջ կը յանձնէ իբր զուտ շահ:

Այսպէսով դարձեալ նախկին վիճակը կ'ստանայ,

դարձեալ գործունէութեան մէջ կը մտնէ, այսինքն մուտք, միջերք և ելք դարձեալ դրամ կ'ստանայ շրջան մը եւս ըրած կ'ըլլայ և այսպէսով կ'ընթանայ:

Ահա այս է օրկանիք գործունէութիւնը:

Մեր 3 քիւ կրաքիւր օրկանիք գործունէութիւնը ներկայացնող գիծեր ունի:

Օրկանիք գործունէութեան մէջ շրջանը որքան արագ ըլլայ այնքան շահաւոր կ'ըլլայ: Շահը կ'աւելնայ շրջանի արագութեան հետ: Երբ շրջան գլուխ 1000 շահուի և երբ 10 անգամ շրջան ընէ, 10000ի շահ մը կ'ըլլայ: Ամէն մէկ շրջանի վրայ բնօրոյ ընդհանուր ծախքի և ամօրթիւրմանի բաժինը կը նուազի ևն:

Ասոնք ընդանուր առումով բոլոր ձեռնարկներու համար գոյութիւն ունին, սակայն բոլոր ձեռնարկները զանազան տեսակէտներու մէջ իրարմէ կը տարբերին: Այս տարբերութեանց մասին յետագայ գլխուն խուն մէջ պիտի ուսումնասիրենք:

Ամէն առեւտրական ձեռնարկ այս օրկանիք գործունէութեամբն է որ պարտականութիւնը կը լրացնէ այսինքն կը շահի: Այս առեւտրական ձեռնարկի մը մեքենան է:

Սակայն, այս մեքենան պէտք է միշտ օրկանիք գործունէութիւնը կատարէ, այսինքն կապուած և շրջող ստացուածքին ներքեւ եղած ըլլայ: Այս գործունէութեան մէջ այդ տեսակ ստացուածքներու առանց խումբի գումարի փոփոխութեան գործելնին եղբակացուինք:

Ըսինք թէ շրջանէ մը վերջ կապուած և ազատ ստացուածքները զարձեալ սկզբնաւորութեան կացութիւնը կ'առնեն: Այսպէսով կը տեսնենք թէ օրկանիք գործունէութիւն ըսելով առեւտրական ձեռնարկի մը

մեքենային բանիլը պիտի հասկնանք: Սակայն, այս մեքենան չի կրնար ստանց հոգալու բանիլ: Չեռնարկի մը կազմը, տնտեսական կացութիւնը, շահաբերութիւնը ևլն. յաճախ արգելք կը հանդիսանան անոր գործունէութեան: Այս պատճառաւ որոշ աշխատանք մը, ծրագիր մը պէտք է՝ որ ան միշտ գործէ: Այս աշխատանքը ՂԵԿԱՎԱՐՈՒՄ կը կոչուի:

Ղեկավարումը օրկանիք գործունէութեան պէս կապուած և շրջող ստացուածքին գործունէութեան մէջ չի կայանար, այլ անոնց նպատակայարմար մէկ գործունէութիւն մը կ'ապառովէ: Օրինակ, վաճառական մը շրջող ստացուածք մը կ'ունենայ, և այդ գանձ մը կը պարունակէ: Ըստ օրկանիք գործունէութեան գանձէն զրամը կ'ելլէ երեք գործողութենէ, այսինքն շրջանէ մը վերջը աւելիով մը, այսինքն շահով, դարձեալ գանձ կը մտնէ: Սակայն, երբ որ եւ է կերպով գանձը ուրիշ վճարման մը պատճառաւ նուազած ըլլայ այս արգելք կը հանդիսանայ օրկանիք գործունէութեան: Նոյնպէս եթէ ապրանքը անվաճառ մնայ կամ փոխարժէքը երկար պայմանաժամէ մը վերջը գանձուելիք ըլլայ գանձը զրամ չունենար նոր շրջան մը ընելու: Ասկէ զատ կրնայ ըլլալ որ ապրանքները սըղեն կամ բարձր ապրանքի միջերք մը ունենալու ստիպողականութեան տակ գտնուի: Այսպիսի պարագաներու տակ ղեկավարում մը պէտք է: Այսինքն որ եւ է կերպով շրջող ստացուածքը աւելցնել որպէս զի օրկանիք գործունէութիւնը ապահովուի:

Ղեկավարումը չորս գեանի վրայ կ'ըլլայ որոնք հետեւեալներն են.

ա) Առաձգականութիւն:

- բ) Լիքիաթիթէ:  
 գ) Շահաբերութիւն:  
 դ) Շահի յատկացում:  
 ե) Արմատաւորում:

ԱՌԱՋԳԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ (*élasticité*) ըսելով որ եւ է անւարական ձեռնարկի մը շրջող ստացուածքին փոփոխութիւն կրելը կը հասկնանք: Այսինքն աւելնալը կամ պակսիլը:

Շրջող ստացուածքը կ'աւելնայ կամայ կամ աւաճայ: Կամայ կ'աւելնայ երբ ձեռնարկը շահաբերութեան նպատակաւ մը որոշէ աւելի լայն ստացուածքով մը գործել: Օրինակ՝ բարձր ապրանքի մթերք մը ունենալ և որուն հետեւանքով ալ դարձեալ բնակարանէն բարձր պահանջ ու բարձր գանձի գումար մը գոյութիւն կ'ունենայ: Ակամայ կ'ըլլայ այն ատեն երբ ձեռնարկը կացութեան պատճառաւ բարձր շրջող ստացրածք մը ունենալու ստիպողականութեան առջև գտնուի: Այսպիսի ստիպողականութեան մը առջև կը գտնուի այն ատեն երբ պահանջները չեն գանձուիր, նախկին ապրանքի մթերքը չի ծախուիր և որով նոր ապրանք գնուելու պէտք կ'ըլլայ: Այսպիսով կ'աւելնայ շրջող ստացուածքը:

Ատոր փոխարէն կրնայ ալ պակսիլ կամայ աւաճայ: Կամայ՝ երբ ձեռնարկ մը քիչ գործել կ'ուզէ, կը պակսեցնէ իր շրջող ստացուածքը: Ակամայ՝ երբ պարագաները նուազ շրջող ստացուածք մը ունենալ կը ստիպեն:

Առաձգականութիւնը քանի որ շրջող ստացուածքի գումարը կը փոխէ, պէտք է որ փոխած ըլլայ նաեւ կացութեան կշռին ուրիշ մէկ մասը:



Այս երբեմն փոխած կ'ըլլայ ազատ ստացուածքը: Այսինքն եթէ՝ շրջող ստացուածքը բարձրացուցած է նուազած կ'ըլլայ ազատ ստացուածքը: Կամ թէ, ինչ որ յաճախ կ'ըլլայ, շրջող ստացուածքը շնորհիւ օտար գրամագլուխին բարձրացած կ'ըլլայ:

Նոյնպէս եթէ շրջող ստացուածքը նուազած է, կրնայ ըլլալ որ ազատ ստացուածքը աւելցած ըլլայ, կամ թէ՝ օտար գրամագլուխը նուազած ըլլայ:

Երբ առածգականութիւնը օտար գրամագլուխի փոփոխութեամբ կ'ըլլայ պէտք է նաեւ ուշադիր ըլլալ թէ՝ օտարին գրամագլուխը ապահովուած է, այսինքն ան իր պահանջը օրին պիտի կարենայ ստանալ:

Այս ուղղութեամբ գործունէութիւնը ԼիթիՏիթէ կը կոչուի:

Սաեւտրական ձեռնարկի մը մեքանիզմին նպատակը շահ է: Այս նպատակին իրագործումը անոր ՇԱՀԱՔԵՐՈՒԹԻՒՆՆ է:

Շահաբերութիւնը կ'որոշուի, ինչպէս գիտենք, արդիւնքի կշռին վրայէն: Ան սարքերութիւնն է գանձէն նախապէս ելք եղած գրամներուն փոխարէն եղած մուտքերուն: Այսինքն արդիւնքը օրկանիք գործունէութեան:

Շահաբերութեան համեմատութիւնը զանազան առարկաներով կ'որոշուի: Երբ անձնական ձեռնարկ մըն է առեւտրականը իր շահը իր գրամագլուխին հետ կը բախտատէ և այսպէսով անոր համեմատութիւնը կ'որոշէ:

Մեր 1 քիւ Ֆորմիւլը անձնական ձեռնարկի մը հաշուեկէիւր կը ներկայացնէ: Հոն շահաբերութիւնը 3 առ հարիւր ըլլալը կը տեսնենք:  $(2089 \times 100 = 208.900:63.589 = 3)$ :

Անանուն ընկերութեանց մէջ եւս շահաբերութիւնը նոյն ձեւով, այսինքն ձեռնարկին գրամագլուխին համեմատութեամբ որոշել հարկ է: Սակայն, անանուն ընկերութեան մը բաժնետէրերը իրենց բաժնեթուղթերը անուանական գրամագլուխէն աւելի կամ նուազ արժէքով մը ձեռք ձգած կ'ըլլան և այս պատճառաւ անգամներ բաժնեթուղթերու օրուան գինին համեմատութեան վրայ կ'որոշեն: Այս վերջինը աւելի ՀԱՍՈՒԹԱԲԵՐՈՒԹԻՒՆ (rendement) ըսել պէտք է:

Շահը բնականէն եթէ քաշուած չէ, սեփական գրամագլուխը բարձրացուցած կ'ըլլայ: Այս բարձրացումով կամ օտար գրամագլուխը նուազած կ'ըլլայ կամ թէ ստացուածքը բարձրացած կ'ըլլայ:

Եթէ շրջող ստացուածքը աւելցած է, կը նշանակէ թէ՛ ձեռնարկը շահուն չնորհիւ ընդլայնած է: Այսպէս շահը բանի մը կը յատկացուի, ինչ որ ՇՍՀՈՒ ՅԱՏԿԱՅՈՒՄ կը կոչուի: Կրնայ ըլլալ որ քաշուի կամ կապուած և շրջող ստացուածքներուն բարձրացման յատկացուի:

Առեւտրական ձեռնարկին մեքանիզմը արմատաւոր ըլլալու է:

ԱՐՄԱՏՍՈՒՈՐՈՒՄ (rationalisation) ըսելով սա պիտի հակնանք թէ՛ ձեռնարկը աւելի շահելու և նուազ ծախսելու սկզբունքը գիտակցաբար կիրարկած պէտք է ըլլայ: Կը յաջողի կամ ոչ, այդ տարբեր հարց է:

Արմատաւոր առեւտրական ձեռնարկի մը մէջ վըճարուած տոկոսի համեմատութիւնը անոր շահաբերութենէն աւելի ըլլալու չէ:

Այսպէս կարգ մը ուրիշ կանոններ, որոնք զանազան ձիւղերու մէջ պիտի ուսումնասիրենք:

Ղեկավարման ուղղութիւնը երեք տեսակի կը բաժնուի.

ա) եղանակի ղեկավարում:

բ) Պատահականութեան (*conjecture*) ղեկավարում:

գ) Կազմի փոփոխութիւն:

ԵՂԱՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ կարգ մը ձեռնարկներու մէջ կ'ըլլայ, որոնք զանազան եղանակներու մէջ տարբեր ոգեւորութեան մէջ կը դառնուին և այս պատճառաւ կարգ մը միջոցներ ձեռք կ'առնուին: Օրինակ՝ բրդեղէնի վրայ աշխատող բոլոր ձեռնարկները ձմեռը գործի լծուած կը տեսնենք: Անոնք ձմեռը ընդլայնուած կ'ըլլան: Ասոր փոխարէն ալ երբեմն ձեռնարկներ ձմեռը բնաւ գործունէութիւն մը չեն ունենար: Այս առաձգականութեան դետնի վրայի եղանակային ղեկավարումն է: Լիքիտիթէն ալ իր եղանակային ղեկավարումը ունի: Օրինակ՝ երբեմն ձեռնարկները տարւոյն որոշ մէկ եղանակին մէջ շատ վճարում կ'ունենան: Նոյնպէս շահաբերութեան, շահի բաշխման համար ևս եղանակային ղեկավարումներ կ'ըլլան:

Ասոր փոխարէն կայ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ:

Հոս ձեռնարկին ղեկավարումը ոչ թէ՛ եղանակային պարագաները նկատի առնելով կ'ըլլայ, այլ առնտեսական կացութենէն յառաջ կուգայ: Օրինակ՝ երբ ձեռնարկ մը նախատեսէ թէ՛ ապրանքները բարձրացում մը պիտի կրեն, բարձր ապրանքի միջերջ մը ունենալ կ'ուզէ: Կամ հակառակը՝ եթէ ձեռնարկը տագնապ մը գուշակէ անկէ կզգիտնալու համար կարգ մը միջոցներու կը դիմէ:

Ղեկավարումը երբեմն կԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ համար կ'ըլլայ: Օրինակ՝ ձեռնարկ մը իր շահի բաշխման մէջ այնպիսի ղեկավարում մը կ'ունենայ, որուն շահին մեծ մասը ձեռնարկին մէջ մնալով սեփական գրամագլուխի համեմատութիւնը ընդհանուր գրամագլուխի մէջ կը բարձրանայ: Այսպէսով օտար գրամագլուխի համեմատութիւնը կը նուազի և կազմը փոխուած կ'ըլլայ:

Պատահականութեան ղեկավարումը և կազմի փոփոխութիւնը յեազգայ բաժիններուն մէջ պիտի ուսումնասիրենք:

Մեր 3 թիւ կրաֆիքը ղեկավարումը ցուցնող գիծերուն:

## 6.- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ

### ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Գիտենք որ անտեսութեան մէջ արտադրիչ և ըսպառիչ մը գոյութիւն ունի: Կ'արտադրուի սպառելու համար: Առեւտրական ձեռնարկները միջնորդներ են այս երկուքին միջև:

Եթէ անտեսութեան մը մէջ արտադրութիւնը և սպառումը իրարու հաւասար ըլլան, ՆՈՐՄԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ մը գոյութիւն ունեցած կ'ըլլայ: Այսպիսի պարագայի մը տակ առեւտրական ձեռնարկի մը բոլոր գործունէութիւնը յաջող ընթացք մը կ'ունենայ որովհետեւ այդ ձեռնարկին վարիչին բոլոր հաշիւները ճիշդ կ'եւլեն:

Սակայն, յաճախ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՆՈՐՄԱԼ ԿԱՑՈՒԹԻՒՆ մը գոյութիւն կ'ունենայ: Այս յառաջ կուգայ երբ արտադրութիւնը և սպառումը իրարու հաւասար համեմատութեամբ չըլլան:

Այս աննորմալ կացութիւնը իր ազդեցութիւնը կ'ունենայ առեւտրական ձեռնարկի մը վրայ և այս աննորմալ կացութիւնն այ երկու կողմ ունի՝ ՆՊԱՍՏԱԻՈՐ և ԱՆՆՊԱՍՏ:

Եթէ նպաստաւոր է կացութիւնը ձեռնարկը բարեկրութեան շրջան մը կ'անցընէ: Եթէ աննպաստ է կացութիւնը առեւտրական ձեռնարկը տագնապալի վիճակի մը մէջ կը գտնուի:

Այս աննորմալ կացութիւններուն գոյութեան սահմանները երեք են.

ա) Կրնայ ճիւղի ՄԸ ԱՆՆՈՐՄԱԼ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ըլլալ: Երբ օրինակ՝ նորոյթի մը պատճառաւ որ եւ է արտադրութիւն մը շատ սպառի, այդ ճիւղին վրայ գործող բոլոր ձեռնարկները բարեբերութեան շրջան մը կ'անցընեն:

բ) Կրնայ ԱԶԳՎՅԻՆ ըլլալ, այսինքն պետութեան մը ներքեւ գտնուող բոլոր ձեռնարկներուն վրայ գոյութիւն ունենալ: Երբ օրինակ՝ օր եւ է կերպով երկիր մը ազգատանայ, այս պատճառաւ ժողովուրդին

գնման կարողութիւնը նուազի և բոլոր գործող ձեռնարկները տագնապալի շրջան մը անցնեն:

գ) Կրնայ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ըլլալ երբ աննորմալ կացութիւնը նպաստաւոր կամ աննպաստ բոլոր երկիրներու մէջ գոյութիւն ունենայ: Օրինակ՝ այսօր աննորմալ համաշխարհային տնտեսական աննպաստ կացութեան մը մէջ կը գտնուինք երբ ամէն կողմ տագնապալ պատած է:

Աննորմալ կացութեան մը վախճանը գիտնալու համար զանոնք երկուքի կը բաժնենք.

ա) ՔՕՆԺՕՆԲԹԻԻԲԷԼ կ'ըլլան երբ աննորմալ կացութիւնները միայն որոշ ստենի մը համար գոյութիւն ունենան: Օրինակ՝ երբ զրամատուները իրենց վարկը դադրեցնեն, բոլոր ձեռնարկները նեղութեան կը մատնուին: Այս սակայն անցողակի է, որովհետեւ զարձեռալ վստահութիւնը օր մը պիտի վերահաստատուի:

բ) ՍԹԻԻԲԻԲԹԻԻԲԷԼ կ'ըլլան երբ անոնք մնացուն բնոյթ մը ունենան: Օրինակ՝ երբ բազմամարդ քաղաք մը իր բնակիչներէն շատերը կորսնցնէ, այդ քաղաքին մէջի հանրակառքի սպասաւորութիւնը կատարող ընկերութիւնը սթիւրիւքթիւրէլ տագնապալի մը մէջ կը գտնուի, որովհետեւ տեսականապէս նոյն դիրքը պիտի ունենայ:

Այս բոլորը գիտնալ հարկաւոր է երբ ձեռնարկի մը վիճակը գիտնալ ուզենք: Ասոնք կրնայինք հաշուեկշիռ մը լուծած ժամանակնիս անոր վրայէն ալ գիտնալ: Սակայն այս ընկու պարտաւոր պիտի չըլլայինք, որովհետեւ հաշուեկշիռ մը լուծած ժամանակնիս, ինչպէս ըսինք, հաշուեկշիռներու լուծման

նախապայմանները կը կազմէ: Հաշուեկշիռ լուծողը պէտք է գիտնայ թէ տնտեսական կացութիւնը ի՞նչ է:

Սակայն երկու գլխաւոր բան կայ որոնք հաշուեկշիռն զրայէն հասկնալ հարկ է:

Ա) Նախատեսութեան պարագան:

Բ) Կացութեան ազդեցութեան պարագան:

Նախատեսութեան մէջ հասկնալ կ'ուզէինք թէ ձեռնարկը աննորմալ կացութիւնը ինչ աստիճան նախատեսած է: Այս ալ իր կարգին երեքի կը բաժնուի.

ա) Նախատեսուած.

բ) Սխալ նախատեսուած.

գ) Ոչ նախատեսուած:

Այս հաշուեկշիռն զրայէն գիտնալ կարելի կ'ըլլայ: Օրինակ՝ երբ ձեռնարկ մը տազնապի մը մէջ ջնջին ապրանքի մթերք մը ունենայ կը նշանակէ թէ ձեռնարկը ապրանքներու գիներուն անկումը նախատեսած է եւլն.: Տակաւին կարգ մը ուրիշ պարագաներ որոնք զանազան ճիւղերու մէջ կը տարբերին:

Եթէ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ է առեւտրական ձեռնարկը կը յաջողի և բարեբեր չըջան մը կը բոլորէ: Այսինքն եթէ նպատաւոր կացութիւն մ'է շնորհիւ իր նախատեսութեան կը յաջողի առաւել օգուտը քաղելու և եթէ տազնապ մ'է կը կարողանայ անկէ կղզիանալ:

ՍԽԱԼ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ տնտեսական կացութիւնը ձեռնարկի մը գործունէութիւնը բոլորովին անյաջողութեան կը մատնէ: Օրինակ՝ երբ բարելաւում մը այսինքն գիներու բարձրացում մը նախատեսուելով բարձր մթերք մը կ'առնուի և եթէ այս չըլլայ, ձեռնարկը անյաջողութեան կը մատնուի. նախ դժուար

կարող կ'ըլլայ իր մթերքը ծախելու և ան ալ շատ քնքին գինով մը: Կամ յաճախ կը պատահի որ ձեռնարկի մը վարիչը տագնապ նախատեսելով գործունէութեան մէջ մտնել չուզէ: Եւ եթէ նախատեսուած տագնապը գոյացած չըլլայ, այդ ձեռնարկը կը զրկուի այդ շրջանի շահէն և այդ շահը ուրիշներու տուած կ'ըլլայ:

Ասոր փոխարէն կայ նաև ՈՉ ՆՍ.ԽԱՏԵՍՈՒՎԱԾ տնտեսական կացութիւնը: Այս այն ատեն կ'ըլլայ երբ առեւտրական ձեռնարկ մը ոչ բարեկաւում մը ոչ ալ տագնապ մը կը նախատեսէ և իբր նորմալ ժամանակ մը իր գործունէութիւնը կը շարունակէ:

Այսպիսի պարագայի մը՝ երբ բարեկաւում մը յառաջ գայ կացութեան մէջ ձեռնարկը կը զրկուի բարձր շահէ մը: Եւ եթէ տագնապ մը չի նախատեսէ, և իբր նորմալ ժամանակ գործէ՝ շատ աննպաստ հետեւանքներ կ'ունենայ:

Նախատեսութիւնը մաս կը կազմէ ղեկավարման որուն վրայօք նախորդ մեքանիզմի բաժնին մէջ ուսումնասիրութիւններ ըրած էինք:

Այս պարագան որոշելէ վերջ կ'անցնինք երկրորդին, որով գիտնալ կ'ուզենք թէ՛ աննորմալ տնտեսական կացութիւնը ձեռնարկին վրայ ի՞նչ աստիճան ազդած է:

ԱՆՆՈՐՄԱԼ տնտեսական կացութեան մը ձեռնարկին վրայ ունեցած ազդեցութիւնը երեք կրնայ ըլլալ.

- ա) Շահաբերութիւնը կը փոխէ:
- բ) Կացութիւնը                   »       »
- գ) Կազմը                           »       »



ՇԱՀԱՖԵՐՈՒԹԻՒՆԸ, ՓՈՒՍՏԻՆԸ կ'ըլլայ երբ ձեռնարկին շահը նորմալ տարիներու շահէն տարրեր ըլլայ: Այսինքն նպաստաւոր կացութեան մը մէջ աւելի շահ մը սպասուուած կ'ըլլայ, կամ աննպաստ կացութեան մը մէջ նուազ շահ մը և կամ փաստ մը գոյացած կ'ըլլայ: Օրինակ՝ վաճառական մը գիներու բարձրացման պատճառաւ իր աժան գնած ապրանքները սուզի ծախելու հնարաւորութիւնը կ'ունենայ: Այս տուակը շահ մըն է որ յառաջ եկած է՝ նպաստաւոր անտեսական կացութենէ մը: Եթէ փաստ մըն է՝ հակառակը պատահած կ'ըլլայ:

Այս կատարելագոյն արդիւնքի կշիռն վրայէն գիտնալու հնարը կայ, քանի որ ան՝ ձեռնարկի մը գործունէութեան արդիւնքը՝ այսինքն շահաբերութիւնն ի յայտ կը բերէ:

Ձեռնարկին ԿՍՑՈՒԹԻՒՆԸ, ՓՈՒՍՏԻՆԸ կ'ըլլայ երբ ձեռնարկը անտեսական աննորմալ կացութեան մը մէջ կարգ մը փոփոխութիւններու տեղի տայ իր օրինակներուն մէջ, որոնք կրնան նպաստաւոր կամ աննշտաւոր եղած ըլլալ: Օրինակ՝ ձեռնարկը ապրիլի մը մէջ կարող չըլլալ իր ապրանքները ծախելու և կ'ըստիպուի դարձեալ ապրանք գնելու, որպէս զի իր շահէն չի գրկուի: Այսպիսի քայլ մը ձեռնարկին կացութիւնը փոխած կ'ըլլայ, որովհետեւ ապրանքը գնուած միջոցին կամ գրամ վճարուած է կամ թէ ապառիկ գնուած է:

Առաջինը ձեռնարկին գանձը տկարացուցած կ'ըլլայ, երկրորդը ձեռնարկին կարճ պայմանաժամով պարտքը բարձրացուցած կ'ըլլայ: Այս երկու պարագաներուն մէջ ալ ձեռնարկին լիքիախիթէն փաստուած կ'ըլլայ: Այս օրինակին մէջ ձեռնարկը աննպաստ կացութեան

մը մատնուած է, լաւ կացութեան մը մէջ պիտի գտնուէր եթէ հակառակը ըլլար:

Կացութեան փոփոխութիւնը կրնանք գիտնալ կացութեան կշռին վրայէն, երբ ան բախդատական կամ վիճակագրական գրութեամբ լուծուի:

Չեռնարկի մը կացութեան մէջ կրած փոփոխութիւնը միայն անտեսական կացութեան աննորմալ ժամանակին կը պատկանի: Երբ նորմալ ժամանակները վերագրանան ձեռնարկը պէտք է որ իր սովորական կացութիւնը վերստանայ: Եթէ այս շրջայ կը նշանակէ թէ ձեռնարկը իր կազմը փոխած է:

ԿԱԶՄԻ ՓՈՓՈՒՅՈՒԹԻՒՆԸ, ինչպէս ըսինք, բոլորովին կը տարբերի կացութեան փոփոխութենէն:

Կազմը փոխուած կ'ըլլայ երբ ձեռնարկը իր ըստացուածքը ի գին սեփական գրամագլուխի նուազեցուցած է, մեծ մնասի մը պատճառաւ: Այս տկար ելմտական կազմ մը յառաջ բերած կ'ըլլայ: Կամ թէ ձեռնարկի մը կապուած ստացուածքը նուազած աւտոր փոխարէն շրջող ստացուածքը աւելցած կ'ըլլայ: Այս ալ առողջ ստացուածքի կազմը յառաջ բերած կ'ըլլայ: Եթէ մեծ շահու մը պատճառաւ սեփական գրամագլուխի համեմատութիւնը բարձրանայ, այս ալ առողջ գրամագլուխի կազմ մը կ'ստեղծէ:

Այսպէս կը տեսնենք թէ՛ անտեսական կացութիւնը կազմը կրնայ ի նպաստ կամ աննպաստ վիճակի մը հասցուցած ըլլալ:

Առնենք մեր 8 եւ 9 բիւ Ֆորմիւլները: Ասոնց երկուքին ալ գ.երը իբր կազմի տուեալ բնորոնած էին քանի որ նորմալ ժամանակի մը կը պահանջին:

Այս երկու Ֆորմիւլները երկու տարբեր ձեռնարկներ

րու կը պատկանին որոնք նոյն նիւղին վրայ կ'աշխատին: Այս երկուքին ալ աննորմալ կացութեան մասնուելին կը տեսնենք: Կ'երեւի նիւղի մը վրայ սագնապ մը գոյութիւն ունեցած է:

8 թիւ Գօրմիլի ձեռնարկին շրջող ստացուածք դ.ի վրայ կ'երեւի սագնապին (գինեռու անկման) պատճառաւ 2000ի վնաս մը յառաջ բերած է. քանի որ մեկ կողմանէ շրջող ստացուածքին 2000 եւ սեփական դրամագրութիւն ալ նոյն գումարով նուազիլը կը տեսնենք, նախորդ հաշուեկէտին հետ բախտասած միջոցնիս այս ձեռնարկին էլմտական կացութիւնը, այսինքն լիքիսիքէն փոխուած է, որովհետեւ շրջող ստացուածքին օտար դրամագրութիւն հետ ունեցած համեմատութիւնը 55:25էն 50:28ի իջած է: Շահաբերութիւնը եւս փոխուած է, որովհետեւ ձեռնարկը վնասած է, սակայն կազմը փոխած է չենք կրնար ըսել, որովհետեւ ձեռնարկը աննորմալ տնտեսական կացութեան մը մէջ կը գտնուի:

Երբ նորմալ ժամանակը կը վերադառնայ (ե) ձեռնարկը իր նախկին կացութեան կը տիրանայ:

Գալով 9 թիւ Գօրմիլիին, ան ալ նոյն սագնապին մասնուած է: Ապրանքներու գինեռու անկումը 4000ի վնաս մը պատճառած է: Հոս սակայն աւելի գեշ էլմտական կացութիւն մը յառաջ եկած է, որովհետեւ շրջող ստացուածքի համեմատութիւնը օտար դրամագրութիւններուն հետ 56:81էն իջած է 50:96ի: Ասկէ զատ ալ օտար կարն եւ երկար պայմանաժամով դրամագրութիւններու համեմատութիւնը 26:55էն 33:63 բարձրացած է:

Հոս որքան որ կացութիւնը գեշ է կարող չենք ըսելու թէ ձեռնարկին կազմը փոխուած է որովհետեւ այդ կացութիւնը արդէն աննորմալ ժամանակի մը կը պատ-

կանի: Երբ սակայն Ե.ը կուգայ կը տեսնենք թէ՛ ձեռնարկին կացութիւնը ալ աւելի վատարացուցած է, որովհետեւ անոր կարն պայմանաւանով պարտերը 33<sup>0</sup>/<sub>0</sub>էն 48<sup>0</sup>/<sub>0</sub> բարձրացած են:

Հոս կազմը փոխուած կը տեսնենք, որովհետեւ ձեռնարկը իր օրկաններուն պարտականութիւնները հիմնովին փոխած է եւ այս ալ այնպիսի ժամանակ մը երբ նորմալ տնտեսական կացութիւն մը գոյութիւն ունի, ինչ որ մեզ 8 թիւ Ֆօրմիւլին Ե.ը կը ցուցնէ: Ձեռնարկին կազմը շատ սկարացած կը տեսնենք:

Այս երկու օրինակները կը ցուցնեն թէ շահաբերութեան, կացութեան եւ կազմի փոփոխութեան նշանակութիւնները ինչ են:

*Տնտեսական կացութեան ազդեցութիւնը կախեալ է ձեռնարկին կազմէն և այդ ձեռնարկին վարիչին նախատեսութենէն:*

*Տնտեսական կացութենէն մէնէն շատ կ'ազդուին անկանոն կազմով ձեռնարկները, որովհետեւ անոնք արդէն իրենց շահաբերութիւնը տնտեսական նպաստաւոր կացութեան մը վրայ հիմնած են: Օրինակ՝ արժեթուղթերու վրայ գործող շահադիտական ձեռնարկ մը, որ անկանոն կազմով ձեռնարկ մը կը նկատուի, շահը հիմնուած է արդէն գիներու բարձրացումին վրայ: Եթէ այս ձիշտ նախատեսուած է և գիները բարձրացած են նպաստաւոր տնտեսական կացութիւնը շատ լաւ վիճակի մը մէջ կը դնէ ձեռնարկը: Երբ սակայն, սըխալ նախատեսուած տնտեսական կացութիւն մը ըստեղծուի ձեռնարկը շատ մեծ վնասներու կ'ենթարկուի: Երբ աննորմալ տնտեսական նպաստաւոր կացութիւնը ձեռնարկը բարեբերութեան մէջ կը ձգէ, այս ալ բնա-*

կանաբար բարձրացուցած կ'ըլլայ ձեռնարկին շահաբերութիւնը:

Կրնայ ըլլալ որ ան շատ բարձր շահ մը ապահոված ըլլայ, սակայն խնդիր է թէ ձեռնարկը այս շահը ինչի՞ պիտի յատկացնէ:

Այս պարագան, այսինքն շահի յատկացումը, որ ղեկավարման մաս կը կազմէր՝ ուսումնասիրած էինք մեքանիզմի բաժնին մէջ: Կամ այն է թէ՛ ձեռնարկը շահը կը բաշխէ կամ թէ իր գանձը աւելի զօրացնելու կը յատկացնէ: Շահի յատկացման մէջ երբ ձեռնարկէն քաշուիլը ուզուի պէտք է նկատի առնել թէ՛ ձեռնարկը կրնա՞յ վճարել առանց իր լիքիտիթէն փաստելու, որովհետեւ շատ անդամներ շահ մը պոյացած կ'ըլլայ, սակայն շահը ձեռնարկին գանձը բարձրացուցած չըլլար: Այս նկատի առնուելէ վերջ սա եւս նկատի առնել պէտք է թէ ձեռնարկէն քաշուած շահի համեմատութիւնը ամէն տարի փոփոխութեան մը չենթարկուի:

Անձնական ձեռնարկները այս պարագան նկատի առնելով իրենց անձնական ծախքերուն զբամները կը քաշեն: Անանուն ընկերութիւնները եւս կ'ուզեն որ ամէն տարի իրենց շահաբաժնի համեմատութիւնը չի փոխեն, այսինքն տարի մը 5%, ուրիշ տարի մը 20%, երրորդ տարին 10% չի վճարեն: Այս անանուն ընկերութեան ՇԱՀԱՖԱԺՆԻ ՔՍՂԱՔՍԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը կազմէ:

Երբ անտեսական աննորմալ կացութիւնը աննըպաստ ըլլայ առեւտրական ձեռնարկները տազնապալի չըջան մը կ'անցընեն: Եթէ ձեռնարկը տազնապալը գուշակած է և կրցած է անկէ կղզիանալ, ան միայն նուազ շահաբեր չըջան մը կը բոլորէ: Երբ սակայն,

տագնապը սխալ կամ ոչ նախատեսուած հանգամանք մը ունի այդ բոլորովին աննպաստ հետեւանքներ կ'ունենայ: Ձեռնարկը շատ դժուարաւ կարող կ'ըլլայ անոր դիմադրելու: Հոս պէտք է նկատի առնել անոր կազմը: Եթէ կազմը անկանոն կամ տկար եղած ըլլայ, բարձր տագնապ մը զայն կը փլցնէ: Եթէ սովորական կազմ մը ունի ձեռնարկը կրնայ միայն այնպիսի տագնապներու տոկալ որոնք անցողակի՝ այսինքն քօնօնքթիւրէլ են:

Հոս պէտք է նկատի առնել սովորական կազմով ձեռնարկի մը դիմադրական կարողութիւնը և տագնապին ուժգնութիւնը: Եթէ ձեռնարկը կարող ըլլայ տոկալ տագնապին և զայն անցընէ, կը նշանակէ թէ ան դիմադրական կարողութիւն մը ունեցած է: Յաճախ ալ կը պատահի որ տագնապը ձեռնարկին դիմադրական կարողութենէն աւելի ուժգին ըլլայ:

Առողջ կազմով ձեռնարկները տագնապներու մէջ շատ ազետալի կացութեան մը մէջ չեն դառնուիր: Սակայն, անոնք աննպաստ շահաբերութիւն մը կ'ունենան մինչև որ տագնապը անցնի:

Եթէ տագնապը սթրիւքթիւրէլ հանգամանք մը ունի անոնք շատ անգամ իրենց դործունէութիւնը կը դադրեցնեն և հաշուեյարգարի մը կը ձեռնարկեն: Հաշուեյարգարը կրնայ նպաստաւոր կամ աննպաստ ըլլալ ըստ կացութեան, ղեկավարման ևլն. որուն վրայօք պատկան բաժնին մէջ պիտի ուսումնասիրենք:

Տագնապները շատ անգամներ ձեռնարկները այնպիսի վիճակի մը մէջ կը ձգեն ուր կարուկ միջոցներ ձեռք առնել ստիպողական կը դառնայ: Կամ այն է թէ

ձեռնարկը անշահաբեր դառնալուն համար հաշուեյարդարի մը ձեռնարկէ: Այս սակայն երբեմն կարելի չըլլար, երբեմն չուզուիր գործէ դադրել և այս պատճառաւ զանազան միջոցներու կը դիմուի: Ասոնց զըլխաւորներն են՝ վերակենդանացում, ձուլում, սնանկութիւն և ըն. որոնք մեր զրքին այս գլխուն յետագայ բաժինները կը կազմեն:

Առնենք մեր 10 քիւ Ֆորմիլը: Այս ինչպէս յետագայ գլուխը մեզ պիտի ծանօթացնէ վանառասան մը հաշուեկէիւն և որ վիճակագրական դրութեամբ պատասխանուած է: Զեռնարկը անանուն բնկերութիւն մըն է:

Առաջին սարին նորմալ սարի մըն է: Արդիւնքի կեռին վրայ կը տեսնենք թէ՛ ձեռնարկը 41.6 հազարի շահ մը բրած է և 1.7 հազարի շահ մ'ալ նախկին սարուրնէ մնացած է: Այս երկուքի միացած (43.3) կացութեան կեռին մեջ դրամագլուխին սակը կը տեսնենք:

Զեռնարկը կ'որոշէ իր բաժանորդներուն 10% շահաբաժին մը վճարել: Այս որ 400 հազարի դրամագլուխին վրայէն 40 հազար կ'ընէր վճարուած է: Այս կը գիտնանք երբ յաջորդ սարին շահը՝ 43.3 հազարը 3.3 հազարի իջած տեսնենք կացութեան կեռին վրայ: Հոս ձեռնարկը շահի բաշխման մեջ լաւ դեկավարում մը ունեցած չէ որովհետեւ այս վճարուած դրամը ելած է արդէն այլ պատճառներով սկարացած գանձէն:

Երկրորդ սարին սազնապի մը սարի է: Զեռնարկը կամ սազնապը նախատեսած չէ կամ թէ սխալ նախատեսած. այսինքն նպատակնոր տեսած է: Երկրորդը աւելի հաւանական է քանի որ ձեռնարկին գործունեութիւնը բնդայնած կը տեսնենք, հակառակ որ հաշուեկեռին

վրայ ստացուածքներուն խումբերը զանազանուած չեն: Ապրանքները 230 հազարէն 443 հազարի բարձրացած են պահանջներն ալ 55 հազարէն 78 հազարի: Ասոր փոխարէն զանձը նուազած է քանի որ սնունդի դրամը եւ դրամասուններէ պահանջը 117 հազարէն 13 հազար իջած կը տեսնենք: Ասոր փոխարէն պարտավորեալները 137.1 հազարէն 243 հազարի բարձրացած են եւ ասկէ զատ ալ դրամասանց պարտք մը գոյացած է որ է 155.5 հազար: Այս բոլորովին աննպաստ վիճակի մը մեջ ձգած է ձեռնարկը: Նախ ձեռնարկը բոլորովին լիքիտիքէն կորսնցուցած է եւ քէ տարւոյն մեջ 73.4 հազարի վնաս մը գոյացած կը տեսնենք: Այս վնասին ինչպէս գոյանալը արդիւնքի կեռին վրայ կը նշմարենք:

Այս վնասը դրամագլուխէն անմիջապէս պակսեցրնել կարելի չէ, որովհետեւ ձեռնարկը անանուն է: Այս պատճառաւ 73.4 հազարի վնասը կացութեան կեռին աւերիցի կողմը կը տեսնենք:

Երրորդ տարին ալ ասելի աղիտալի տարի մը դարձած ըլլալը հաշուեկեռին երկու մասերուն վրայ կը նշմարենք: Լիքիտիքէն բոլորովին խախտած է, վնասը 124.8 հազարի բարձրացած է:

Այս պայմաններուն ներքեւ ձեռնարկը կարող չըլլար իր գործունեութիւնը շարունակելու եւ այս պատճառաւ բաժնետէրերը եւ պարտատէրերը կարգ մը միջոցներ ձեռք կ'առնեն իրենց դրամագլուխը մասամբ ապուհովելու համար: Ձեռնարկը կը վերակենդանացնեն, ինչ որ պատկան բաժնին մեջ պիտի գտնենք:



## 7.- ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ

Առեւտրական ձեռնարկները յաճախ իրենց գործունէութեան վերջ մը տալ կ'ուզեն: Այսպիսի պարագայի մը առջեւ ձեռնարկը իր բոլոր ստացուածքները դրամի վերածել տալէ վերջ օտարներուն պահանջները կը վճարէ և մնացեալը ձեռնարկին տիրոջ կամ տէրերուն կը մնայ: Այս որ ժամանակի և կարգաւորութեան կը կարօտի ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ (liquidation) կը կոչուի:

Հաշուեյարդար բառը երբեմն սխալմամբ մեծ խառնութիւններուն ըրած եղանակի վերջաւորութեան վաճառումներու համար ալ կը գործածուի, սակայն մենք հաշուեյարդար ըսելով առեւտրական ձեռնարկի մը գործունէութեան վերջ տրուելը կը հասկնանք:

Հաշուեյարդարը կրնայ պարտադրական կամ ոչ պարտադրական ըլլալ:

ՊԱՐՏԱԳՐԱԿԱՆ հաշուեյարդարը կ'ըլլայ երբ ձեռնարկը կարող չըլլար օտարին դրամները վճարելու, այսինքն սնանկութեան մը պարագային:

ՈՉ ՊԱՐՏԱԳՐԱԿԱՆ հաշուեյարդարը կ'ըլլայ երբ ձեռնարկին տէրերը որոշեն գործելէ դադրել:

Առաջինը սնանկութեան բաժնին մէջ պիտի ուսումնասիրենք: Հոս հաշուեյարդար ըսելով միայն ոչ ստիպողական պարտադան կը հասկնանք: Սակայն, սնանկ

կութեան պարագան մեր նիւթէն դուրս մնալով հանդերձ հաշուեյարդարը ակամայ կ'ըլլայ, օրինակ, երբ անանուն ընկերութեան մը իր պայմանադրական պայմանաժամը վերջացած ըլլայ և այս պատճառաւ հակառակ իր կամքին չի կարենայ գործել: Բոլորովին կամայ կ'ըլլայ երբ ձեռնարկը շահաբեր չըլլար և կամ թէ անձնական ձեռնարկներու մէջ մահ մը պատահի և ժառանգորդները չուզեն շարունակել ևլն.:

Ատոր փոխարէն ալ շատ մը պարագաներու տակ առեւտրական ձեռնարկները իրենց գործունէութիւնը առանց հաշուեյարդարի կը դադրեցնեն: Օրինակ՝ երթեւեկի կամ այլ շատ մը ձեռնարկները որոշ աւանուան մը գործունէութենէ վերջ (50 կամ 100 տարի), իրենց ձեռնարկը պետութեանց փոխանցելու ստիպողականութեան տակ կը գտնուին իրենց պայմանագրութեամբ:

Նոյնպէս ձեռնարկները առանց հաշուեյարդարի կը վերջանան երբ անոնք ձուլուին ուրիշ ձեռնարկներու հետ: Այս մասը ձուլման բաժնին մէջ պիտի սուսմնասիրենք:

Հաշուեյարդարը առեւտրական ձեռնարկի մը գործունէութիւնը դադրեցնելու օրէն կը սկսի և կը վերջանայ երբ ձեռնարկին տէրերը իրենց վերջին բաժնիները ստանան:

Սկզբնաւորութեան ժամանակ տոմարները կը բաւուին և կը փոխանցուին նոր հաշիւի մը վրայ, որ է ՀԱՇՈՒԻԵՅԱՐԴԱՐԻ ՄՈՒՏՔԻ ԿՇԻՌը:

Հոս փոխանցուած ժամանակ այլեւս ձեռնարկը իր բոլոր ստացուածքները վաճառելի գիներով կը փոխանցէ: Մնացեալը՝ շահ կամ վնաս իրբեւ մինչեւ այժմ

օրուան արդիւնքը դարձեալ հաշուեյարգարի մուտքի կշռին մէջ կ'արձանագրուի: Ասկէ զատ հաշուեյարգարի արդիւնքի կշիռ մը գոյութիւն կ'ունենայ: Հոս այն բոլոր շահերը կամ վնասները կ'արձանագրուին որոնք վաճառումէն յառաջ կուգան: Օրինակ՝ երբ ապրանքները 5000 ոսկի արժէքով մը նշանակուած են և երբ 6000ի վաճառուին, 1000ը հաշուեյարգարի արդիւնքի կշռին շահերու կողմը կ'անցնի:

Երբեմն ստացուածքները դրամի վերածելը դիւրին երբեմն ալ դժուար կ'ըլլայ:

ՀԱՇՈՒԵՅԱՐԳԱՐԻ ԱՐԴԻՒՆԻՔԸ կախեալ կ'ըլլայ նախ հրապարակի գիներէն և վերջը հաշուեյարգարի տեւողութենէն: Երբ հաշուեյարգարը շատ կարճ ժամանակի մը մէջ ըլլայ, ստացուածքները շատ քիչին արժէքով մը գրամի կը վերածուին:

Հաշուեյարգարը կրնայ ձեռնարկին վարիչներուն կամ թէ մասնագէտներու կողմէ ըլլալ:

Ստացուածքները դրամի վերածելու դժուարութիւնը ստացուածքի տեսակէն կախեալ է: Կան այնպիսի ստացուածքներ որոնք բնաւ դրամի վերածելի չեն:

Կապուած ստացուածքը դրամի վերածելու ատեն պէտք ենք դիտնալ թէ՛ կապուած ստացուածքը ինչերէ կը բաղկանայ: Եթէ ասոնք անմարմնային ստացուածքներ են դրամի վերածուելին շատ դժուար կամ երբեմն ալ անհնարին կ'ըլլայ: Օրինակ՝ երբ ձեռնարկը գիւտի մը առանձնաշնորման իրաւունքը իբր ստացուածք ընդունած է, այս վաճառել կարելի չէ: Եթէ մեքենաներ են՝ անոնց վաճառումը գնորդին ունենալիք օգուտէն կախեալ է:

Նոյնպէս եթէ գործարանի շէնքերէ կը բաղկանան անոնք: Հիմնարկութեան արժեթուղթերը որոնք կապուած ստացուածքին մաս կազմած կ'ըլլան՝ պիններնին և շահաբերութիւննին ևս նկատի կ'առնուին զընտրողներուն կողմէ:

Երջող ստացուածքը ասոր փոխարէն շատ աւելի դիւրին դրամի վերածել կարելի է, որովհետեւ ան արդէն դառնալու պարտականութիւնը ունի: Օրինակ՝ ապրանքը կամ պահանջը օր մը դրամի պիտի վերածուին: Երբ այս ըլլայ և նոր շրջան մը ընկէ ետ կեցուի, դրամ ըլլալով ձեռնարկին գանձին մաս կը կազմեն: Սակայն, երբեմն ապրանքներ և պահանջներ դժուար դրամի վերածելի կ'ըլլան:

Այսպիսի պարագայի մը առջեւ ձեռնարկը կամ կ'սպասէ կամ թէ փնասով մը դրամի կը վերածէ զանոնք: Օրինակ՝ երբեմն ապրանքներ որոշ եղանակի մը մէջ միայն վաճառելու հնարը կը գտնուի և երբ ձեռնարկը այս եղանակէն առաջ դրամի վերածել ուղէ դանտնք, բնական է թէ՛ փնաս մը կը գոյանայ: Կամ եթէ գանձամուրհակները երկար պայմանաժամ մը ունին այս պայմանաժամէն առաջ անոնց գանձուիլը շատ դժուար պարագայ մը կ'ստեղծէ:

Ազատ ստացուածքը սկզբունքի տեսակէտով զըժուար դրամի վերածելի ըլլալու չէ, որովհետեւ ձեռնարկը արդէն իր ազատ ստացուածքը պահանջի մը առջեւ դրամի վերածելու համար ունեցած կ'ըլլայ: Օրինակ՝ արժեթուղթեր, կալուածներ ևլն. բոլորն ալ դրամի վերածելի ստացուածքներ են: Սակայն, ազատ ստացուածքը դրամի վերածելու համար ժամանակ մը պէտք է եթէ առանց կորուստի հաշուե-

յարդար մը ընել ուզուի: Կրնայ ըլլալ որ կալուածներուն եւ արժեթուղթերուն համար հրապարակը կամ սակարանը լուրջ գնորդներ չի գտնուին և գտնուողներն ալ նկատի առնելով թէ ձեռնարկը զանոնք ծախելու ստիպողականութեան առջեւ կը գտնուի շատ ջնջին գին մը վճարել ուզեն:

Սա եւս ըսել հարկաւոր է թէ՛ ձեռնարկը իր բոլոր ունեցածը երբ հրապարակը ծախու հանէ և եթէ ասոնք շատ են բարձրացած կ'ըլլայ մատուցումը և այս պատճառու ալ գինները անկում կը կրեն:

Օտարներու բոլոր պահանջները հաշուեյարդարի մը ժամանակ պայմանաժամին աւարտած կը նկատուի եթէ նոյնիսկ երկար պայմանաժամով ըլլան:

Այն բոլոր պարտքերը որոնք վիճելի են ձեռնարկը զանոնք ազանով տեղ մը աւանդ ձգելու ստիպողականութեան տակ կը գտնուի:

Այսպէս կը տեսնենք թէ հաշուեյարդարը ստացուածքի տեսակէն, իր գնորդին ունենալիք օգուտէն, հաշուեյարդարը կատարողին կարողութենէն և վերջապէս իր տեւողութենէն կախեալ է: Շուտ վերջանալիք հաշուեյարդարը միշտ վնասով ընել կարելի կ'ըլլայ: Սակայն, սա եւս նկատի առնել հարկ է թէ՛ հաշուեյարդարը ծախքի կը կարօտի և որքան երկար ըլլայ հաշուեյարդարը այս ծախքը այնքան շատ կ'ըլլայ: Եթէ հաշուեյարդարի տեւողութեան ծախքը անոր բերելիք շահէն աւելի ըլլայ հաշուեյարդարը կարճ ժամանակի մը մէջ լրացնել ճիշդ պիտի ըլլար:

Հաշուեյարդարի տեւողութեան մէջ ձեռնարկը այլեւս իր տեւարական գործունէութիւնը ընելէ կը

գաղթի և միայն «հաշուեյարդարի մէջ» (*en liquidation*) կը կոչուի:

Հաշուեյարդարը եթէ երկար տեւէ պարբերաբար ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՌԸ կը պատրաստուի, ինչ որ երկուքէ մաս կ'ունենայ.— հաշուեյարդարի կացութեան կշիռը և հաշուեյարդարի արդիւնքի կշիռը:

ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԻ ԿԱՅՈՒԹԵԱՆ ԿՇԻՌԸ այն բոլոր արձանագրութիւնը կը պարունակէ, որոնք զանազան ստացուածքներուն ինչպէս դրամի վերածած ըլլալուն գումարները կը ցուցնեն և ասոր փոխարէն ալ եղող վճարումները:

Վճարումները կ'ըլլան կամ օտարներուն պահանջներուն և կամ թէ ձեռնարկին տէրերուն առ հաշիւ:

ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐԻ ԱՐԴԻԻՆՔԻ ԿՇԻՌԸ ալ վճարումներէն յառաջ եկած տարբերութիւնները և զանազան ծախքերը կը պարունակէ:

11 թիւ Ֆօրմիւլցիս հաշուեյարդարի մը հաշուեկեղին զանազան մասերը կը պարունակէ: Մեր օրինակը անանուն ընկերութիւն մ'է, իր դրամագլուխը բաժնուած է 4000 բաժնեքուղքերու իւրաքանչիւրը 10 ոսկինոց, որով իր դրամագլուխը 40,000 ոսկի կ'ըլլայ: Ձեռնարկը հաշուեյարդարի ձեռնարկած է: Ձեռնարկած ասեմ փակած է իր հաշիւները, այսպէսով գոյացած է 5840.79ի շահ մը: Այս շահը գործունեութեան շահն է:

Հաշուեկեղին բոլոր մասերը՝ ստացուածք և դրամագլուխ փոխանցուած են հաշուեյարդարի մուսֆի կրօնին վրայ:

Երկու կեղիւններ ևս գոյութիւն ունին: Առաջինը հաշուեյարդարի կացութեան կեղիւր, երկրորդը՝ հաշուեյարդարի արդիւնքի կեղիւր:

Հաշուեյարդարի կացութեան կշիռը զանազան ըստ սացումքները ինչ արժեքով դրամի վերածուելին ցոյց կուտայ. իսկ հաշուեյարդարի արդիւնքի կշիռը կը ցուցնէ թէ՛ ստացումքներու դրամի վերածուիլը բախտասմամբ հաշուեյարդարի մուտքի կշիռն աւելիով (շահ) թէ պակասով (վնաս) եղած է:

Կալուածները որոնք 45,700 ոսկիի արժեք մը ունեին ծախուած են 42,010ի, այսպէսով 3690 ոսկի վնաս մը գոյացած է: Գանձումը՝ 42010 ոսկի հաշուեյարդարի կացութեան կշիռն զանձումներուն, իսկ վնասը արդիւնքի կշիռն վրայ կը տեսնենք: Ապրանքը ասոր փոխարէն 270,16 ոսկիի շահով ծախուած է: Կարասիները 178 ոսկի վնասով մը եւ պարտականներուն ալ 150 ոսկիի զեղչ մը եղած է: Այսպէսով բոլոր ստացումքները ծախուելով 75729,95 ոսկի գումար մը գոյութիւն կ'ունենայ: Այս գումարին մէջն է ձեռնարկին հաշուեյարդարէ առաջ ունեցած 5576.65ի պատաստ դրամը:

75.729,95 կարգ մը վնասումներ կ'ըլլան նախ հաշուեյարդարի գործին համար 457,80 ոսկիի ծախքերը կը վնասուին. օտարները իրենն պահանջները կ'ստանան: Ասոնց միայն 20.637 պարտամուրհակի պարտքեր պիտի ըլլային. սակայն, ձեռնարկը հաշուեյարդարի մէջ ըլլալուն համար իր պարտաթուղթերով (երկար պայմանաժամով) պարտքերն ալ վնասելու ստիպուած կ'ըլլայ: Այսպէսով իր բոլոր պարտքը՝ որ էր 33,637 վնասած է: Ասկէ զատ իր բաժնետէրերուն ալ անուանական դրամագումարին կէտը՝ 20000 ոսկին վնասած է: Այսպէսով ձեռնարկին դրամը 21635,15 ոսկիի կ'իջնէ, այս բաժնետէրերուն մնացորդ առնելիքն է: Արդէն բաւիժի կողմէ ալ այս առնելիքին կ'երեւայ: Բաժնետէրերը 40000ի իրենց դրամը

մագլուխը եւ 5840.79 շահերնին կը պահանջէին հաշուեյարդարեն առաջ: Այս 45840.79են պակաս է իրենց առնելիքը, նախ իրենց եղած 20000 վնասման եւ երկրորդ հաշուեյարդարին յառաջ բերած 4205.64ի վնասին փոխարեն:

4205.64ի վնասը ինչպէս գոյանալը մեզ հաշուեյարդարի արդիւնքի կ'ընդ կը ցուցնէ:

## 8.- ՏԿԱՐԱՑԱԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ

### ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄԸ

Առեւտրական ձեռնարկները յաճախ այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուին, որ առանց կտրուկ միջոցի մը անկարելի կ'ըլլայ իրենց գործունէութիւնը շարունակել:

Այս կ'ըլլայ երբ ձեռնարկին ստացուածքները իրենց իսկական արժէքէն շատ աւելի բարձր արժէքով մը նշանակուած կ'ըլլան: Այս պարագան յառաջ կուգայ՝

- ա) Ձեռնարկին պակասաւոր կադմէն,
- բ) Սխալ զեկավարումէ մը, և
- գ) Կամ թէ տնտեսական տագնապէն:



ՁԵՌՆԱՐԿԻՆ ՊԱԿԱՍԱՒՈՐ ԿԱԶՄԷՆ յառաջ եկած կ'ըլլայ, օրինակ երբ ձեռնարկը իր կազմութեան շրջանի մէջ բարձր կապուած ստացուածքի յատկացումները ըրած կ'ըլլայ: Այս պատճառաւ այս կապուած ստացուածքը ամէն տարուան բարձր ամօրթիւրման մը ընելու ստիպողականութեան առջեւ կը ձգէ և այս ամօրթիւրմանը կապուած ստացուածքին օգուտէն աւելի ըլլալու պարագային այս ձեռնարկը անշահաբեր կը դառնայ:

ՍԵՍԱ ԴԵԿԱՎԱՐՈՒՄԷՆ յառաջ կուգայ երբ ձեռնարկը իր շրջող ստացուածքը սխալ օգտագործէ: Օրինակ՝ երբ ապրանք մը գնած է: Եթէ ապրանքը սուղ գնուի անոր արժէքը հաշուեկշռին վրայ բարձր կ'երևայ առանց իրական արժէք մը ունեցած ըլլալու:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ևս կըրնայ առևտրական ձեռնարկը շատ վատթարացուցած վիճակի մը հասցուցած ըլլալ, երբ օրինակ՝ ձեռնարկի մը պարտականները կարող չըլլան իրենց պարտքին ամբողջութիւնը վճարելու:

Հոս ևս պարտականներու պահանջքը իրական արժէքէն բարձր արձանագրուած կ'ըլլայ, երբ ձեռնարկը իր պահանջները ամբողջութեամբ զանձելու կարող չըլլայ:

Այսպիսի պարագաներու առջեւ կարուկ միջոցներ ձեռք առնելու ստիպողականութեան տակ կը գտնուի ձեռնարկը, երբ ան՝ չուզէր իր գործունէութիւնը գաղթեցնել: Կարուկ միջոց մը առնուած կ'ըլլայ երբ ձեռնարկը իր ստացուածքներուն արժէքը իջեցնէ, այնպէս որ անքան աքթիֆի գումարը պակսեցնէ առանց ելք մը ընելու: Այս ալ ըլլալու պարագային պակսեցնել հարկ կ'ըլլայ նաեւ զրամագլուխը:

Այս գործողութիւնը, որ ձեռնարկներու ՎԵՐԱԿԵՆ-ԴԱՆԱՑՈՒՄ (գերմաներէն *Sanierung*) կ'անուանուի, չորս տեսակ կ'ըլլայ.

ա) Սեփական զրամագլուխը կը նուազի:

բ) Օտար զրամագլուխը կը նուազի:

գ) » » առանց նուազելու փոփոխութիւն կը կրէ:

դ) Սեփական և օտար զրամագլուխները մասամբ կը ձուլուին:

Սեփական զրամագլուխը կը նուազի երբ ձեռնարկը որոշ կերպով յառաջ եկած վնաս մը (գործունէութեան վնասի, ստացուածքի արժէքի հարկաւոր նուազում և չն.) փոխանակ կացութեան կշռին աքթիֆի կազմը շարունակաբար պահելու զայն զրամագլուխէն կը նուազեցնէ:

Այս անձնական ձեռնարկներու մէջ սովորական է, որովհետեւ արդէն վնասը՝ այսինքն շահու և վնասի հաշիւին մնացորդը զրամագլուխի հաշիւին վրայ կը փոխանցուի:

Անանուն ընկերութեան մէջ այսպէս չէ, քանի որ անոնք իրենց վնասը կացութեան կշռին աքթիֆի կողմը կը պահեն մինչեւ որ բաժնետէրերը որոշման մը յանգին: Ահա այս որոշման յանգիլն է վերակենդանացումը սեփական զրամագլուխի նուազումով:

Սեփական զրամագլուխը զանազան տեսակներով կրնայ նուազիլ: Կամ այն է թէ բաժնեթուղթերուն անուանական արժէքը կ'իջեցնեն կամ թէ նախկին բաժնեթուղթերէն աւելի կ'առնեն և ասոր փոխարէն նուազ նոր կտորներ կուտան:

Օրինակ՝ ենթադրենք թէ 10000ի զրամագլուխը

5000ի կ'իջնէ և այս ալ կազմուած է 2000 Ծնոց բաժնեթուղթերէ, կամ այն է թէ Ծնոց արժեթուղթերը 2.5նոց կ'ընեն կամ թէ երկու հատ նախկին Ծնոցը 1 հատ նոր Ծնոցի հետ կը փոխանակեն:

ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ՆՈՒՍ.ՉՍԾ կ'ըլլայ երբ պարտապահանջները հաւանին իրենց իրաւունքէն մասամբ հրաժարելու: Հոս դրամագլուխի կազմը առողջացած կ'ըլլայ, որովհետեւ օտար դրամագլուխի համեմատութիւնը կը նուազի:

ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ կ'ենթարկուի երբ օտարը հաւանի իր կարճ պայմանաժամով պահանջքը որոշ ատեն մը վերջ գանձել: Այսպէսով ձեռնարկը կարճ պայմանաժամով պարտքերը երկար պայմանաժամով պարտքերու վերածած կ'ըլլայ: Հոս դրամագլուխի կազմը քիչ մը առողջացած կ'ըլլայ:

Սեփական և օտար դրամագլուխները իրարու մէջ մասամբ ցուլուած կ'ըլլան երբ օտարը հաւանի իր պահանջքին փոխարէն ձեռնարկին բաժնետէրը դառնալ:

Վերջին երեքը, այսինքն օտարը զիջումներ կ'ընէ երբ տեսնէ թէ՛ իր պահանջը գանձելու կարող չէ:

Վերակենդանացումը այն ատեն պէտք է ըլլայ երբ ձեռնարկը ապահովութիւնն մը ցոյց տայ թէ պիտի կարենալ նոր դարմանումներով գործել: Եթէ այս չըլլայ վերակենդանացումը բնաւ օգտակարութիւն չունենար: Ոչ նուազ նշանակուիլը օգուտ մը կ'ունենայ ոչ ալ օտարին ըրած զիջումները:

Սա ևս ըսել հարկաւոր է որ վերակենդանացման քայլ մը տագնապններու մէջ առնել ճիշդ չէ, որովհետեւ տագնապնները ձեռնարկները շուարեալ վիճակի մը մէջ ձգած կ'ըլլան:

Տնտեսական կացութեան ազդեցութեան բաժնին մեջ մեր 10 քիւ Ֆորմիւլին համար ըսենք թէ ան շատ ազդուած է տնտեսական շագնապին: Երրորդ սարւոյ մեջ ձեռնարկը անկարող զսած էինք նախկին պայմաններու մեջ գործելու: Այս պատճառաւ կտրուկ միջոցի մը դիմել հարկ կ'ըլլայ, որ է՝ վերակենդանացում:

Հոս վերակենդանացումը թէ բաժնետերերուն է թէ պարտատերերուն կողմէ կ'ըլլայ:

Բաժնետերերը նկատելով որ իրենց ձեռնարկին 124.8ի վնասը գոցել անհնարին պիտի ըլլայ էւ այս պատճառաւ երկար ժամանակ առանց շահաբաժնի պիտի մնան կը որոշեն իրենց անուանական դրամագլուխը նուազեցնել: Այս դրամագլուխը 400 հազարէն 50 հազարի իջած կը տեսնենք: Այս պատճառաւ նախկին 8 բաժնետիրոջը 1 նոր բաժնետիրոջի կը հաւասարի: Այս դրամագլուխի նուազումէն յառաջ եկած 350 հազարի շահը կ'օգտագործուի հետեւեալ կերպով: 150 հազարի կալուածներու 50 հազար ապրանքներու 50 հազար ալ զանազան պահանջներու (իբր անվստահ էւ անզանձելի) արժեքները կը նուազին էւ այսպէսով կ'ըլլայ 250 հազար ոսկի էւ մնացեալ 100 հազարն ալ վնասի նուազման կ'օգտագործուի:

Այսպէսով վնասը իջած պիտի ըլլար 24.8ի սակայն այս գումարէն կը նուազի նաեւ նախկին շահաբեր տարիէն մնացեալ շահը էւ այսպէսով վնասը 21.5ի իջած էւ բնաւ բաշխելի շահ մնացած չըլլար:

Այս փոփոխութիւնները որոնք վերակենդանացման համար եղած են շնորհիւ սեփական դրամագլուխին, ի յայտ կուզան, երբ երրորդ սարւոյ բ.բ ա.ին հետ բաղդատենք: Այս վերակենդանացումը կրնայ ձեռնարկին ան-

ուանական դրամագլուխը շահաբեր դարցնելու համար օգտակար եղած ըլլայ: Սակայն այսպէսով կացութեաց մեզ փոփոխութիւն մը՝ բարելաւում մը չի կայ եւ մասնաւորաբար օտարը ապահովուած չի, քանի որ սեփական դրամագլուխը շահ ջնջին համեմատութեան մը հասած է: Այս պահանաւ օտարը եւս կարգ մը զիջումներ կ'ընէ ձեռնարկը վերակենդանացնելու համար, որ պէտքի իր պահանջը ապահովուի: Օտարին ըրած զիջումներն ալ կը տեսնենք երբ գ.ը նախկինին հետ բաղդատենք:

Նախ դրամասունները կը հաւանին իրենց պահանջին փոխարէն բաժնետեր ըլլալու: Այս 200 հազարի համար եղած է ինչ որ կացութեան կէտը մեզ կը ցուցնէ: Ձեռնարկին դրամասանց ունեցած պարտքը 200 հազար կը նուազի եւ ստոր փոխարէն սեփական դրամագլուխը բարձրացած է 50 հազարէն 250 հազարի: Այս բարելաւում մըն է ձեռնարկին դրամագլուխի կազմին մեջ, քանի որ սեփական դրամագլուխի համեմատութիւնը բարձրացած է օտար դրամագլուխի համեմատութիւնը նուազած է: Յեռնարկին երկուր պայմանաժամով պարտքերուն մէկ երրորդը կը զեղչուի որով կը մնայ 210 հազար, կարն պայմանաժամով պարտքերուն ալ 50% կը զեղչուի եւ կը մնայ 145 հազար: Այս վերջինն ալ արդէն երկուր պայմանաժամով պարտքի մը կը վերածուի: Այսպէսով կարն պայմանաժամով պարտք անուան սակ հաշիւ գոյութիւն չունենար եւ միայն երկուր պայմանաժամով մը կայ որ է՝ 355 հազար: Հոս նախ իջեցուցած է օտար դրամագլուխը եւ ասկէ զատ ալ կարն պայմանաժամով պարտք մը ձգուած չի: Այս  $(315 + 290 = 605 - 355)$  250 հազարի շահ մը տուած է ձեռնարկին: Այս 250 հազարը

հետեւեալ կ'երպով օգտագործում մը կը գտնուի: Ապրանքներու արժեքը 158.5 հազար զանազան պահանջները 55 հազար պակաս կ'արձանագրուին եւ 21.5 հազարի մնացեալ վրնասը կ'անհետանայ եւ կը մնայ 25 շազար: Այս ալ նոր պահեստի մը (սեփական դրամագրուիսի մը) գոյացման կը հասկացուի:

Այսպէսով ձեռնարկը վերակենդանացած կը տեսնենք:

## 9.- Ս Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Առեւտրական ձեռնարկներու կեանքը արտասովոր վերջացնող պարագաներէն մէկն է անանկութիւնը: ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ առեւտրական ձեռնարկին դործունէութիւնը կը դադրեցնէ, անոր վարիչին հաշուեյարդարի իրաւունք չի տար եւ բոլոր ստացուածքները պարտատէրներու հաւաքականութեան արամադրէ: Մանկութեանը երկու գլխաւոր պատճառ՝ կ'ունենայ. —

ա) Լիքիտիթէ խանգարում:

բ) Պարտքերու բարձրութիւն:

Լիքիտիթէ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ ինչպէս գիտենք յառաջ եկած կ'ըլլայ երբ ձեռնարկը իր յանձնարութիւնը չի կարենայ օրին ընել:

ՊԱՐՏՔԵՐՈՒ ԲԱՐՉՐՈՒԹԻՒՆ ըսելով սա կը հասկնանք թէ՛ ձեռնարկը օտար դրամազուլս մը ունի որ բարձր է իր ստացուածքներէն:

Որ և է հաշուելի յո այս երկու պարագաներու մեզ կը յայտնէ: Երբ տեսնենք թէ՛ ձեռնարկը կարճ պայմանաժամով օտար դրամազուլս մը ունենալով հանդերձ տկար գանձ մը ունի, այս կը նշանակէ թէ՛ անոր լիքիաթիթէն խանդարուած է: Կամ երբ տեսնենք թէ աքթիֆի կողմը գտնուող վնասը սեփական դրամազուլսէն աւելի է կը նշանակէ թէ ձեռնարկը առանց սեփական դրամազուլսի մնացած է: Այս վերջինին սակայն, շատ հազուադիւտ կը հանդիպինք և սնանկութեան բուն պատճառներէն մէկն է լիքիաթէի խանդարումը: Այս ինչպէս գիտենք յառաջ կուգայ զանազան պարագաներէ: Ոչ արմատաւոր գործունէութիւն մը սնանկութեան կ'առաջնորդէ երբ վճարուած օտար դրամազուլսի տոկոսի համեմատութիւնը անոր շահաբերութենէն աւելի ըլլայ: Գէշ ղեկավարումէ մը երբ ձեռնարկը օտար կարճ պայմանաժամով դրամազուլս մը ունենայ և զայն երկար պայմանաժամով ուրիշին տրամադրէ:

Այս երկուքէն դուրս ԿԵՂԾ ՄԵԱՆԿՈՒԹԻՒՆ մը ևս կայ: Սակայն, գիտական սահմանի մէջ մնալու ստիպողականութիւնը այս պարագան մեր ուսումնասիրութեան գեանէն դուրս հանել կուտայ:

Վերջապէս սնանկութիւնը այնպիսի պարագայ մըն է որ առեւտրական ձեռնարկը կարող չըլլար իր գործունէութիւնը շարունակելու: Այսպիսի պարագայի մը առջև պարտատէրերը այդ ձեռնարկը հաշուեյարդարի կ'ենթարկեն: Այս հաշուեյարդարը վարիչին կողմէ չըլ-

լար այլև դատական իշխանութեան կողմէ: Այս ինչպէս հաշուեյարդարի բաժնին մէջ գտանք պարտադրական հաշուեյարդար մըն է:

Մնանկութիւնը՝ այսինքն պարտադրական հաշուեյարդարի պահանջը կրնայ պարտատէրերուն կողմէ ըլլալ կամ թէ բուն իսկ ձեռնարկին վարիչին կողմէ: Առաջինը կ'ըլլայ երբ ձեռնարկին պարտապահանջները իրենց պահանջները չի կարենալով գանձել դատարան կը դիմեն: Երկրորդը կ'ըլլայ երբ ձեռնարկին աէրը ինքզինքը անկարող տեսնէ ձեռնարկին գործունէութիւնը շարունակելու և այս պատճառաւ իր ձեռնարկին սնանկութիւնը կը պահանջէ, որպէսզի իր վրայ ծանրացող և իր կարողութենէն վեր բեռէ մը ազատի:

Մնանկութեան որոշումը տրուած օրէն իսկ ձեռնարկին գործունէութիւնը կը դադրի ու անոր նոր յանձնարարութիւնը նիւտի չ'առնուիր: Բոլոր ստացուածքները դրամի կը վերածուին: Այս դրամը պարտապահանջներուն կը տրամադրուի:

Պարտապահանջները հինգ դասակարգի կը բաժնուին:

ա) Աւանդ ձգողները որոնք իրենց պահանջները նոյնութեամբ կ'ստանան: Աւանդը կրնայ նկատուիլ բոլոր այն ապրանքներու մնացորդները որոնք օտարին կը պատկանին և ձեռնարկը զանոնք ծախելու համար ստացած կ'ըլլայ (*en consignation*), շարժուն բոլոր ինչքեր կամ գրամը որ աւանդ ըլլալով ձգուած է ևն ևն:

բ) Գրաւի փոխարէն եղող պարտքեր որոնք ամբողջութեամբ կը վճարուին եթէ գրաւի տակ գտնուող ստացուածքը այս պարտքը գոցէ:

գ) Մնանկութեան պարտադրական հաշուեյարդարի ծախքերը որոնք իբր ծախք առանց զեղչի կը գանձուին:



դ) Բոլոր միևս ծախքերը որոնք գործառնութեան ժամանակին կը պատկանին: Օրինակ՝ ընդհանուր վարձք, պաշտօնէից դոշակ ևն: Ասոնք երբեմն երկիրներու մէջ առանց զեղչի կը գանձուին:

ե) Սովորական պարտքերը որոնք ձեռնարկին գործունէութեան ժամանակին մէջ գոյացած են: Օրինակ պարտամուրհակներ, դրամատանց պարտքերու նւն:

Այս վերջինները իրենց պահանջները կը ստանան երբ նախկին չորս դասակարգի պահանջողները իրենց պահանջները ստանան, և մնացորդ մը մնայ: Այս մնացորդ գումարին և սովորական պարտքերու գումարի համեմատութիւնը կը որոշուի և այս համեմատութեամբ իւրաքանչիւր պարտատէր իր պահանջը կը ստանայ: Օրինակ՝ երբ ձեռնարկին բոլոր ստացուածքները դրամի վերածուին և ոչս 40.000 ըլլայ և ասոր 30.000ը նախապէս ըսուած չորս դասակարգի պատկանող պարտատէրերուն վճարուի կը մնայ 10000: Եթէ ասոր փոխարէն 20000 սովորական խարտք մը գոյութիւն ունի վճարման համեմատութիւնը 50 առ հարիւր կ'ըլլայ: Եթէ մէկը 500 ոսկիի առնելիք մը ունի կը ստանայ 250 ոսկի:

Մնանկ ձեռնարկը եթէ անձնական է պարտատէրերը իրենց մնացորդ պահանջը անկէ պահանջելու իրաւութիւնը կ'ունենան և եթէ ան ունենայ ստացուածք մը կը ստիպեն վճարելու: Անանուն ընկերութիւնները սակայն այսպէս չեն: Եթէ անանուն ընկերութիւն մը անանկանայ բաժնետէրները միայն ձեռնարկին մէջ ունեցած դրամադուխտին հատուցած կ'ըլլայ: Այսպէս է նաև բոլոր սահմանափակ պատաս-

խանապատուութեամբ գործող ձեռնարկներու համար (G. m. b. H, Limited ևն.):

## 10.- Յ Ո Ւ Լ Ո Ւ Մ

Յաճախ այնպիսի պարագաներ կը ներկայանայ որ առեւտրական ձեռնարկները իրար միանալ ուզեն: Այսպիսի պարագայ մը ՅՈՒԼՈՒՄ (Fusion) կը կոչուի, որովհետեւ երկու կամ աւելի ձեռնարկներ իրարու մէջ կը ցուլուին և մէկ կեդրոնէ մը կը ղեկավարուին:

Առեւտրական ձեռնարկը ցուլման առաջնորդող պատճառները երեք մասի մէջ պիտի կրնային խտացնել, որոնք հետեւեալներն են.

ա.) Արտադրական գետնի վրայ ձեռնարկը կը ցուլուի արտադրութեան ընդհանուր ծախքերը իջեցընելու, իրարու ստացուածքները աւելի լաւ օգտագործելու, գնումներու համար զիւրութիւններ ունենալու համար ևն.

բ.) Սպառման համար կը ցուլուին որպէսզի իրենց միջև գոյութիւն ունեցող մրցակցութիւնը դադրի, վաճառման մեծ սահմ մը ունենալու, անտեսական կացութեան պատճառաւ յառաջ եկած նուազ սպառումը դարմանելու համար ևն:

գ.) Ելմտական պատճառներով ալ ձեռնարկին իրար միացումը, ցուլումը կը տեսնենք յաճախ: Օրինակ՝ ձեռնարկի մը վեասը անյայտ ընելու, արժեթուղթերը սակարան մտցնել, հին ձեռնարկի մը հոչակը օգտագործելու համար:

Անձնական ձեռնարկներու մէջ միացումը փափաքուած պարագային շատ դիւրին կ'ըլլայ որովհետեւ անոնք ազատօրէն կենան համաձայնիլ: Անանուն ընկերութեան մէջ ցուլումը բարդ հարց մը նկատել հարկ է, որովհետեւ համաձայնութեան համար շատ մը նկատի առնուելիք պարագաներ կան որոնք շատ անգամ իրարու հակասական կ'ըլլան: Ասոնց կարեւորները հետեւեալներն են:

ա.) Շահաբերութեան պարագան որուն մէջ շահի համեմատութիւնը անանուն ընկերութեանց անուանաման գրամագլուխին վրայէն կ'որոշուի:

բ.) Արդիւնաբերութեան պարագան որուն մէջ շահաբաժնին համեմատութիւնը բաժնեթուղթին սակարանը ունեցած գինին վրայ կ'որոշուի:

գ.) Անանուն գրամագլուխի բարձութիւնը:

դ.) Ձեռնարկին կացութիւնը, անոր պարագաները:

Ասոնք շատ գժուար լուծելի հարցեր կը հանդիսանան, որովհետեւ ցուլման մաս կազմող ձեռնարկի ամէն բաժնէր պիտի ուղէր առաւել չափով իր շահը պաշտպանել: Այս պատճառաւ անանուն ձեռնարկներու վարիչները ցուլման պարագային երկար բանակցութիւններու իէջ կը գտնուին:

# ԼՈՒԾՈՒՄԸ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՃԻՒՂԵՐՈՒՆ ՄԷՋ

## 1.- ՃԻՒՂԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Նախորդ գլխուն մէջ առեւտրական ձեռնարկներու կեանքը ուսումնասիրեցինք, սակայն այս ուսումնասիրութիւնը ընդհանուրին պատկանող մասերը կ'ամփոփէր միայն: Անոնց ընդհանուրին ի զօրու ըլլալիք կազմութեան, գործունէութեան և վերջաւորութեան պարագաներ կը պարզէր: Հաշուեկշիռները լուծելու համար պէտք է բոլոր առեւտրական ձեռնարկներու ներքին կեանքին տեղեակ ըլլալ և որոնք միայն զանազան ճիւղերու բաժնելով է որ կրնան ուսումնասիրուիլ: Գրքին այս գլխուն պարունակութիւնը այս պիտի չըլլայ:

Կարգ մը հաշուեկշիռի մասնագէտներ և տեսաբաններ իրենց ըրած հաշուեկշիռ լուծման հեղինակութեանց մէջ ուզած են առեւտրական ձեռնարկներու բոլոր նըրքին մասերը իբր նդհանուրին ի զօրու կանոններ ընդունելու և այս պատճառաւ յաճախ նիւթէն շեղած են:

Առեւտուրի կարեւոր ճիւղերն են, վաճառականութիւնը, ճարտարարուեստական ձեռնարկները, դրամատունները, ապահովագրական ըներութիւնները, քօն-ձեռնները, ևն.

## 2.- ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՀԱՇՈՒԵԿԵԻՌՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ըսելով այն առեւտրական ձեռնարկը կը կը հասկնանք որ ապրանքներու առեւտուրով կը զբաղի առանց փոխելու ապրանքին տեսակը: Օրինակ՝ բուրդ կ'առնէ և զայն կը ծախէ նոյնութեամբ: Եթէ սակայն զայն գործէ և անկէ բրդեղէն պատրաստէ և վերջը ծախէ ձեռնարկը գործարան մը՝ ճարտարուեստ մը եղած կ'ըլլայ և ոչ թէ վաճառատուն մը: Միայն սա հարցը կայ թէ փոքր խանութպանն ալ կըրնա՞յ վաճառատուն ըսուիլ: Այս հարցը լուծելու համար պէտք է գիտնալ թէ՛ պատկան խանութպանը առեւտրական ձեռնարկներու պատկանող երկրորդ նկարատրական պայմանը լրացուցած է, այսինքն ան դրամագլուխի և աշխատանքի բաժանման ենթակայ է: Վաճառատանց կազմին գալով անոնք կրնան առողջ կամ տկար ըլլալ: Ասիկա ուսումնասիրել հարկ է և այս ալ ինչպէս տեսանք, դրամագլխի, ստացուածքի ելմտական և տնտեսական գետնի վրայ կ'ուսումնասիրուի,

Վաճառատանց դրամագլուխի կազմերը իրարմէ կըընա շատ տարբեր ըլլալ: Եթէ սեփական դրամագլուխի համեմատութիւնը բարձր է վաճառատանց ըզրամագլուխի կազմը առողջ եղած կ'ըլլայ: Եթէ այս օտար դրամագլուխը կարճ պայմանաժամով է ձեռնարկին դրամագլուխի կազմը ալ աւելի տկար եղած կ'ըլլայ:

Կարճ պայմանացամով օտար դրամագլուխը դրամատանց եղող պարտքերէն, ապրանքներու փոխարէն գոյութիւն ունեցող պարտամուրհակներէն կը բազկանայ: Երկար պայմանաժամները ասոր փոխարէն այն դրամներն են որոնք մնայուն են, օրինակ՝ անանուն ընկերութեան պարտաթուղթերուն փոխարէն ունեցած պարտքերնին, անձնական ձեռնարկներու ընտանեկան դրամները են:

Ստացուածքի կազմերնին կրնան առաւել կամ նուազ չափով իրարմէ տարբերութիւն ունենալ, սակայն ընդհանուր առումով վաճառատանց ստացուածքի կազմը առողջ կ'ըլլայ, որովհետեւ անոնք կապուած ստացուածքի համար մեծ հատուցումներ ընելու ստիպուած չեն:

Գործարան մը գործելու համար մեքենայի, երբեմն չէնքի կը կարօտի սակայն վաճառատուն մը կրնայ առանց ատոնց գործել: Իրաւ է թէ անոնք կապուած ստացուածք մը կ'ունենան գործելու համար սակայն ան իրենց ստացուածքին կարեւոր մէկ մասը չի կազմեր, օրինակ՝ կարասիներ են. իրենց կարեւոր ստացուածքն է շրջող ստացուածքը: Այս է որ անոնց շահը կ'ապահովէ: Վաճառատանց շրջող ստացուածքը դրամէ, պահանջքէ է և ապրանքէ կը բազկանայ: Վաճառատունները յաճախ ազատ ստացուածք մը կ'ունենան, օրինակ՝ արժեթուղթեր և կալուածներ: Սակայն այս

երկուքը յաճախ կապուած ապապնանք կը կարծուին: Օրինակ՝ երբ ձեռնարկը կալուած մը ունենայ և զայն իբր վաճառատունը օգտագործէ հոս իր ազատ ստացուածքը կապուած ստացուածք մը նկատել հարկ պիտի ըլլար: Բայց երբ նկատի առնենք թէ ձեռնարկը վարձքը չի տալու համար իր վաճառատան մէջ կը գործէ և պէտքի մը առջև կրնայ զայն ծախել և դնորդին վարձակալը ըլլալ՝ զայն դարձեալ ազատ ստացուածք մը նկատել կարելի կ'ըլլայ: Արժեթուղթերը ևս շատ անգամ նման դժուարութիւն մը կը հարուցանեն: Օրինակ՝ երբ վաճառատուն մը որեւէ նպատակաւ նոր ընկերութիւն մը հիմնէ և իր մասնակցութեան բաժնին համար բաժնեթուղթեր ստանայ, այս բաժնեթուղթերը վաճառատան համար կապուած ստացուածք են թէ ազատ ստացուածք: Ընդունինք թէ ձեռնարկը, զանոնք ծախելու համար դնած չէ և ձեռնարկին մէջ մնայուն են զայն կապուած ստացուածք մը նկատել հարկ պիտի ըլլար, սակայն սա պէտք է ըսել թէ՛ այսպիսի պարագայի մը տակ վաճառատունը իր ճիւղէն ուրիշ ճիւղերու վրայ ևս գործած կ'ըլլայ և զայն իբր ԲՕՆՑՆԲՆ մը ընդունիլ հարկ է: Ասկէ զատ վաճառատան բոլոր արժեթուղթերը ազատ ստացուածք նկատել հարկաւոր է, քանի որ ձեռնարկը զանոնք դնած է իր ստացուածքին անգործածելի մասը շահաբեր ընելու համար:

Ելմտական կազմին գալով, ան ի յայտ կուգայ երբ օտար զբամազուխը և մասնաւորաբար կարճ պայմանաժամովը բաղդատենք ստացուածքի կազմին հետ: Եթէ տեսնենք թէ բարձր ազատ ստացուածք մը կայ և ասոր փոխարէն երբ վաճառատունը ջնջին կարճ պայմանաժամով օտար զբամազուխ մը ունենայ այս շատ առողջ ելմտական կազմ մը յառաջ կը բերէ:

Տնտեսական կազմին մէջ պէտք է նկատի առնել վաճառատան և մրցակցութեան կարողութիւնը, իր յաճախորդներուն դասակարգը ևն.

Այս միանալով վաճառատան մը ընդհանուր կազմը ի յայտ կը բերեն: Կազմը գիտնալու համար վիճակագրական դրութեամբ պատրաստուած հաշուեկշիռ մը ուսումնասիրելու է եթէ այս հաշուեկշիռը ամէն տարի մեծ փոփոխութեանց կ'ենթարկուի և այն աստիճանի որ կազմի համար հիմ մը բռնել անկարելի կ'ըլլայ, կը նշանամէ թէ նեոնարկը կամ տակաւին կազմութեան շրջանը բոլորած չէ կամ թէ ան անկանոն կազմով վաճառատուն մըն է: Բոլոր այն վաճառատունները որոնք շահագիտական հաշիւներու (*speculation*) վրայ հիմնուած են անկանոն կազմով ձեռնարկներ կ'ըլլան: Այսպիսի պարագաներու մէջ անոնց կացութիւնը աւելի խորէն քննել հարկ կ'ըլլայ:

Կազմէն վերջը կ'անցնինք կացութեան, այսինքն կ'ուզենք գիտնալ թէ վաճառատունը կարող է իր պարտապահանջները գոհացնելու: Այսպէսով վաճառատան մը լիքիտիթէին տեղեակ կ'ըլլան: Այս լիքիտիթէն բացարձակ լիքիտիթէն է և ոչ թէ յարաբերականը որուն վրայօք վերջը պիտի անդրադառնանք:

Նախ կ'ուզենք գիտնալ թէ որքան է ձեռնարկին պարտքը և ասոր որքանը երբ պիտի պահանջուի: Երբ տեսնենք թէ օրը հասած պարտքեր կան ասոնց փոխարէն արամադրելի ստացուածք մը կա՞յ թէ ոչ: Եթէ կայ ձեռնարկին ելմտական կացութիւն, լիքիտիթէն կանոնաւոր եղած կ'ըլլայ: Երբ տեսնենք թէ դրամատուններէ պահանջ մը գոյութիւն ունի այս առեւտրականին մը լաւ կացութեան մէջ ըլլալը ի յայտ կը բերէ, երբ ասկայն, տեսնենք թէ դրամատան պարտք մը ունի,



այս շատ խոր ուսումնասիրելի հարց մըն է: Գալով վաճառատան կացութեան օտարին վրայ ներշնչող վրատահութեան, այս կարելի է հասկնալ հաշուեկշռի մը վրայէն: Երբ տեսնենք թէ օտարը ձեռնարկին դրամագլուխ տրամադրած է առանց անկէ պարտամուրհակ մը կամ փոխզիւր առնելու առեւտրական ձեռնարկի մը վայելած վստահութիւնը ի յայտ կը բերէ: Երբ տեսնենք թէ ձեռնարկը իր բոլոր պարտքերուն փոխարէն պարտամուրհակ տուած է կը նշանակէ թէ ձեռնարկին վրայ շատ վստահութիւն չունի օտարը և անկէ պարտամուրհակ ստացած է, որպէսզի վճարման դժկամակութեան առջև իր առնելիքը վիճելի եղած չըլլայ: Երբ տեսնենք թէ ձեռնարկը իր պարտքերուն փոխարէն դրաներ տուած է իր պարտատէրերուն այս ալ աւելի անվստահ կացութեան մը մէջ գտնուիլը ի յայտ կը բերէ: Սակայն այս պարագան հասկնալու համար հարկաւոր է որ վաճառատունը իր կացութեան կշռին վրայ զանազանած ըլլայ իր պարտքերուն տեսակները: Բայց այս մասին վճիռ մը տալէ առաջ հարկաւոր է գիտնալ պատկան ճիւղին գործելու սկզբունքները: Կրնայ ըլլալ որ ճիւղի մը վրայ առնելիքւորները միշտ պարտամուրհակի փոխարէն ապրանք ծախեն, որպէսզի անոնք ալ իրենց կարգին դայն դրամատուն մը զեղչեն: Այս մասին լաւ տեղեկանալու համար կացութեան փոփոխութեանց հետեւելու պէտք կայ:

Վաճառատան մը կացութիւնը անոր կացութեան կշռին վրայէն ուսումնասիրել հարկ է:

Վաճառատան կշռին վրայ լիբիտէին հարցէն զատ շրջուն մէկ ֆօնտը գիտնալ ըարկաւոր է: ՇՐՋՈՒՆ ՖՕՆՏ (fond de roulement) շրջող ստացուածքին այն մասն

է սր մնայուն է, այսինքն շրջող ստացուածքին և ձեռնարկին կարճ պայմանաժամով պարտքերուն միջև եղած տարբերութիւն: Այս այն ստացուածքի մասն է որ կամ սեփական կամ թէ օտար երկար պայմանով դրամագլուխին շնորհիւ ձեռք ձգուած է: Երբ շրջող ֆօնտին տեղեակ ըլլանք որոշել պարտաւորիչ է թէ ան կարող է ձեռնարկին գոյութիւնը ապահովելու: Օրինակ՝ երբ վաճառատուն մը 1000 ոսկիի պատրաստ դրամ 2000 ոսկիի ապրանք և 1500 պահանջք այսինքն երբ 4500 շրջող ստացուածք մը ունենայ և ասոր փոխարէն 2500 կարճ պայմանաժամով պարտք մը ունենայ անոր շրջող ֆօնտը 2000 ոսկի եղած կ'ըլլայ: Այս գիտնալէն վերջ կը հարցնենք թէ այս 2000ի շրջող ֆօնտը կ'ապահովէ՞ ձեռնարկին գոյութիւնը: Այս գիտնալու համար աւելի մանրամասն ուսումնասիրութեանց հարկ կայ:

Առնենք մեր 3 քիւ Ֆօրմիւլը, որ կացութեան կշիռ մըն է կը տեսնենք քի գանձը բարձր է եւ 965ի պատրաստ դրամի գումար մը եւ 23624ի դրամատունէ պահանջ մը գոյութիւն ունի այս երկուք միանալով կշիռն գումարին 28<sup>0</sup>/0 կը կազմէին ինչ որ կը հաւասարի օտարի դրամագլուխին որ ան ալ իր կարգին 28<sup>0</sup>/0 է: Տակաւին ապրանքներ եւ պահանջներ կան որոնք դրամի վերածելու հաւանականութիւնը ցոյց կուտան: Գալով վաճառատան տրջուն ֆօնտին, ան 50223 է. (75223—25000 ինչ որ կ'ապահովէ ձեռնարկին գոյութիւնը քանի որ արդէն շուրջ 25000ի գանձ մը ունի:

Կացութեան կշիռն վրայ մեր ընելիք ուսումնասիրութիւնները աւարտելէ վերջ պատկան տարւոյ արդիւնքի կշիռն կ'անցնինք:

Նախ կ'ուզենք գիտնալ թէ ձեռնարկը իր ծախած ապրանքներէն շահած է: Եթէ շահած է այս շահը ԳՈՐ-ԾԱՌՆՈՒԹԵԱՆ ՇԱՀ անուան տակ արդիւնքի կշիռն շահերու կողմը կը գտնենք: Ասոր փոխարէն ծախքերու կողմը կը գտնենք այն բոլորը որոնք պատկան տարւոյ մէջ եղած ծախքերը կը ներկայացնեն և որոնք ԳՈՐ-ԾԱՌՆՈՒԹԵԱՆ ԾԱԽՔԵՐԸ կ'անուանուին:

Գործառնութեան ծախքերը ընդհանուր, մասնակի կամ թէ խառն կ'ըլլան: Այս ծախքերուն նշանակութիւնը նախորդ գլխուն մէջ ուսումնասիրած էինք: Ձեռնարկը իր գործառնութեան շահերէն և գործառնութեան ծախքերէն դատ կրնայ այլ շահեր ու ծախքեր ըրա՞ ըլլալ: Օրինակ կրնայ կալուած մը ունենալով (ազատ ստացուածք) անկէ վարձք մը գանձել: Այս գանձումը շահ մըն է սակայն գործառնութեան շահը չէ: Կամ ան կրնայ արտակարգ փաստներ կամ ծախքեր ըրած ըլլալ:

Այսպէսով արդիւնքի կշիռը երկու մաս կ'ունենայ, առաջին գործառնութեան մասը որ անոր շահերը և ծախքեր կը պարունակէ և ուրիշ մաս մըն ալ մնացեալը կը պարունակէ: Առաջինը արդիւնքի կշիռն օրկանիք մասը կը կոչուի, որովհետեւ ան ձեռնարկին օրկանիք գործունէութեան արդիւնաբերութիւնը ի յայտ կը բերէ: Երկրորդը ըստ պարագային՝ ոչ օրկանիք, պատահականութեան, ղեկավարման և արդիւնաբերութեան կը պատկանի:

Առնենք մեր 4 թիւ Ֆորմիւլը: Հոս կացութիւնը լուծած ձեռնարկուս արդիւնքի կշիռն ունից կը տեսնենք թէ 5250 ի գործառնութեան շահ մը եղած է, այսինքն ապահովները այսչափի շահով մը ծախուած են:

Այս շահը արդիւնքի կեռին 99 %օը կը կազմէ. Ասոր փոխարէն 53 %օ ի գործառնութեան ծախս մը եղած է, ուրեմն օրկանիք գործունեութեան արդիւնաբերութիւնէն կը մնայ 46 %օ: Այս 46 %օի վրան կ'աւելնայ արժեքուղ-  
 քերու շահաբերութիւնը, որ է՝ 1 %օ (58): Այսպէսով շահը կ'ըլլայ 47 %օ ասկէ պէտք է պակսեցնել 8 %օ այն վնասը որ յառաջ կ'ուզայ անգանձելի պահանջներէն: Մնացեալը՝ արդիւնքի կեռին զուամարին 39 %օ զուս շահն է, որ է՝ 2089 ոսկի:

Այսպէսով կացութեան և արդիւնքի կշիռներուն վրայէն ձեռնարկի մը պատկան տարւոյ կացութիւնը և արդիւնքը կը հասկնանք, բայց այսպէսով լրացուցած չենք ըլլար մեր լուծումը որովհետեւ մեր նպատակը միայն ձեռնարկին տուած կացութիւնը և անոր զուս շահը չէ: Եթէ հաշուեյարդար մը ըլլալիք ըլլար այս-  
 քանը բաւական էր, սակայն, մենք հասկնալ կ'ուզենք թէ առեւտրական ձեռնարկը, որ օրկանիզմ մըն է կա-  
 րող է իր պարտականութիւնը և յառաջադրանքները լրացունելու:

Հետեւաբար մեր ուսումնասիրութիւնները կը շարունակենք, որոնք երեք գլխաւոր ուսումնասիրութեան գեոթինները կը կազմեն.

- ա) Գործառնութիւնը:
- բ) Փոփոխութիւնները:
- գ) Ապագան:

Ասոնք կարենալ հասկնալու համար մաս մը խո-  
 րացումներ ընել հարկ է, այս պատճառաւ կարգ մը հաշուեկշիռն օժանդակ մասերուն կը դիմուի:

ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆ մէջ հասկնալիքնիս սա է թէ՛ վաճառատունը տարւոյ մէջ ինչ պայմաններու ներքե

գործած է: Նախ կ'ուզէինք գործառնութիւնը գիտնալ:

ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆԸ Վաճառատան մը վաճառած ապրանքներու գումարը կը ներկայացնէ: Այս ալ հաւկնալ կարելի կ'ըլլայ երբ մայր տոմարին ապրանաց պահանջող գումարը կամ թէ ընդհանուր մթերատետրին ելքը որոշուի: Այնպէս ինչպէս նախապէս ըսած ենք այս բանը ուրիշներու կարգին փակման ցուցակին վրայէն հասկնալ կարելի է: Գործառնութեան գումարք գիտնալէ վերջ զայն կը բաղդատենք գործառնութեան շահուն հետ այսպէսով կը գիտնանք թէ ծախուած ապրանքները որ քանի շահ մը տուած են: Այս պարագան որոշելէ վերջ կ'ուզենք գիտնալ թէ գործառնութեան և զուտ շահի համեմատութիւնը ինչ է, որով կրնանք հասկընալ թէ ինչ կարգի ծախքեր նուազեցուցած են շահը: Եթէ տեսնենք թէ պաշտօնէից բարձր թոշակներ կան կը նշանակէ թէ ձեռնարկը շահած է սակայն այս շահին կարեւոր մէկ մասը պաշտօնէից տուած է: Եթէ տեսնենք թէ բարձր տոկոսներ վճարած է, կը նշանակէ թէ ձեռնարկը իր շահը փոխատուին տուած է: Եթէ տեսնենք թէ ներածման բարձր մաքսեր վճարուած է, կը նշանակէ թէ վաճառատունը ապրանքները աւելի ապրանք ըրած է:

Ասկէ վերջ կ'անցնին շրջանին: ԵՐՁԱՆԸ այն թիւն զոր մեզ կը ցուցնէ թէ շրջող ստացուածքը քանի անգամ դարձած է, այսինքն քանի անգամ գանձէն ելլելով դարձեալ գանձ մտած է: Այս գիտնալու համար գործառնութեան գումարը կը բաղդատենք շրջող ստացուածքին հետ: Եթէ տեսնենք թէ 20000ի գործառնութեան մը համար քանի անգամ դարձած է, կը թիւն մը եղած է և շրջող ստացուածքն ալ 4000 է, կը նշանակէ թէ վաճառատունը 5 անգամ շրջան ըրած է:

Շրջանին վրայ ծանրանալ պէտք է որովհետեւ ան ձեռնարկի մը գործառնութեան շերմաչափն է :

Շրջանի թիւը որոշուելէ վերջ անոր շահին հետ ունեցած համեմատութիւնը կ'որոշենք : Նախ գործառնութեան շահուն և վերջը տարեկան զուտ շահուն հետ : Եթէ գործառնութեան շահուն հետ բաղդատենք կը գիտնանք թէ ամէն շրջանի որքան խառն շահ մը եղած է և եթէ զայն զուտ շահուն հետ բաղդատենք՝ շրջանի գլուխ ինկած զուտ շահը և թէ խառն շահը ինչ ծախքերով նուազած ըլլալը կը գիտնանք :

Ապա շրջանը առեւտրական ձեռնարկին առողջ վիճակը ի յայտ կը բերէ և որուն առաւելութիւնները հետեւեալներն են .

ա) Նուազ շրջող ստացուածքի մը կարօտ կ'ըլլուի , բ) ամէն շրջանի վրայ բեռոցող ընդհանուր ծախքի համեմատութիւնը կը պակսի , գ) անտեսական կացութիւնը աւելի լաւ կը նախատեսուի ևն . :

Սակայն սա ևս ըսել հարկ է թէ , երբ բարձր գործառնութեան գումար մը տեսնենք , այս չի նշանակեր թէ զանձը այս գումարին բոլորը ստացած է քանի որ ապրանքները յաճախ ալ ապստիկ կը ծախուին : Օրինակ՝ երբ տեսնենք թէ 100000ի գործառնութիւն մը եղած է , այսինքն այսչափի ապրանք ծախուած է , այս չի նշանակեր թէ այսչափի շրջան մը եղած է , երբ անոնց մէկ մասը ապստիկ ծախուելով յետագային պիտի մտնէ :

Առնենք մեր 1 թիւ Ֆորմիլին փակուան ցուցակը կը տեսնեիք թէ 54550ի գործառնութիւն մը եղած է , այսինքն այսչափ ապրանք ծախուած է սակայն , այս գումարը տակաւին ամբողջովին գանձը մտած չէ քանի որ 101 4ի պահանջք մը կայ որ յետագային գանձ պիտի մտնէ :

Գալով Երզանի արագութեան եւն, ասոնք մեր 7 թիւ Ֆորմիլիին վրայ կը տեսնենք: Այս վերջինը արդէն մեր 1 թիւ Ֆորմիլիին լրացուցիչ մասը կը կազմէ:

Այս լրացնելէ վերջ կ'անցնինք փոփոխութեանց՝ Փոփոխութեան Կարեւորը և ուսումնասիրելի մասը կացութեան վրայ է որ կ'ըլլայ, սակայն իբր օժանդակ կարեւոր են նաև արդիւնքի կշիռը, փակման ցուցակը և վերջինին մասնաւորաբար գործուելութիւնը ցուցնող մասը: Փոփոխութեան հետեւելու համար բաղդատակաւ զբութեամբ պէտք է պատրաստուած ըլլայ եթէ միայն մէկ տարուան մը փոփոխութիւնը հասկնալ ուղուի և եթէ շարք մը տարիներունը կը փափաքուի վիճակագրութեան զբութեամբ լուծել հարկ է:

Փոփոխութեանց մէջ կ'ուղուի հասկնալ թէ ի՞նչ են շարժումները և այս պատճառաւ կարգաւ կ'ընթանանք:

Փոփոխութիւնը կրնայ կապուած ստացուածքին գումարը փոխած ըլլալ: Օրինակ երբ վաճառատանը կարասիներ գնէ, անոր կապուած ստացուածքը աւելցած կ'ըլլայ: Նուազած կ'ըլլայ, երբ ան հիննալու պատճառաւ ամօրդիտմանի ենթակայ ըլլայ ևն.:

Կապուած ստացուածքի փոփոխութիւնը մեծ կարեւորութիւն մը չ'ունի վաճառատան համար, քանի որ անոնց այս կարգի ստացուածքնին այնքան կարեւոր չէ այնպէս ինչպէս ճարտարարուեստական ձեռնարկներու մէջ:

Վաճառատան համար փոփոխութեանց մէջ մանրամասն լուծուելիք հարցը շրջող ստացուածքին կրած փոփոխութիւնն է:

Շրջող ստացուածքը փոխուած կ'ըլլայ հետեւեալ երեք պարագաներուն տակ.

ա) Երջող ստացուածքի շրջանի արտաբերութիւնը փոխուած կ'ըլլայ:

բ) Երջող ստացուածքի ներքին համեմատութիւնը փոխուած կ'ըլլայ:

գ) Երջող ստացուածքի արտաքին համեմատութիւնը փոխուած կ'ըլլայ:

Կրնայ ևս այս երեքը միասին պատահած ըլլալ:

Երջող ստացուածքին շրջանը փոխուած կ'ըլլայ երբ ձեռնարկը նուազ անգամներ գանձէն դրամ հանէ և մտցնէ: Ասոր պատճառ կամ սա կ'ըլլայ թէ ձեռնարկը ազնայ մը գուշակելով նոր ապրանքներ չի գներ կամ թէ իր ապրանքները ապառիկ գներ ուղղներու չի տար և այսպէսով շրջանը կը դանդաղի: Այս երկուքէն որը ըլլայ գործունէութեան կշիռն վրայէն հասկնալ կարելի է: Եթէ տեսնենք թէ ապրանքներ նոր կարեւոր մուտք և ելք մը ունեցած չեն, կը նշանակէ թէ ձեռնարկը գործառնութիւնը նուազեցուցած է, կամ եթէ տեսնենք թէ պարտականութիւնն շատ մուտք մը և ելք մը եղած է կը նշանակէ թէ ձեռնարկը իր ապրանքները ապառիկ աւելցած չէ: Այս երկու պարագաները կամայ եղած են, կրնայ նաև ազամայ ըլլալ: Երբ ձեռնարկը իր նախկին մթերքը կարող չ'ըլլայ վաճառելու նոր մթերք չի գներ կամ եթէ կարող չ'ըլլայ իր նախկին պահանջը գանձելու նոր վարկ չի բանար և այսպէսով շրջանը կը դանդաղի:

Ասոր փոխարէն կրնայ նաև շրջող ստացուածքը նախորդ տարւոյ բազդատմամբ աւելի անգամներ շրջան ըրած ըլլալ: Այս կ'ըլլայ երբ վերոյիշեալ պարագային հակառակը պատահի:

Կը ներկայանան նաև այնպիսի պարագաներ որ



ձեռնարկը իր դանդաղ շրջանով աւելի շահ մը ապահո-  
վելու կարող ըլլայ: Օրինակ՝ երբ նորոյթի ապրանքներ  
գնուին ու ծախուին ասոնք ընդհանրապէս դանդաղ  
շրջանի մը ենթակայ են, սակայն բարձր շահ մը ապա-  
հովուած կ'ըլլան: Այս պարագան, կամ շրջանի փոփո-  
խութեան պարագան արդիւնքի կշռին վրայի ունեցած  
ազդեցութենէն ուսումնասիրել հարկ է:

Այսպէսով այնպիսի պարագայ մը ուսումնասիրեցինք  
ուր կացութիւնը նոյնը սակայն, անոր շրջանը կը փոխ-  
ուէր: Ասոր փոխարէն կայ այն պարագան ուր շրջող  
ստացուածքը իր նախկին ներքին համեմատութիւնը  
կը կորսնցնէ: Օրինակ՝ ձեռնարկ մը որ նախորդ տարին  
60000 ի շրջող ստացուածք մը ունի եւ որուն մէջ գանձը,  
ապրանքը և պահանջքը հաւասարաբար 20000 ի բաժին  
մը ունին:

Երբ տեսնելու ըլլանք թէ յաջորդ տարին դարձեալ  
շրջող ստացուածքը 60000 ըլլալով հանդերձ ասոր մէջ  
գանձը 10000 ի իջած և ապրանքը ու պահանջը 25000  
ականի բարձրացած են այսպէսով կը գիտնանք թէ  
անոր ներքին համեմատութիւնը փոփոխութիւն մը  
կրած է:

Այսպիսի փոփոխութեանց նշանակութիւնը հասկնալու  
համար հարկաւոր է գիտնալ թէ փոխուած է նաև գոր-  
ծառնութիւնը, այսինքն շրջանի արագութիւնը: Եթէ չէ  
փոխուած այս մեծ նշանակութիւն մը չունի և սա պա-  
րագան ի յայտ կը բերէ թէ ձեռնարկը կամայ կամ  
ակամայ իր գործունէութեան ձևը փոխած է: Օրինակ  
այսպէս՝ փոխանակ ապրանքը ապառիկ ծախելու գայն  
կանխիկ կը ծախէ և այսպէսով պահանջքին տեղ գանձը  
բարձրացած կ'ըլլայ: Երբ սակայն գործառնութեան գու-

մտքը իր շրջանի արագութիւնը փոխած ըլլայ հարցը կը փոխուի և ծանրանալ հարկ կ'ըլլայ:

Այն պարագային երբ շրջող ստացուածքին ներքին համեմատութիւնը փոխուած և միայնգամայն ալ արագ շրջան մը եղած է այս փոփոխութիւնը կացութեան կամ շահաբերութեան տեսակէտէն կրնայ նպաստաւոր կամ աննպաստ եղած ըլլալ:

Շրջանի արագութիւնը առաջ կուգայ շնորհիւ աւելցող գնման, վաճառման և դանձման կարելիութեանց: Այս պարագան կը նշանակէ թէ շնորհիւ նոր ղեկավարութեան մը գործունէութիւնը ոգևորուած է և որուն պատճառը կարելի է հասկնալ եթէ որոշենք թէ ներքին ո՞ր մասին համեմատութիւնը փոխուած է: Եթէ ապրանքներու մթերքը աւելցած է, կը նշանակէ թէ ձեռնարկը շնորհիւ իր բարձր մթերքին կրցած է շատ անգամներ շրջան ընել տալ իր շրջող ստացուածքը և եթէ պահանջներն են որ աւելցած են կը նշանակէ թէ շրջանը ոգևորութիւնը իր բարձրացած վարկերուն կը պարտի ևն:

Եթէ շրջանը դանդաղած և ներքին համեմատութիւնն ալ փոխուած է այս շատ լաւ կացութիւն մը ստեղծած է ըլլար: Ասոր գլխաւոր պատճառները հետեւեալներն են: Գնման և վաճառման կարելիութեանց նուազիլը և կամ թէ ձեռնարկին դանձման կարելիութեան պակասիլը որ ի յայտ կուգայ երբ պահանջները աւելցած են: Վաճառման կարելիութեան նուազիլն ալ ի յայտ կուգայ երբ ապրանքներու մթերքը աւելցած ըլլայ:

Շրջանի արագութեան կամ դանդաղութեան պատճառաւ շահաբերութեան կրած փոփոխութիւնը արդիւնքի կշիռն վրայէն ուսումնասիրել հարկ է:

Շրջող ստացուածքին շրջանի և ներքին համեմատութեան փոփոխութիւն կրելը ուսումնասիրելէ վերջ կ'անցնինք անոր արտաքին գումարի փոփոխութեան: Արտաքին գումարը բարձրացած՝ փոփոխութիւն մը կրած կ'ըլլայ երբ օրինակ 60000 ի շրջող ստացուածքը 80000 ի բարձրացած ըլլայ:

Այս փոփոխութիւնը երկու գլխաւոր պատճառներ կրնայ ունենալ. կամ այն է թէ՛ ապրանաց գիները փոփոխութիւն մը կը կրէին և այս պատճառաւ նոյն քանակութեամբ ապրանքով գնելու համար առաւել կամ նուազ շրջող ստացուածք մը պէտք կ'ըլլայ և կամ այն է թէ ձեռնարկը իր գործունէութեան եղանակը փոխած է: Օրինակ՝ վաճառական մը սովորաբար իր մթերանոցին մէջ 10000 մէթր կերպաս մը կ'ունենայ և այս 0.20 ոսկիէն կ'արժէ 2000: Այն առնէ երբ գիները բարձրանան և մէթրը 0.30 արժէ, վաճառականը իր 10000 մէթրի սովորական քանակութեան համար 3000 ի ապրանքի մթերք մը ունենալու ստիպուած կ'ըլլայ: Այս պատճառաւ ալ պահանջները համեմատաբար բարձրացած պէտք է ըլլան քանի որ նախկին քանակութեամբ ծախուած ապրանքները աւելի գումար մը կը բռնեն:

Ձեռնարկին գործունէութեան եղանակէն կրած փոփոխութիւնը յառաջ կուգայ երբ օրինակ, վարիչ մը գիներու բարձրացում մը նախատեսելով միշտ բարձր մթերք ունենալ ուզէ: Այս երկուքը շրջող ստացուածքի բարձրութեան համար օրինակներ են, կրնայ նուազելու պարագաներ ներկայանալ երբ հակառակը պատահի:

Երբ շրջող ստացուածքի արտաքին գումարը փոխուած թեսնենք, կ'ուզենք գիտնալ թէ այս փոփոխութիւնը նկատի առնելով ներքին համեմատութիւնն ալ

նոյն փոփոխութեան ենթակայ եղած է և թէ միանգամայն ալ անոր շրջանի արագութիւնը փոխուած է: Ասոնց վրայօք պէտք եղած ուսումնասիրութիւնը ըրած էինք և սակայն կը մնայ գիտնալ թէ շրջող ստացուածքը ի գին կացութեան կշռին ո՞ր մասին փոփոխութիւն մը կրած է:

Այս պարագան ճշդելու համար նախ որոշել հարկ է թէ կացութեան կշռին ընդհանուր գումարը փոխուած է: Եթէ շրջող ստացուածքի արտաքին բարձրութիւնը կացութեան կշռին գումարը փոխած չէ, կը նշանակէ թէ այս փոփոխութիւնը աքթիֆի վրայ միայն ազդած է:

Եթէ փոխուած չէ կամ այն է թէ ձեռնարկը իր շրջող ստացուածքը ազատ կամ կապուած ստացուածքի մը վերածել ուզած է: Առաջինը շատ հաւանական չէ, քանի որ վաճառատունները կապուած ստացուածքի համար մեծ յատկացումներ չեն ըներ: Ասոնցմէ զատ շրջող ստացուածքը նուազած կ'ըլլայ երբ վնաս մը ըլլայ: Այս վնասը աքթիֆի կողմը կը տեսնենք առժամաբար:

Անանուն ընկերութիւնները վնասը առժամաբար աքթիֆին մաս կազմել տալու պարտաւոր են և եթէ անձնական ձեռնարկ մը և վնասը սեփական դրամագլուխը պակսեցնելով գոցուած է, հարկաւոր է զայն, լուծման ժամանակ, աքթիֆի կողմը նշանակել (ՏԻՍ էջ 10):

Եթէ այս վնասը գիներու անկման պատճառաւ յառաջ գալով ձեռնարկին շրջող ստացուածքը պակսեցուցած է, այս շատ վնասակար կացութեան մը մասնուած չըլլար ձեռնարկը, քանի որ, պակսած շրջող ստացուածքը կարելիութիւնը կուտայ դարձեալ նախկին

ապրանքի քանակութեամբ գործելու որովհետեւ արդէն ապրանքի գիները անկում կրած են: Եթէ սակայն Չեսսը այլ պատճառներէ է, օրինակ այն ատեն երբ բարձր ծախքեր եղած են, այս ձեռնարկին գործունէութիւնը կաղացուցած կ'ըլլայ:

Ասոր փոխարէն եթէ տեսնենք թէ շրջող ստացուածքը փոխած է նաև կօցութեան կշիռն գումարը կը նշանակէ թէ շրջող ստացուածքը փոխուած է ի գին դրամագլուխին: Այսպիսի պարագայի մը եթէ շրջող ստացուածքը բարձրացած է կը մնայ գիտնալ թէ ասոր փոխարէն որ կարգի դրամագլուխը բարձրացած է: Կրնայ սեփական կամ օտար դրամագլուխը բարձրացած ըլլալ: Սեփական դրամագլուխը բարձրացած կ'ըլլայ երբ շահ մը գոյացած ըլլայ կամ գիներու բարձրացումէն և կամ լաւ գործունէութեանը չնորհիւ: Օտար դրամագլուխը բարձրացած կ'ըլլայ կամայ կամ ակամայ, կամայ բարձրացած կ'ըլլայ երբ բարձր շրջող ստացուածք մը շահաւոր տեսնուի և այս ալ չնորհիւ օտարին վարկին ըլլայ, ակամայ կ'ըլլայ երբ ձեռնարկը գէշ գործունէութեան մը պատճառաւ իր շրջանը դանդաղեցուցած ըլլալով զայն ոգևորելու համար նոր դրամագլուխի մը պէտք ունենայ: Այսպիսի պարագայի մը նկատի առնել պէտք է թէ օտարին դրամագլուխին համար ուրղակի կամ անուղղակի վճարուած վարձքին փոխարէն շահ մը գոյացած է: Այս արդիւնքի կշիռն է որ կարող է ցուցնելու:

Շրջող ստացուածքի փոփոխութիւնները ուսումնասիրելէ վերջ կ'անցնինք ազատ ստացուածքի կրած փոփոխութեան:

Ազատ ստացուածքին ներքին համեմատութիւնը

կրնայ փոխուած ըլլալ, երբ կայուածները ծախուին և անոր արժեթուղթ գնուի: Սակայն այսպիսի փոփոխութեան մը ձեռնարկին վիճակը բարելաւած կամ վատթարացած ըլլալը օրուան տնտեսական կացութեան վրայ հիմնուելով վճուել ճիշտը կ'ըլլայ, որովհետեւ ընդհանուրին ի գորու եղող օրէնք մը գոյութիւն չ'ունի. կան այնպիսի ժամանակներ որ կայուածը աւելի շահաւոր ըլլայ և ասոր փոխարէն կան այնպիսի ժամանակներ որ արժեթուղթերը աւելի շահաւոր ըլլան: Այս հարցը արդէն ձեռնարկին գործունէութեան հետ կապ մը չ'ունենալով մեր նիւթէն ալ դուրս պիտի մնայ և կը մնայ ուսումնասիրել անոր արտաքին գումարի բարձրութեան կրած փոփոխութիւնը:

Ազատ ստացուածքը փոխուած ըլլալու պարագային կամ այն է թէ շրջող ստացուածքը փոփոխութիւն մը կրած է և կամ թէ դրամագլուխ մը ետ վճարուած է:

Այս երկուքը կացութեան կշռին վրայէն կրնանք զիտնալ: Առաջինը եղած կ'ըլլայ երբ ձեռնարկը ընդլայնելու իր շրջող ստացուածքը բարձրացնելու պէտք տեսնէ և այս ալ օտարին դրամագլուխովը ընել չ'ուզէ: Երկրորդը կ'ըլլայ երբ վաճառատան տէրը կամ տէրերը դրամ քաշեն: Ինչպէս նախապէս (էջ 10) ըսած ենք այս քաշուած դրամը առժամաբար աքթիֆի կողմը արձանագրել հարկ է:

Այս երկու պարագաներէն զատ շրջող ստացուածքը նուազած կ'ըլլայ երբ մեասի մը պարագային շրջող ստացուածքի գումարը պակսեցնել կ'ուզուի: Օրինակ՝ եթէ ադրենք թէ 10000 ի շրջող և 5000 ի ազատ ստացուածք մը գոյութիւն ունենայ: Ու է կերպով 2000 ի մը կը գոյանայ և շրջող ստացուածքը 8000 ի կ'իջնէ սա-

կայն, ձեռնարկը դարձեալ իր նախկին շրջող դրամագլուխով գործելու ղեկով պակասած 2000ը ազատ ստացուածքէն կ'առնէ և այսպէսով շրջող ստացուածքը դարձեալ 10000 կ'ըլլայ, ազատ ստացուածքը 3000 ի կ'իջնէ 2000ի վնասին պատճառաւ:

Այսպէսով զանազան ստացուածքներու կրած գլուխաւոր փոփոխութիւնները ուսումնասիրած կ'ըլլանք և սակայն, աքթիֆը կազմը վերջացնելէ առաջ վաճառատան վնասելու պարագան ևս նկատի առնել հարկ էր որուն վրայօք արդէն ստացուածքի կրած փոփոխութիւնները ուսումնասիրած ատեննիս այս պարագան ևս նկատողութեան առած էինք:

Վնասի մը պարագային նախ կ'ուզենք գիտնալ թէ ինք ևս առժամաբար աքթիֆին կողմը նշանակուելով հանդերձ կացութեան կշիռը բարձրացած է թէ ոչ:

Եթէ բարձրացած չէ, կը նշանակէ թէ ձեռնարկը նուազած ստացուածքով մը կը գործէ:

Եթէ բարձրացած է կը նշանակէ թէ ձեռնարկը իր կրած վնասին պատճառաւ նուազած շրջող ստացուածքը նախկին գումարին բարձրացնելու համար նոր դրամագլուխի դիմած է, որուն վրայօք վարը պիտի շարունակենք մեր ուսումնասիրութիւնը:

Կացութիւնը կշիռն աքթիֆի կողմը ուսումնասիրելէ վերջ կ'անցնինք բասիֆ կողմին որ դրամագլուխի կողմէն է. սեփական կամ օտար դրամագլուխ: Նախ կ'ուզենք գիտնալ թէ կացութեան կշիռն գումարը փոխուած է: Եթէ փոխուած չէ դրամագլուխը նոյնը մնացած կ'ըլլայ:

Այս պարագային սակայն, կրնայ կացութիւնը փոխուած ըլլալ երբ շահու մը պատճառաւ սեփական դրամա-

գլուխը բնականէն բարձրանայ և օտար դրամագլուխի նուազ պէտք զգացուի: Նոյնպէս կրնայ ըլլալ որ օտար կարճ պայմանաժամով դրամագլուխը պակսի և երկար պայմանաժամովը աւելցած ըլլայ երբ, օրինակ, անանուն ընկերութիւնն եղող վաճառատան մը պարտաթուղթը (երկար պայմանաժամով օտար դրամագլուխը) չըջաբերութեան հանելով մնայուն դրամ մը գտնէ և այսպէսով դրամատանց վարկին պէս կարճ պայմանաժամով օտար դրամագլխի նուազ պէտք մը զգայ:

Նոյնպէս կրնայ հակառակը պատահած ըլլալ երբ օրինակ, երկար պայմանաժամով պարտքերուն մասնավաճարներուն համար ստիպուի կարճ պայմանաժամով փոխառութիւն մը կնքելու և այսպէս երկար պայմանաժամով պարտքերը կարճ պայմանաժամով պարտքերու վերածուած կ'ըլլան:

Եթէ կացութեան կշիռն գումարը, կամ հոս դրամագլուխի ընդհանուր գումարը բարձրութիւնն մը կրած է, գիտնալ հարկաւոր է թէ՛ ո՞ր մասն է զայն բարձրացնողը: Եթէ տեսնենք թէ սեփական դրամագլուխը շահու մը շնորհիւ բարձրացած է նշանակէ թէ ձեռնարկին դրամագլուխի կազմը բարելաւուած է: Եթէ տեսնենք թէ օտար դրամագլուխի համեմատութիւնը բարձրացած է ստոր պատճառը կամ այն է թէ ձեռնարկը ընդլայնիլ ուզած է օտարին դրամագլուխին միջոցաւ և կամ թէ վնաս մը գոյացած, բայց այս վնասը ձեռնարկին ստացուածքը նուազեցուցած չըլլալու համար օտարին դիմուած է: Երկրորդը ի յայտ կուգայ երբ աքթիֆի կողմը վնաս մը տեսնուի, ինչ որ՝ վաճառատունը շատ լաւ վիճակի մը մէջ ձգած չըլլար:

Ահա ասոնք են վաճառատան մը հաշուեկշիռն



կրած գլխաւոր փոփոխութիւնները: Այսպէսով եթէ անբաղդատական դրութեամբ ներկայացուցած է տարուան մը մէջի և կամ երբ վիճակագրական դրութեամբ պատրաստուած է շարք մը տարիներու ձեռնարկին գործունէութեան, կացութեան և արդիւնաբերութեան փոփոխութեանց հետեւած կ'ըլլանք: Եթէ վաճառատան միակ տարւոյ մը հաշուեկշռին վրայէն չի կարենանք անոր վիճակին կատարելագոյն թափանցել այսպէսով, անտարակոյս կրցած ենք մեր նպատակին հասնիլ:

Եթէ ձեռնարկին վիճակը մեղ այսպէսով ծանօթանայ մեր գործը և ուսումնասիրութիւնը այսինքն հաշուեկշռին լուծումը աւարտած չըլլար քանի որ տակաւին անոր ապագան նախատեսչու հարցը կայ ինչ որ սակայն, արդէն դիւրացած է:

Անոր ապագան նախատեսելու համար մեր այս կարգի ուսումնասիրութիւնը չորս մասի կը բաժնենք, ասոնք են՝

- ա) Մրցակցութեան կարողութիւնը,
- բ) Շահու բաշխելիութիւնը,
- գ) Ապրանաց կացութիւնը,
- դ) դիմադրական կարողութիւնը:

ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ մէջ կ'ուզենք զիտնալ թէ ի՞նչ է վաճառատան վիճակը բաղդատմամբ իր ճիւղին վրայ գործող այլ վաճառատուններուն: Եթէ տեսնենք թէ վաճառատունը զնատած է և իր մրցորդները չեն վնասած կը նշանակէ թէ ձեռնարկը մրցակցութեան կարողութիւնէն զուրկ մնացած է: Այսպիսի պարագայի մը առջև կ'ուզենք զիտնալ թէ ի՞նչ է ասոր պատճառը, և այս պարագան պիտի կրկնուի, թէ ոչ՝ անցողական էր:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԵՐՈՒ ՇԱՀՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ այսինքն շահը ձեռնարկէն քաշելու հարցը շատ դժուարին հարց մըն է, որովհետեւ ամէն անգամ որ շահուի շահը չի կրնար քաշուիլ: Եթէ շահը անմիջապէս քաշել ուզուի պէտք է որ գանձը զայն պարունակէ:

Եթէ տեսնենք թէ գանձը չէ բարձրացած և շահը ապրանքներու մթերքին բարձրացման յատկացուած է, այս շահը անմիջապէս դուրս հանել ճիշդ չէ, զայն մաս առ մաս քաշելու է: Իսկ երբեմն պարագաներու մէջ շահը քաշել բոլորովին անհնարին կը դառնայ, օրինակ՝ երբ շահ մը գոյութիւն ունի սակայն այս շահին փոխարէն այնպիսի պահանջներ կան որոնք երկար պայմանաժամներէ վերջը գանձելի կամ երբեմն ալ գանձուելիքնին տարակուսելու է: Այսպիսի պարագայի մը վաճառատունէն շահը քաշել գրեթէ անհնարին է:

Պէտք է նկատի առնել նաև որ քաշուած շահի համեմատութիւնը միշտ փոփոխութեան չենթարկուի:

ԱՊՐԱՆԱՑ ԿՍՑՈՒԹԵԱՆ հարցը ևս շատ կարևոր է ապագայի համար: Հոս կ'ուզենք գիտնալ թէ ձեռնարկը՝ վաճառատունը պիտի կարենայ իր վաճառումները կանոնաւոր ընել այսինքն կարող պիտի ըլլա՞յ իր նախկին յաճախորդները գոհացնելու: Հոս շահու և վնասի պարագան դուրս են այս հարցէն:

Եթէ ապրանքներու գումարի քանակութիւնը նուազած է այս չի նշանակէր թէ ձեռնարկը իր վաճառածէն աւելի նուազ քանակութեամբ պիտի ծախէ քանի որ կրնայ ըլլալ թէ՛ ապրանքներու զինները անկում կրած են և նախկին քանակութիւնը աւելի պզտիկ գումարով մը ունենալ կարելի կ'ըլլայ: Այս այսպէս ըլլալով երբ քարձր ապրանքի գումար մը տեսնենք կարող չենք

ըսելու թէ ձեռնարկը իր սպառման կարողութիւնը բարձրացուցած է այն ատեն երբ գիները բարձրացած ըլլան :

Այս պատճառաւ ձեռնարկին սպրանքի մթերքը իր յառաջադրանքներուն հաշտ եղած ըլլալը ուսումնասիրելու համար պէտք է գիները նկատի առնել : Եթէ գիները բարձրացած են բարձր գումարով մթերք մը ունենալ սախարդական կը դառնայ : Օրինակ՝ եթէ վաճառատուն մը 1000 ոսկիի սպրանքի մթերք մը կ'ունենայ սովորաբար և եթէ երկրին դրամը 50 % անկում մը կրէ անոր 1000 ոսկիի մթերքը կարող չըլլար նախկին գործունէութիւնը ապագային մէջ ապահովելու քանի որ դրամի մը անկումը սպրանքներու գիները կը բարձրացնէ :

Վաճառատան մը սպրանքներու կացութիւնը ուսումնասիրած ատեննիս պէտք է գիտնալ նաև թէ ձեռնարկը ունի այնպիսի սպրանքներ որոնք բարձր գինով գնուած են, տակաւին ծախուած չեն և նայնութեամբ, առանց արժէքի նուազման նշանակուած են կացութեան կշտին վրայ :

Այս պարագան ի յայտ կուգայ երբ գործունէութեան շահ մը չըլլայ, սպրանաց մթերքը բարձր ըլլայ, բնականուր ծախքերը աւելցած ըլլան, գործառնութիւնը նուազած և չրջանը դանդաղած ըլլայ : Այս պարագան յառաջ կուգայ աննորմալ անտեսական կացութիւնէ մը, տազնապէ մը : Հոս պէտք է գիտնալ թէ տազնազը քօնժօնքթիւրէլ է թէ սղիւրիւքղիւրէլ այսինքն անցողակի թէ մնայուն : Եթէ սղիւրիւքղիւրէլ ըլլայ բնականէն այս սպրանքներուն բարձր գին մը ունենալին հաւտնական չէ ապագային մէջ ալ : Եթէ քօնժօնքթիւրէլ

է հաւանականութիւն կայ թէ ապրանքներու գինները պիտի բարձրանան, սակայն սպասել հարկ է որպէս զի բարձրանան: Սակայն, անոր սպասելի ըլլալը կամ ոչ վաճառատան մը դիմադրական կարողութեան մաս կը կազմէ:

ԴԻՄԱԴԻՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ձեռնարկի մը վճարումները ընելու համար ունեցած կարելիութիւնն է: Այսինքն բարձրացած և յարաբերական լիքիտիթէն:

Եթէ ապրանքները անկում կրած են և ապագային մէջ բարձրանալու յոյսը կը ներշնջեն, բնականէն ձեռնարկը չուզեր զանոնք անկեալ գինով մը ձեռքէ հանել և կ'որոշէ սպասել: Սակայն այս միջոցին վճարումներ ընել հարկ կ'ըլլայ, եթէ ապրանքները ապագայի գնուած են ասոնց պայմանաժամները կը հասնին և եթէ ապրանքները չի ծախուին գանձը կը ստիպուի պարտքերը վճարելու ատանց այդ վճարումներուն փոխարէն ըլլալիք զանձումներուն: Այս գիտնալու համար ձեռնարկին գանձը և կարճ պայմանաժամով պարտքերը բաղդասելու ենք և եթէ այս գոհացուցիչ է կը նշանակէ թէ ան կրնայ սպասել ատանց իր բացարձակ ցած լիքիտիթէն խախտելու: Սակայն, տակաւին վաճառատան դիմադրական կարողութիւնը գիտնալու համար անոր յարաբերական լիքիտիթէն ևս գիտնալ հարկ է: Յարաբերական լիքիտիթէն աս է թէ ձեռնարկը կարող է ծախքերու դիմանալու, երբ գինները անկում կրեն և վաճառատունը որոշէ սպասել: Այսպիսի պարագայի մը մէջ միայն պարտքերը վճարել բաւական չէ, պէտք է նաև պաշտօնէից թոշակ, վաճառատան վարձք, տուրք ևն. վճարուին:

Այս պարագան որ յարաբերական լիքիտիթէ կը

կոչուի, կ'որոշենք երբ տարւոյ արդիւնքի կշռին վրայի ծախքերը գանձին հետ բաղդատենք: Սակայն ծախքերուն այն մասը որոնք ապրանքներու մուտքին համար եղած են, պէտք է որ նկատի չառնուին: Օրինակ՝ եթէ ներածուած ապրանքներու համար վճարուած մաքսը իբր ծախք կ'երևայ արդիւնքի կշռին վրայ այս, նկատի առնելու չէ ապաման պարագային համար:

Եւ երբ մեր 10 քիւ ֆորմիլը ձեռքերնիս առնենք անմիջապէս կը հասկնանք քէ ան վանառասան մը հաշուեկէիւն է, քանի որ անոր կացութեան կշռին վրայ ապրանքներ գոյութիւն ունենալը կը տեսնենք առանց գործարանի: Կացութեան կշիռը իր ստացուածքները խումբերու բաժնուած չէ սակայն շատ ամփոփ քլլալուն ինքնահասկնալի են: Գիտենք որ պատկան ձեռնարկը նախապէս ուսումնասիրած էինք եւ զինքը երրորդ տարւոյ վերջը շատ սկարացած տեսնելով վերակենդանացում մը պէտք տեսած էինք, ինչ որ եղած է 3 ի Բ. ի եւ Գ. ի վրայ: Հաս պիտի ուզէինք ուսումնասիրել քէ ձեռնարկը սկարացնող փոփոխութիւն երբ որո՞նք եղած են եւ ինչ պատճառաւ ան անկարող է շարունակելու իր գործունէութիւնը: Այս ուսումնասիրութեան համար գործունէութեան կշիռը մեզ կը պակսի եւ այս պատճառաւ կացութեան կշռին փոփոխութիւններուն վրայ միայն ծանրանալ պիտի ուզէինք արդիւնքի կշիռը օգտագործելով:

Առաջին տարւոյ վերջը կը տեսնենք քէ ձեռնարկը լաւ վիճակ մը ունի: Գանձը առողջ է, (117 հազար) լիֆիսիքէն կանոնաւոր է, որովհետեւ միայն 137,1 հազար պարտավորեցակներ ունի, շահաբեր է որովհետեւ 41.6 հազարի գուտ շահ մը գոյանալով բարդուած է նախ-

կին շահուն վրայ եւ այնպէսով բաշխելի շահը 43.3 ի բարձրացած է:

Երկրորդ տարին ձեռնարկը իր լաւ վիճակը կորսնցուցած է, որովհետեւ շրջող ստացուածքը աւելցած է, ապրանքները 230 հազարէն 443 հազարի պահանջը 55 հազարէն 78 հազարի բարձրացած է եւ սկարացած է գանձը, 117 հազարէն 13 հազարի իջած: Այս բաւական չէ եկած եւ պարտավորեցանքը 137.1 հազարէն 243 հազարի բարձրացած են եւ ասկէ գոտ քրամասան պահանջ մը գոյացած է, ինչ որ գանձին վերջին ծայր սկարուքիւնը ի յայտ կը բերէ:

Շրջող ստացուածքը երբեմն կ'աւելնայ կամայ, օրինակ՝ երբ բարձրացում մը նախատեսուի, սակայն, հոս ակամայ բարձրացած ըլլալը կրնանք որոշել, քանի որ 73,4 հազարի վնաս մը գոյացած է: Եթէ արդիւնքի կէտը ուսումնասիրենք սա եզրակացութեան կը հանգիստ քէ ձեռնարկը իր նախկին մթերքը առանց ծախելու նոր ապրանք գնած է, քանի որ՝ ներածման մասին ծախքը աւելցած կը տեսնենք:

Երրորդ տարույ մէջ ձեռնարկը բոլորովին գեռ վիճակի մը մասնուած է, վնասը 124,8 հազարի, Պարտավորեցանքը 299 հազարի, դրամասանց եղող պարտքը 220,5 հազարի բարձրացած են: Փանձը սկարացած է (4 հազար): Վահանած ապրանքներէն շատ ջնջին՝ 14.5, հազար գործունեութեան շահ մը եղած է եւ այս արդէն միայն վնասուած տոկոսները չի գոցեր: Ձեռնարկը արդէն բոլորովին նոր ապրանք գնելէ ետ կեցած է ինչ որ ի յայտ կուգայ վնասուած մասին նուազութեան:

Այս պայմաններու ներքեւ ձեռնարկը գործելու անկարող է, որովհետեւ ապրանքները չեն ծախուիր, պա-

հանջները չեն գանձուեր, երջանը բոլորովին դանդաղած է եւ կարն պայմանաժամով օտար դրամագլուխը չէ ապահովուած երջուն Ֆօնետով մը:

Այս պայմաններուն ներքեւ օտարը զիջումներ կ'ընէ եւ ստացուածներուն արժեքը կը նուազեցնեն, որպէս զի անվանառ բարձր մթերքը ծախուի եւն. ինչ որ վերակենդանացում կ'ըսուի:

Կրաձիփի վրայ եւս ուսումնասիրած ըլլալու համար առնենք մեր 1 թիւ կրաձիփը որ, մեր մէկ թիւ Ֆօրմիլի հաշուեկէտին կրաձիփ ձեւով ներկայացուածն է: Ա.ը կացութիւնը եւ Բ.ը արդիւնքը կը ցուցնէ:

Կացութեան վրայ գետին մը կը տեսնենք այս գետնոյի գումար մը կը ներկայացնէ եւ որմէ կ'երկարին գանազան մասեր: Մասերը հաստ գիծով մը իրարմէ բաժնուած են: Այս գծին ձախ կողմը ձեռնարկին ստացուածները եւ աջ կողմը դրամագլուխները կը գտնուին: Անդին բուանեանները բարձրացող մասերուն գումարը կ'որոշեն: Պարտաւորութիւնը 15000էն քիչ մը նուազ ըլլալին կը տեսնենք: Այսպէսով կրնանք ձեռնարկի մը բոլոր մասերը իրարու հետ բաղդատել թէ՛ ստացուածք թէ՛ դրամագլուխ:

Կը տեսնենք թէ շահու բարձրութիւնը շատ ջնջին է բաղդատմամբ նախկին դրամագլուխին ինչ որ ձեռնարկին անշահաբերութիւնը յայտ կը բերէ: Կը տեսնենք թէ պարտաւորութիւնը եւ պարտամուրհակները ապահովուած են քանի որ արդէն դրամասուններէ պահանջը եւ պարտաւորութիւնը միայն նոյն բարձրութիւնը ունին եւն.:

Նոյն կրաձիփին Բ.ը արդիւնքը կը պարզէ, ան ալ հաստը գիծով մը ծախսերը հասոյքներէն (շահերէն) կը բաժնէ: Կը տեսնենք թէ ձեռնարկը արեւելեան գործունէ-

ուրբեան մեջ շահ մը ունեցած է, սակայն այս պատճառներէն թուականի, վարձի ամօրդիզասիօնի եւ անգանձելի պահանջի պատճառաւ զուտ շահը նուազեցուցած է:

Այնպէս ինչպէս կացութեան կրօնքի արքիպի մասերը ներկայացնող բարձրութիւնը վրայ վրայի դնելու պարագային բարձր մասերուն հետ հաւասար պէտք է գայ, այնպէս ալ արդիւնքը կրօնքի ծախքերը շահերուն հաւասարելու են, քանի որ նոյն աստիճանի վրայ պատաստուած կ'ըլլան երկու կողմերը:

### 3.- ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

*Ճարտարարուեստական ձեռնարկներ ըսելով այն առեւտրական հաստատութիւնները կը հասկնանք, որոնք ապրանքներու առուծախով կը զբաղին, սակայն անոնք վաճառատան ըրածին պէս գնած ապրանքներնին նոյնութեամբ չեն ծախեր, այլ իրենց ունեցած գործարանի մէջ կը ձեւափոխեն: Օրինակ՝ բամպակ կը գնեն ասկէ իրենց գործարանին մէջ կտաւ կը շինեն և զայն կը ծախեն:*

*Այս կարճ բացատրութենէն արդէն կը հասկնանք*



Թէ ճարտարարուեստական ձեռնարկ մը գործարանի մը պէտք ունի: Գործարան ըսելով կը հասկնանք՝ շէնքը մեքենաները կարասիները և շն: Ասոնք բնական է ձեռնարկին գոյութեան կապուած են, անոնք ձեռնարկին կեանքի տեղութեան մէջ ծախու չեն և այս պատճառաւ կապուած ստացուածք կը նկատուին: Կապուած ստացուածք մը ունենալ անհրաժեշտ է ճարտարարուեստական ձեռնարկի մը համար:

Ճարտարարուեստական ձեռնարկները երբեմն կրնան արժեթուղթեր ունենալ որոնք ծախուելու համար գնուած չեն ըլլար և ձեռնարկին գործունէութեան համար հարկաւոր կ'ըլլան: Օրինակ՝ կրնայ ըլլալ որ քաղաքը անահուն ընկերութեան ձեռով վաճառատուն մը գոյութիւն ունենայ և ճարտարուեստական ձեռնարկին ալ անոր բաժնեթուղթերուն մեծ մասը իր քովը ունենայ: Ասոր պատճառը միայն շահաբերութիւն մը ունենալ չէ՝ այլ ձեռնարկը թերեւս այսպէսով կուզէ վաճառատան վրայ ազդեցութիւն մը ունենալ որպէս զի իր արտադրութիւնը վաճառատան մէջ կարենայ ծախել: Այսպիսի պարագայի մը ճարտարարուեստական ձեռնարկը քոնցերն մը նկատել հարկ է: Նման պարագաները պատկան մասին մէջ պիտի ուսումնասիրենք:

Կապուած ստացուածքին փոխարէն կայ շրջող ստացուածք մը որ դառնալու՝ շարունակաբար փոփոխութիւն կրելու կոչուած է: Ճարտարուեստական ձեռնարկի մը շրջող ստացուածքը վաճառատանց մէջ եղածին պէտքանձէ, տպրանքէ և պահանջքէ կը բաղկանայ, սակայն հոս տպրանքը երկու տեսակ գոյութիւն կ'ունենայ, չի գործուած և գործուած: Զի գործուածը յաճախ ՆԱԽԱՆԻԻԹ և գործուածն ալ ՊԱՏՐԱՍՏ ԱՊՐԱՆԻ կ'ան-

ուանուի: Այո պատճառաւ ճարտարարուեստական ձեռնարկի մը շրջող ստացուածքը չորս մասէ կը բաղկանայ:

Այս երկուքէն զառ երբեմն ազատ ստացուածք մը գոյութիւն կ'ունենայ այնպէս ինչպէս վաճառատան մէջ:

Այս երեք ստացուածքը միանալով ընդհանուր ստացուածքը կազմած կ'ըլլան: Այս ընդհանուր ստացուածքին մէջ կապուած ստացուածքը որքան քիչ արքան առողջ կ'ըլլայ ճարտարուեստական ձեռնարկին ստացուածքի կազմը: Այս որքան որ այսպէս է կարելի չէ ըսել թէ ձեռնարկը անպատճառ նուազ կապուած ստացուածք մը ունենալու է և բոլոր ստացուածքները շրջող և ազատ ստացուածքէ բաղկատարած ըլլալու են: Եթէ ձեռնարկ մը նախանիւթ, դրամ և պահանջքներ ունի, երբ սակայն գործելու համար գործարան մը չունի առնք ինչի՞ պիտի ծառային: Հարկաւորը սա է սակայն թէ կապուած ստացուածքը օգտագործելու համար համապատասխան շրջող ստացուածք մը գոյութիւն ունենայ:

Գրամագլուխի կազմի մասին ըսուելիքը վաճառատան մէջ տեսածնիս է: Գալով ելմտական կազմին, օտնկատի առնել հարկ է թէ՛ կապուած ստացուածքը սեփական դրամագլուխէն բարձր չ'ըլլայ և եթէ է ձեռնարկը շատ առողջ եղած չ'ըլլար և եթէ ան օտար երկար պայմանաժամով դրամագլուխն ալ կ'անցնի, այս բոլորովին վատառողջ ելմտական կազմ մը ի յայտ կը բերէ:

Երբեմն ճարտարարուեստական ձեռնարկներու կապուած ստացուածքը և երկար պայմանաժամով օտար դրամագլուխի բարձրութիւնը նոյնը կ'ըլլայ: Այս երբեմն հանդիպում է և սակայն յաճախ ալ իրարու հետ կապ մը կ'ունենան, սա պատճառաւ թէ՛ կապուած ստացուածքը յաճախ այնպիսիներէ կը հայթայթուի որոնք

կը յօժարին վարկով տալ և այս ալ երկար պայմանա-  
ժամէ մը վերջ գանձել: Օրինակ՝ հիւսուածեղէնի դոր-  
ձարանները իրենց մեքենաները 5—10 տարի պայմա-  
նաժամով կը գնեն երբեմն:

Ս քիւ ֆորմիւլնիս նարսարուեստական ձեռնարկի  
մը պատկանիլը անմիջապէս կը հասկնանք երբ կա-  
ցութեան կեռիմ մեջ գործարանէ, մեքենայէ բաղկացեալ  
կապուած ստացուածք մը կը տեսնենք: Կացութեան վի-  
նակագրութիւնը որ, չորս տարին կը ներկայացնէ, կը  
ցուցնէ քէ անոր ստացուածքի կազմը առողջ է, քանի  
որ կապուած ստացուածքը 30—45 % միայն կը կազմէ  
ընդհանուր ստացուածքին մեջ: Դրամագլուխի կազմը եւս  
առողջ կը տեսնենք, քանի որ սեփական դրամագլուխի  
համեմատութիւնը բաղգասմամբ օտար դրամագլուխէն  
եւս բարձր է: Ելեւթական կազմը եւս առողջ է քանի  
որ կապուած ստացուածքը սեփական դրամագլուխէն  
նուազ է:

ձարսարարուեստական ձեռնարկի մը կացութիւնը  
կարենալ ուսումնասիրելու համար անոր շրջուն ֆօնտը  
գիտնալ հարկաւոր է: Շրջուն ֆօնտը կը գիտնանք երբ  
շրջող ստացուածքէն օտար կարծ պայմանաժամով դրա-  
մագլուխէն հանենք: Այս շրջուն ֆօնտը որքան աւելի  
ըլլայ այնքան լաւ կացութեան մէջ կը գտնուի ձեռնարկը:

Ատոր փոխարէն երբ շրջող ստացուածքը օտար  
երկար պայմանաժամով դրամագլուխէն նուազ է, այս  
բնականէն գէշ կացութիւն կը պարզէ: Այս շրջուն  
ֆօնտը գիտնալէ վերջը սա կ'ուզենք գիտնալ թէ ան  
ձեռնարկին գոյութիւնը կ'ապահովէ, այսինքն ձեռնարկը  
կրնայ օտար կարծ պայմանաժամով դրամագլուխը կտ  
վճարել: Ոչսպէսով անոր լիփիտիթէն ալ գիտցած կ'ըլ-  
լանք:

Ճարտարարուեստական ձեռնարկի մը պահանջքի և գանձի պարագան, վաճառատանց մէջ եղածին պէս, նկատի առնել հարկ է, սակայն սպրանքին մէջ նախանիւթը տարբեր և պատրաստ սպրանքը տարբեր նշանակութիւն մը ունի: Նախանիւթը կրնայ միշտ ծախուիլ առանց խկ գործուելու, եթէ դրամական նեղութեան մը մատնուի ձեռնարկը և կամ թէ կրնայ ուղած ձեւով գործուիլ, սակայն պատրաստ գործուած սպրանքը այսպէս չէ. ան անպատճառ շուտ մը ծախուելու է, եթէ կենայ, կրնայ ըլլալ որ նորոյթներու պատճառաւ արժէքը կորսնցնէ:

Մեր 6 թիւ Ֆորմիլին վրայ կը տեսնենք քէ ձեռնարկը միշտ տրուել ֆոնս մը ունեցած է: Չորրորդ տարւոյ մէջ ան եղած է 8568— (տրոյդ ստացուածք 10750— դրամատանց պարտքեր եւ պարտավորեցումներ 2182): Այս բարձր տրուել ֆոնս մըն է եւ իր մէջ 2507,8 ի նախանիւթ մքեր մը կը պարունակէ, գանձը սկար է միայն 480,5 ի պարտքս դրամ մը կար: Գանձին սկար ըլլալը արդէն դրամատանց եղող պարտքն ալ ի յայտ հուզայ: Եթէ գորտուր գանձ մը ունենայ դրամատան վարկին չի պիտի դիմեր, եւ սակայն այս գեւ կացութիւն մը չի պարզեր, քանի որ նախանիւթի, պարտքսի ապրանքի եւ պահանջքի պէս ստացուածքներ կան որոնք ձեռնարկին լիֆթիքէն ամուր կը պահեն նորմալ ժամանակներու մէջ:

Կացութիւնը ուսումնասիրելէ վերջ արդիւնքի կշռին կ'անցնինք: Ճարտարարուեստական ձեռնարկի մը արդիւնքի կշիռը վաճառատանց արդիւնքի կշռէն աւելի խօսուէն է քանի որ ան, լաւ պատրաստուած ըլլալու պարագային ձեռնարկին գործունէութիւնը կը ներկայացնէ առանց գործառնութեան կշռի:

Երբ մեր 6 թիւ Գործընկերացիները կողմնակից կողմնակից վրայ շորտորդ արտին 15790,6 ի գումար մը կը տեսնենք այս այդ տարւոյն գործառնութիւնը կը ներկայացնէ:

Այսպէս կ'ըլլայ որովհետեւ ձեռնարկը պատրաստ ապրանք ունենալու համար բոլոր իր ծախսածնէրը իբր ծախքեր կը նշանակէ. նախանիւթը գործուելու պարագային փոխարժէքը ծախք մը կը նկատուի: Ասոր փոխարէն հասոյթի կամ շահու կողմն ալ եղած վճարումները կը նշանակուին, կողմերու միջև եղած տարբերութիւնը պատկան տարուոյ շահը կամ վնասը ի յայտ կը բերէ:

Ծախքը նախ նախանիւթէ, պաշտօնէից, թոշակէ, գործաւորողչէքէ, վաճառման համար եղող ծախքերէն կը բաղկանան: Ասոնցմէ զատ սակայն ծախք համարելու է կատուած ստացուածքի ունեցած արժէքի նուազումը, ինչ որ՝ ԱՄՕՐԴԻՍՄԱՆ կը կոչուի:

Երբ Գործարանը բանի, չէնքը նորոգութեան կը կարօտի, մեքենաները կը մաշին, կարասիները կը հիննան և որոնք ամօրդիզէ ընել հարկ է: Սակայն, ամօրդիւմանի գումարի որոշման պարագային միայն հիննալով կամ մաշելու պատճառաւ կրած նուազ արժէքը նկատի առնել բաւական չէ, այլ պէտք է նորոգութեան պատճառաւ նախկիններու արժէքի կորուստը նկատի առնել: Օրինակ՝ երբ գործարանի մեքենայ մը կայ որ 5000 ի գնուած է և այս բանելու պարագային տարին 500 ի արժէքի նուազում մը կ'ունենայ: Անցան երկու տարի 500 սկանէն 1000 պակսեցուցինք և 5000 էն մնաց 4000: Սակայն եթէ այս մեքենան բանելու համար 5 աշխատաւորի կը կարօտի և երբ անդին գլխաւթեան յառաջընթիւմութեան մը պատճառաւ նոր մը հնարուած է

և նախկինին ըրածը 2 աշխատաւորով կ'ընէ նոր մեքենայով մը, հոս ալ նախկին մեքենան անգործածելի կը դառնայ, երբ մրցորդները նոր մեքենաներով գործեն: Այս պատճառաւ նախկին մեքենային արժէքը 4000 էն շատ աւելի պակասած կ'ըլլայ:

Այս պատճառաւ ճարտարարուեստական ձեռնարկի մը վարիչը ամօրդիւրմանի դուժարը որոշած ատեն պէտք է նկատի առնէ թէ ամեն ատեն նոր գիւտեր կ'ըլլան և այս պատճառաւ ալ ծախքերը կ'աւելնան:

Շատ անգամներ երբ երկիր մը նոր ճարտարարուեստի զարկ տալ ուղէ, անոր արտադրութիւններուն համար ներածման մաքսեր կը հաստատէ, որպէս զի օտարին մրցակցութիւնը արդելք չըլլայ: Այսպիսի պարագայի մէջ նոր հաստատուող ճարտարարուեստական ձեռնարկները բարձր ամօրդիւրմաններ կ'ընեն, որպէս զի իրենց կապուած ստացուածքին մեծ մասը ամօրդիլղէ ըլլայ և այս պատճառաւ երբ օր մը՝ տէրութեան ներածման մաքսերը իջեցնելու պարագային, նուազ ամօրդիլղափօնի ծախք մը արձանագրելու ստիպողականութեան տակ գտնուին: Այսպիսի պարագաներու տակ կապուած ստացուածքը իր արժէքէն աւելի նուազ կ'երևայ կայութեան կշռին վրայ: Այս նուազ արժէքը ԼՈՒՌ ՊՍՂԵՍ (Stille Reserven) անունը կը կրէ:

Այս բաւորը արդիւնքի կշռի մը ծախքերու կողմը կը տեսնենք: Հոս տեսած ծախքերնիս երկու գլխաւոր մասի բաժնել հարկ է, որոնք են՝

- ա) Անփոփոխ ծախքեր,
- բ) արտադրական ծախքեր:

ԱՆՓՈՓՈՅ ԾԱԽՔԵՐԸ ամեն անոնք են որոնք ձեռնարկին առաւել կամ նուազ գործունէութիւնէն չեն

ազդուիր, օրինակ՝ ամօրդիամանը: Երբ ձեռնարկը շատ գործունէութիւն մը ունենայ, իր քիչ գործունէութեան տարուոյ չափով ընկու ստիպուած է: Ամօրդիամանի պէս անփոփոխ ծախքեր են պաշտօնէից (գրագիր, տնօրէն ևլն.) թոշակները, երկար պայմանաժամով պարտքերուն տոկոսները, վաճառման (մթերանոցի) ծախքերը ևլն.:

ԱՐՏԱԳԻՐԱԿԱՆ ՄԱԽՔԵՐԸ ասոր փոխարէն այն ծախքերն են որոնք կ'աւելնան և կը նուազին ըստ ձեռնարկին գործունէութեան: Օրինակ՝ գործաւորողչէքը արտադրական ծախք մըն է որովհետեւ ան միայն ձեռնարկին գործած ատենը կը վճարուի, Նոյնպէս նախաՆիւթը, որովհետեւ ան միայն արտադրութեան պարագային կը գործածուի:

Սյս երկու դասակարգի ծախքերը իրարու հետ համեմատել հարկ է: Անփոփոխ ծախքերը որքան նուազ և արտադրական ծախքերը որքան աւելի ըլլան այնքան արմատաւոր մեքանիզմ մը ունեցած կ'ըլլայ ձեռնարկը, որովհետեւ ձեռնարկի մը անփոփոխ ծախքերուն համեմատութիւնը միայն շատ գործունէութեամբ մը կրնայ նուազիլ: Օրինակ եթէ ճարտարարուեստական ձեռնարկ մը 200 ի անփոփոխ ծախք մը ունի և թէ 1000 ի գործունէութիւն մը ունեցած է, այս ծախքը իր գործունէութեան 20% կը կազմէ: Եթէ սակայն 500 ի գործունէութիւն մը ունենայ, նոյն 200 ի ծախքը 40% պիտի բարձրանար:

Ռոսչ և հասկնայի ըլլալու համար արդիւնքի կշիռն ոչ օրկանիք մասը մեր ուսումնասիրութենէն դուրս կը հանենք: Արդէն ալ ճարտարարուեստական ձեռնարկի մը այս մասը վաճառատունէ մը չի տարբերիր:

Սրբիւնքը ուսումնասիրելէ վերջ կ'անցնենք ձեռնարկին հաշուեկշռին տարուէ տարի կրած փոփոխութենէն եթէ ան բաղդատական կամ վիճակագրութեան դրութեամբ պատրաստուած է:

Կացութեան կշռին ներքին մասի փոփոխութեան մէջ պէտք է նկատի առնել թէ պատրաստ ապրանքի համեմատութիւնը չի բարձրանայ, որովհետեւ ան սպառման կարելիութեան նուազիլը ի յայտ կը բերէ, եթէ մաւաւանդ գործունէութիւնը նուազիլ սկսած է:

Մեր 6 թիւ Ֆորմիւլին կացութեան վիճակագրութեան մէջ կը տեսնենք թէ պատրաստ ապրանքի մթերք տարուէ տարի կը պակսի 25 % եւ 14 % ի իջած է:

Նախանիւթերու աւելնալը կամ պակսիլը կացութեան մէջ փոփոխութիւն մը յառաջ բերած չըլլար եթէ անոնց գիները անկման կամ բարձրացման ենթակայ չեն: Բարձր նախանիւթի մթերքը կը նշանակէ թէ ձեռնարկը իր գործունէութիւնը ողւորել կ'ուզէ: Գանձուն ալսինքն պատրաստ դրամի, դրամատունէ պահանջքի համեմատութեան աւելնալը լիքիտիթէի գեսնի վրայ լու կացութիւն մը կը պարզէ, սակայն այսպիսի ղեկավարում մը յաճախ ձեռնարկին գործելու մէջ ունեցած դժուարութենէն յառաջ կուգայ:

Օրինակ՝ երբ ճարտարարուեստական ձեռնարկ մը տազնապ մը դուշակէ իր գանձը պակսեցնել չուզէր: Եթէ հակառակը պատահի և գանձը նուազի պէտք է ձեռնարկին գործունէութիւնը նկատի առնելէ վերջ վճռել: Եթէ գործունէութիւնը նուազած չ'ըլլայ և գանձը նուազի, կը նշանակէ թէ ձեռնարկը իր գործունէութեան եղանակը փոխած է, օրինակ՝ փոխանակ ապառիկ դնելու կանխիկ կը գնէ:



Պատկան 6 քիւ Ֆորմիլին վրայ կը տեսնենք քէ գանձը երբեմն նուագած է, օրինակ պատրաստ դրամը 534.3 էն 480.5 ի իջած է սակայն գործունեութիւնը նուագած չէ այլ աւելցած է նոյն միջոցին:

Ճարտարարուեստական ձեռնարկներուն շրջող ստացուածքի կրած փոփոխութեան նշանակութիւնը նոյնը կը մնայ վաճառատանց շրջող ստացուածքի կրած փոփոխութեան հետ և որուն վրայ պէտք եղած ուսումնասիրութիւններն ըրած էինք: Նոյնպէս նաև ազատ ստացուածքին համար ևս ըրած ուսումնասիրութիւններ չգորու է: Ուրեմն կը մնայ ուսումնասիրել կապուած ստացուածքի կրած փոփոխութիւնը որ էական նշանակութիւն մը ունի ճարտարարուեստական ձեռնարկներումէջ:

Կապուած ստացուածքին ներքին համեմատութիւնը կրնայ փոխուիլ օրինակ՝ եթէ մեքենաները պակսին և շէնքերը աւելնան: Սակայն այս ներքին մասին մէջի կրած տարբերութիւնը ազդակի թէքնիք հարց մըն է և որ ամեն ձեռնարկի մէջ պիտի տարբերէր: Այս պատճառաւ այս մեր ուսումնասիրութեան սահմանէն դուրս հանել հարկաւոր կը տեսնենք:

Ուսումնասիրելի է մեզ համար կապուած ստացուածքի կրած արտաքին գումարի փոփոխութիւնը: Կապուած ստացուածքի արտաքին գումարի բարձրութիւնը անոր համեմատութիւնը կը բարձրացնէ ընդհանուր ստացուածքին մէջ և այս պատճառաւ ձեռնարկին ստացուածքի կազմը տկարացած կ'ըլլայ: Սակայն այս կրնայ ձեռնարկը աւելի ոգևորած ըլլալ եթէ գործունէութիւնը համեմատաբար աւելցած է:

Մեր 6 քիւ Ֆորմիլին վրայ կը տեսնենք քէ կապ-

ուած ստացուածքը ամեն տարի բարձրացում կը կրէ: Սակայն այս բարձրացումը ձեռնարկը աւելի ոգեւորած է, քան որ՝ անոր գործունեութեան գումարը համեմատաբար աւելի բարձրացած է, Առաջին տարիէն մինչեւ չորրորդ տարին կապուած ստացուածքի համեմատութիւնը 30 % եւ 45 % ի բարձրացած է սակայն, ասոր փոխարէն գործունեութիւնը 6.740,3 եւ 15.790,6 ի այսինքն աւելի քան կրկին, եղած:

Կապուած ստացուածքի նուազութիւնը կամ մէկ մասին ծախուելէն յառաջ կուզայ և կամ թէ բարձր ամօրդիամանէ մը: Ծախուելէն յառաջ կուզայ երբ ձեռնարկը իր կապուած ստացուածքին որ է մասը ծախէ, օրինակ, իր անգործածելի մեքենաները:

Բարձր ամօրդիամանէ մը երբ ձեռնարկը տեսնէ թէ իր ստացուածքները շատ անկում կրած են: Այս նուազման ազդեցութիւնը գիտնալու համար գործունեութեան փոփոխութեան հետ բաղդատել հարկ է:

Ձեռնարկին կապուած ստացուածքի արժէքի փոփոխութիւնը ինչով փոխարինած ըլլալը ևս ուսումնասիրել հարկ է: Եթէ ան բարձրացուցած է օտար կարճ պայմանաժամով դրամագլուխով, այս ձեռնարկին լիքիափղէն վնասած կ'ըլլայ: Եթէ կապուած ստացուածքի բարձրութիւնը իջեցուցած է շրջող ստացուածքը, հոս անոր գործունեութեան մէջ ունեցած ազդեցութիւնը գիտնալ հարկաւոր է: Եթէ ան բարձրացած է շնորհիւ սեփական դրամագլուխի և մասնաւորաբար շահին, այս շատ բու պարագայ մը յառաջ կը բերէ:

Մեր 6 թիւ Թօմսիլին վրայ կը տեսնենք թէ ձեռնարկը իր կապուած ստացուածքը 30—45 % բարձրացուցած է սակայն երբեք չի վստահեր ձեռնարկին լիքի-

սիդէն որովհետեւ արդէն ան շնորհիւ շահուն բարձրացած է: Ասկէ գաւ շրջող ստացուածքը անոր կարն պայմանա-  
ժամով պարտքերէն միտ աւելի է:

Վիճակագրութեան դրութեամբ պատրաստուած ար-  
դիւնքի կամ գործունէութեան կշիռներուն վրայ կը  
շարունակենք մեր ուսումնասիրութիւնը: Հոս նախ  
կ'ուզենք որ շահու համեմատութիւնը միշտ աւելնայ և  
ծախքերու համեմատութիւնը միշտ նուազի և մասնա-  
ւորաբար ամորդիամանի պէս ամփոփոխ ծախքերու հա-  
մեմատութիւնը:

Մեր 6 քիւ Յօրմիւլին Բ. ին վրայ այս լաւ պարա-  
գան կը տեսնենք: Գործունէութեան մեջ շահի համեմա-  
տութիւնը 15 % էն 23 % ի բարձրացած է եւ ծախքերուն  
համեմատութիւնը նուազած է, ինչ որ՝ լաւ գործունէու-  
թիւն մը կը պարզէ: Ամօրդիամանը 11 % էն 9 %, նա-  
խանիւքը 40 % էն 35 % ի իջած է ելլն.:

Ճարտարարուեստական ձեռնարկի մը ապագան ու-  
սումնասիրելու համար վաճառատան մէջի ուսումնասի-  
րած չորս պարագաներնիս նկատի առնելէ վերջ մասնա-  
ւորաբար գիտնալ հարկաւոր է թէ ձեռնարկը պիտի  
կարենա՞յ իր գործունէութիւնը առանց արդելքի շա-  
րունակել: Այս պարագան ճարտարարուեստական ձեռ-  
նարկին համար շատ կարեւոր է, որովհետեւ ճարտարար-  
ուեստական ձեռնարկ մը կենալու պարագային ըրած  
մնասը միշտ աւելի կ'ըլլայ վաճառատունէ մը: Օրինակ՝  
եթէ ճարտարարուեստական ձեռնարկը չի գործէ իր  
կապուած ստացուածքը արժէքը կը կորսնցնէ:

Այս պատճառաւ նախ կ'ուզենք գիտնալ թէ ձեռ-  
նարկը գործելու համար նախանիւթ ունի և թէ միան-  
գամայն ալ անոր յարաբերական լիքիտիթէն կ'ուսում-

նասիրենք: Նախանիւթի մթերքը որոշել հարկաւոր է, որպէս զի գիտցուի թէ ապրանք ունենալու միջոցը կայ: Այս կը գիտնանք եթէ նախանիւթի մթերքը բաղդատենք նախորդ տարուոյ մէջ սպառած նախանիւթին հետ: Այս վերջինը արդիւնքի կշռին վրայէն կ'ուսումնասիրենք: Գալով յարաբերական լիքխաթիթէին հոս գիտնալ կ'ուզենք թէ ձեռնարկը պէտք եղած ծախքերը ընկելու կարող է գործելու համար: Վերջինին մէջի մասնաւորի գործաւորողչէքի փոխարժէքի գոյութիւն ունենալիքը որոշել հարկ է:

Երբ մեր նարսարուեստական ձեռնարկի մը պատկանող 6 թիւ ֆորմիլը առնենք եւ այդ ձեռնարկին ապագային համար քանի մը խօսք բնել պէտք ըլլայ կրճեանենք թէ ան 2507.8 ի նախանիւթի մթերք մը ունի որ իրեն սարեկան նախանիւթի սպառման կարելու մէկ մասն է, քանի որ արդիւնքի կշիռը մեզ կը ցուցնէ թէ անոր սարեկան սպառումը վերջին տարուոյ մէջ 4960,8 եղած է: Գալով աշխատանքներուն համար պէտք եղած գործաւորողչէքին ան զանոնք կրնայ ապահովել իր պատրաստ ապրանքները ծախելով:

Մէկ խօսքով ձեռնարկը կրնայ իր գործունեութիւնը ապագային ալ լաւ պայմաններու ներքեւ ընել, սակայն շահը որ 3552 է անմիջապէս գանձելի չէ, որովհետեւ անոր զանձը սկար է եւ զայն փաշելու համար զօրանալուն սպասելու է: Գանձը կը զօրանայ երբ ապրանքները ծախուին, պահանջները զանձուին: Երբեմն զանձը դրամատունէ ստացուած նոր վարկով մըն ալ կրնայ զօրանալ սակայն այսպէսով զօրացած վարկը միայն գործելու յանկացնել նիւս կ'ըլլայ եւ ոչ թէ շահու բաշխման:

Պալով նոյն ձեռնարկին կրաձիք դրութեամբ լուծման զայն կը գտնենք 2 թիւ կրաձիքին վրայ որ բեկեալ գիծերու դրութեամբ պատրաստուած է, քանի որ վիճակագրական դրութեամբ լուծել կ'ուզենք:

Ա. ը կացութեան վիճակագրութիւնը կը ներկայացնէ եւ Բ. ը արդիւնքի վիճակագրութիւնը:

Կացութեան վիճակագրութեան վրայ սեւ գիծերը ստացուածքներու (աքթիք) եւ կարմիրներն ալ դրամագլուխներու (բասիք) յատուկ են: Յասակի գիծը 0 ի գիծն է որմէ հազարական հազարական գիծերը կը բարձրանան եւ որոնք զանազան մասերու գումարը կ'որոշեն: Օրինակ կապուած ստացուածքը առաջին տարին 4000 էն քիչ մը աւելի եղած է երկրորդ տարին 5000ը անցած է եւլն.:

Պանծին բարձրութիւնը երկու գիծերուն հեռաւորութեան կը հաւասարի եւլն.: Հիմնական սեփական դրամագլուխը յատակի գիծէն միջեւ առաջին կարմիր գծին հեռաւորութեան կը հաւասարի, պահեստը առաջինէն երկրորդը եւլն.:

Կացութեան կտրին վրայ սա նպատակով վիճակը աչքի կը զարնէ թէ՛ սեփական դրամագլուխը որ յատակագիծէն մինջեւ երրորդը կարմիր գիծին տարածութեան կը հաւասարի շարունակաբար կը բարձրանայ եւ ալ շնորհիւ շահուն: Ան միշտ բարձր է կապուած ստացուածքին:

2 թիւ կրաձիքին բ. ը որ արդիւնքի վիճակագրութիւնը կը ներկայացնէ, ունի յատակագիծ մը եւ որմէ վեր գիծեր կան որոնք գործունեութեան ծախսերուն բարձրութիւնը կը ցուցնեն, վերջէն ալ գոյս շահը: Հոս կը տեսնենք թէ չորս տարուան մէջ ծախսերը շարունակաբար կ'աւելնան սակայն աւելի բարձր համեմատու-

թեամբ մը զուտ շահն է որ կ'աւելնայ: Վերջին գիծը ընդհանուր գործունեութիւնը կամ վաճառուած ապրանքներու գումարը կը ցուցնէ որ տարուէ տարի աւելցած է: Կը տեսնեմք թէ գիծերը կարմիր են որովհետեւ անոնք արդիւնքի կտուին ծախսերու կողմը կը ներկայացնեն: Վերջին գիծը սեւ է որովհետեւ ան արդիւնքի կտուին շահերու (հասոյթներու) կողմը կը կազմէ: Հոս հասոյթները միայն գործառնութեան գումարէն (ծախուած ապրանքներու փոխարժեքէն) կը բաղկանան: Եթէ ուրիշ հասոյթներ ըլլային, անոնք կարմիր գիծեր պիտի ունենային (տ. էջ 30):

#### 4.- ԴՐԱՄԱՏԱՆՑ ՀԱՇՈՒԵԿՇԻՌՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

**ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ** այլ առևտրական ձեռնարկներուն ըրածին պէս կ'առնեն ու կը ծախեն, սակայն, իրենց առածնին ու ծախածնին ապրանքները չեն այլ զբամազլուխներ: Մէկուն զբամազլուխը միւսին կուտան: Դրամատունները սեփական զբամազլուխ մը կ'ունենան և զայն կ'օգտագործեն, սակայն իրենց գործունէութեան հիմը օտարին զբամազլուխն է: Հետեւ

բար դրամատուները իբր դրամագլուխի միջնորդներ զանազան դասակարգի յաճախորդներ կ'ունենան: Այս յաճախորդներու դասակարգի տարբերութիւնը բաժնեւ կուտայ նաև դրամատուները և որոնց որոշ գործունէութեան սահման մը կը գծէ: Անոնք կը բաժնենք.

ա) ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆԵՐՈՒ, որոնց նպատակն է փոքր խնայողները քաջալերել,

բ) Հողային կամ ԿԱԼՈՒՄԾԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ (Crédit foncier), որոնք պարտաթուղթ շրջաբերութեան հանելով երկար պայմանաժամով դրամագլուխ կը հայթայթեն և զայն անոնց միայն կուտան, որոնք իրենց անշարժ ինչքերը գրաւ կը ձգեն,

գ) Պետական կամ ՇՐՋԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐ որոնք թղթադրամ շրջաբերութեան կը հանեն և այսպէսով դրամագլուխ կը հայթայթէին: Այս սակայն ամեն երկրի մէջ մէկ կամ քանի մը դրամատուներու արտօնուած կ'ըլլայ: Ասոնց այսպէսով երկրին տնտեսութեան ղէկը յանձնուած կ'ըլլայ, քանի որ թղթադրամը երկրի մը առևտուրին վրայ մեծ ազդեցութիւն կ'ունենայ:

դ) ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐ (Banque de commerce) որոնք մասնաւորաբար հրապարակին վրայ կը գործեն և առևտրականներու վարկ կը բանան:

Մենք մասնաւորաբար պիտի ծանրանանք չորրորդին վրայ:

Վարկային կամ առևտրական դրամատուները մեծ դրամագլուխներ կ'ունենան և այս պատճառաւ գրեթէ միշտ անանուն ընկերութիւններ կ'ըլլան: Անոնք յաճախ մասնաճիւղեր կ'ունենան և ստիպուած են ունե-

նալու որպէս զի կարենան զանազան հրապարակներու վրայ գործել: Երբեմն մասնաճիւղի տեղ թղթակիցներ կ'ունենան և որոնց դրամագլուխը մասամբ կամ ամբողջովին իրենց կողմէ հայթայթուած կ'ըլլայ:

Դրամատանց դրամագլուխի կազմը այլ առևտրական ձևերիցներու պէս երեք մասէ կը բաղկանայ, այսինքն սեփական, երկար պայմանաժամով օտար և կարճ պայմանաժամով օտար դրամագլուխներէ կազմուած կ'ըլլայ: Դրամատան դրամագլուխի կազմին մէջ շատ հազուադէպ կը հանդիպինք որ սեփական դրամագլուխի համեմատութիւնը օտար դրամագլուխի համեմատութենէն բարձր ըլլայ: Այսպէս ըլլալով հանդերձ դրամատան մը դրամագլուխի կազմը տկար եղած չըլլար որովհետև օտար դրամագլուխները դրամատանց մէջ ապահով օգտագործում մը կը գտնեն: Սակայն, օտար դրամագլուխի համեմատութեան բարձրութիւնը շատ աղէտաբեր կը դառնայ տազնապներու մէջ: Նման աղէտի մը պատահած են ամերիկեան և գերման դրամատուները ներկայիս:

Օտար երկար պայմանաժամով դրամագլուխը կազմուած կ'ըլլայ օտարներուն այն դրամներովը որոնք տարուան մը, երկու կամ հինգ տարուան պէս երկար պայմանաժամեր կ'ունենան: Երբեմն առևտրական դրամատուներ պարտաթուղթ ալ շրջաբերութեան կը հանեն սակայն այս աւելի հողային դրամատուներու յատուկ դրամագլուխ հայթայթելու միջոց մըն է: Կարճ պայմանաժամով օտար դրամագլուխը օտարներու անմիջապէս կարճ ատեն մը վերջ ստանալիք դրամներէն կը բաղկանայ:

Կարճ պայմանաժամով պարտքերը 100000 և 1000



ՊԱՀԱՆՁՈՂ, հաշուելն թացներու կը բաժնուին: Առաջինը այն պարտքերը կը ներկայացնէ որոնք կրնան ետ վճարուիլ երբ որ գրամատունը ուզէ: Երկրորդը այսպէս չէ և այն ատեն կը վճարէ երբ յաճախորդը պահանջէ:

Գալով գրամատան ստացուածքի կազմին, ան բոլոր առևտրական ձեռնարկներուն պէս երեք մաս կուեննայ. կապուած, շրջող և ազատ ստացուածք: Կապուած ստացուածքը մասնաւորաբար կը ծառայէ օտարը ապահովելու համար: Ասոր մաս կը կազմեն կալուածներ կարասիները ևլն. որոնց գրոմատունը ի գործունէութեան համար պէտք ունի: Ասկէ զատ կապուած ստացուածքը կը պարունակէ բաժնեթուղթեր և պարտաթուղթեր և մասնաւորի այնպիսիներ որոնք գրամատան կարելիութիւնը կուտան պատկան ձեռնարկներուն մէջ ազդեցութիւն ունենալու: Օրինակ՝ գրամատուն մը որ և է քաղաք մը մասնաձիւղ չ'ունենար, սակայն այդ հրապարակին վրայ գործել ուզէ, այսպիսի պարագայի մը ան հոն հիմնուած կամ հիմնուելիք գրամատան մը բաժնեթուղթերուն կարևոր մէկ մասը կը գնէ, որպէսզի անոր վրայ ազդեցութիւն մը ունենայ: Կամ որ և է կերպով գրամազրուիս փոխ կուտայ և պարտաթուղթ կ'առնէ: Նման պարագաներու տակ ըլլայ բաժնեթուղթ ըլլայ պարտաթուղթ դուրսը՝ սակարանը ծախելու հնարը կը գտնուի սակայն, ան զանոնք ծախելու համար գնած չըլլար և այս պատճառաւ կապուած ստացուածք կը նկատուին: Գրամատանց շրջող ստացուածքը այն մասերը կը պարունակէ որոնք շարունակաբար փոփոխութիւն կը կրեն, օրինակ պահանջ, պատրաստ դրամ ևլն.: Ազատ ստացուածք մը ևս գոյութիւն կ'ունենայ

որ ի մասնաւորի կը ծառայէ դրամատան անգործածելի ստացուածքը շահաբեր դարձնելու համար: Օրինակ՝ երբ դրամատունը աւելորդ դրամ ունենայ պարտաթուղթ կը գնէ, սոկոս ստանալու համար և զայն ատեն մը կը պահէ:

Այս երեք տեսակի ստացուածքները դրամատան մը մէջ, գոյութիւն ունենալով հանդերձ անոնց մասերը նման դասաւորման մը ենթակայ չեն ըլլար և անոնք լիքիտիթէի կարգով կը դասաւորուին: Անմիջապէս դրամի վերածելի ստացուածքէն կը սկսի աքթիֆը և կը վերջանայ ամենադժուար դրամի վերածուելիք ստացուածքով:

Նման դասաւորում մը ստիպողական է դրամատան մէջ, որովհետեւ ամեն խումբ նոյն ստացուածքէն պիտի ունենար: Օրինակ՝ կապուած շրջող և ազատ ստացուածքներէն երեքն ալ արժեթուղթ կը պարունակեն:

ԳԱՆՁԻՆ մաս կը կազմէ պատրաստ դրամը, ըլլայ՝ ներքին ըլլայ՝ օտար դրամ, պայմանաժամը հասած և տակաւին չի գանձուած կարօնները, և դրամատուններէ ՆՕՍԴԲՕ պահանջները: Նօսդրօ ի մասնաւորի կը գործածուի և կը նշանակէ թէ ձեռնարկը միշտ կրնայ պահանջել:

Որժեթուղթերուն մաս կը կազմեն ուրիշներու կարգին բաժնեթուղթերը որոնք մասնակցութեան համար (երկար ժամանակի համար) գնուած կ'ըլլան:

Պահանջքները այն ստացուածքներէն կը բաղկանան որոնք առաւել կամ նուազ երկար ատեն մը վերջ պիտի գանձուին: Ասոր մաս կը կազմեն ՎՕՍԴԲՕ կամ ԼՕԲՕ հաշուեցոյցները, որոնք յաճախորդներու բացուած վարկերը կը ներկայացնէին:

Անշարժ ինչքերը դրամատան կալուածներէն և ինչքերէն կը բաղկանայ :

Պահանջներու մէջ կ'արձանագրուին նաև դրամատան գրաւի մը փոխարէն բացած վարկերը : Այս գրաւներուն կարեւորն է ապրանքները ու արժեթուղթերը : Կալուածները ևս կրնան գրաւի դրուիլ սակայն այս միայն կալուածական դրամատուններու յատուկ է : Արժեթուղթերու գրաւի վրայ եղող փոխառութիւնները շատ անգամ ԲէՅՅՅ կ'անուանուին , երբ անոնք հետեւալ ձևով ըլլան : Սակարանը մէկը կ'ուզէ իր արժեթուղթը ծախել և դրամը անմիջապէս գանձել սակայն գնորդը փոխարժէքը ատենէ մը վերջը միայն տալու յանձնառու կ'ըլլայ և այսպիսի պարագայի մը՝ դրամատունը ծախողին գնորդին հաշուոյն կը վճարէ և արժեթուղթերը անոր հաշուոյն կը պահէ ի փոխան տուկոսի մը :

Երբ դրամագլուխները և ստացուածքները իրարու հետ բաղդատենք , դրամատան ելեմտական կազմը ի յայտ կուգայ :

Դրամատան մը ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ երեք գլխաւոր մասի կը բաժնուի .

ա) ՎԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ որուն մէջ դրամատունը վարկով դրամ կ'առնէ ու կուտայ :

բ) ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԱՌԵՒՏՈՒՐ որով դրամատունը գանազան արժէքներ կ'առնէ ու կը ծախէ :

գ) ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ որուն մէջ դրամատունը միայն իր յաճախողին յանձնարարութիւնը կը կատարէ :

Առաջին երկուքը դրամատան մը հիմնական գործունէութիւնը կը կազմեն :

Առաջինին մաս կը կազմէ օտարէն առած փոխ

դրամները, օտարին բացուած վարկերը: Արժէքներու առևտուրին մէջ դրամատունը կը գնէ ու կը ծախէ: Ասոր կարևորն է ԱՐՊԻԹՐԱԺԸ որով երկու սակարաններու մէջ գոյութիւն ունեցող գիներու տարբերութեան զգաւործուիլը կը հասկնանք: Երբեմն դրամատուները շահատիրական նպատակաւ արժեթուղթեր կը գնեն ու կը ծախեն, սակայն այս շատ անգամ օտարներուն վրայ անվտանգութիւն կը հրաւիրէ: Այս գործունէութիւնները լաւ հաշուակալութեան մը, լաւ կազմակերպութեան, արժէքներու լաւ պահպանում մը ունենալու կը հարկադրեն և այս օտարներուն վրայ վտանգութիւն կը ներշնչէ և այս պատճառաւ իրենց շատ մը գործերը անոնց կը յանձնեն: Ասոնց կարգին է արտածուած ապրանքներու փոխարժէքը ստանալու գործը (recouvrement) կամ թէ բնաւ դրամականի հետ առնչութիւն չ'ունեցող դրամարկներու վարձուիլը ևլն.:

Այս գործողութիւնները և իրենց արդիւնքը հասկնալու համար դրամատան մը արդիւնքի կշիռն կը դիմենք: Հոս կը տեսնենք թէ դրամատունը ինչ հասոյթներ ունեցած է և անոնց փոխարէն ինչ ծախքեր րրած է:

Անոր կարևոր հասոյթներէն մէկը պէտք է ըլլայ ՏՈՎՈՍԸ, քանի որ ան տարբերութիւնն է վճարուած և գանձուած տոկոսներուն: Գանձուած տոկոսները վճարուածներէն միշտ աւելի ըլլալու են որովհետեւ դրամատուները վար սակով դրամ կ'առնեն և բարձր սակով փոխ կուտան: ԱՐԺԵԹՈՒՂԹԵՆՈՒ ՇՍ.ՂԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ անոնցմէ ունեցած հասոյթները կը ներկայացնէ: ՄԻՁՆՈՐԴՉԷՔԸ սպասարկութեան փոխարէն ստացած վարձքն է: Յաճախ ալ սակի կամ գիներու շահ մը գոյութիւն

կ'ունենայ որ դրամատան մը արժէքներու առևտուրէն ըրած շահը կը ներկայացնէ: Վերջինը երբեմն աննորմալ ժամանակներու մէջ, երբ արժէքները անկում կրեն վնաս մը յառաջ բերած կ'ըլլայ:

Այս հասոյթներուն փոխարէն դրամատունը ծախքեր ըրած կ'ըլլայ, որոնք ամօրդիսմանէ գործունէութեան ծախքերէ (պաշտօնէից թոշակ ևլն.), տուրքերէ կը բաղկանան:

Շահերու (հասոյթներու) և ծախքերու տարբերութիւնը զուտ շահը կամ զուտ վնասն է:

Այս գործունէութեանց համար ստացուածքներ կամ դրամագլուխները օգտագործուած կ'ըլլան, որոնք կացութեան կշռին վրայ կը գտնենք: Սակայն, կարող չենք ըսելու թէ կացութեան կշռին այսինչ մասը այսինչ գործունէութեան համար գոյութիւն ունի: Օրինակ՝ անտուկի դրամը կրնայ վարկի մը յատկացուիլ կամ թէ արժէքի մը առևտուրին: Այս պատճառաւ երկուքը (արժէքի առևտուրը և վարկը) խառն կ'ըլլան: Բայց երրորդ գործունէութիւնը, այսինքն սպասարկութեան գործունէութիւնը զատ մաս մը կ'ունենայ կացութեան կշռին վրայ: Այս մասը կացութեան կշռին ՅԱՐԳԱՐԻՉ ՀԱՇԻՒՆՆԵՐՈՒ (*compte d'ordre*) մասն է:

Վերջին տեսակի գործունէութեան մէջ դրամատունը ստացուածք կամ դրամագլուխ տրամադրելու պ'աք չունի, որովհետև մէկ կողմանէ ստացուածք մը կամ պահանջ մը կը հայթայթէ և միւս կողմէ ալ դրամագլուխ մը՝ պարտք մը կ'ունենայ: Օրինակ՝ երբ դրամատուն մը մէկու մը համար երաշխաւոր ըլլայ, այս սպասարկութիւն մըն է զօր ձեռնարկը վարձատրութեան մը փոխարէն կը կատարէ: Հոս դրամատունը իր ստաց-

ուածքներէն տրամադրելու պէտք մը չունի վճարման պարագային: Սակայն այս առանց արձանագրութեան ձգել ճիշտ պիտի չըլլար քանի որ ան դրամատան պարտքն է իր երաշխաւորեալին կողմէ անվճար մնալու պարագային:

Այս պատճառաւ ան կացութեան կշռին վրայ կ'արձանագրուի այնպէս մը որ մէկ կողմանէ երաշխաւորեալը պարտական և երաշխաւորուածը պահանջող ըլլայ: Այս երկուքը իրարու հաւասար բարձրութիւն մը ունեցած կ'ըլլան դէմ դիմաց եղող կացութեան կշռին երկու կողմերուն վրայ, այսինքն աքթիֆի յարդարիչ և բասիֆի յարդարիչ հաշիւները նոյն բարձրութիւնը կ'ունենան: Սակայն շատ անգամներ այնպիսի պարագաներ կը ներկայանայ ուր յարդարիչ հաշիւները նոյն բարձրութիւնը չեն ունենար: Օրինակ՝ ձեռնարկը մէկուն գանձամուրհակը կ'ստանայ վճարօրին գանձելու համար: Այս ալ սպասարկութեան գործունէութիւն մըն է: Գանձամուրհակը տուողը գանձման պարագային պահանջք մը պիտի ունենայ և այս աշտմէն բասիֆի կողմի յարդարիչ հաշիւին մէջ կ'արձանագրուի և ասոր փոխարէն մտած պարտամուրհակին ալ աքթիֆի կողմի հաշիւին վրայ արձանագրելու պարագային դարձեալ աքթիֆի և բասիֆի յարդարիչ հաշիւները նոյն բարձրութիւնը կ'ունենան: Սակայն, երբ դրամատունը իր հաշուական կազմակերպութեան պատճառաւ ստացած պարտամուրհակը իր սեփական պարտամուրհակներուն մէջ արձանագրէ հոս ալ աքթիֆի կողմի յարդարիչ հաշիւ մը գոյութիւն չ'ունենար: Այսպիսի պարագաներու մէջ աքթիֆի և բասիֆի յարդարիչ հաշիւները իրարու հաւասար բարձրութիւն մը չեն ունենար, ինչ որ կը նշանակէ թէ ձեռնարկը իր սպասարկութեան պատ-

կանող մասը խառնած է իր սեփական հաշուոյն գործածած կացութեան կշռի մասերուն հետ: Ուրեմն կը տեսնենք թէ դրամատան մը կացութեան կշռին որևէ մասին ինչ գործունէութեան յատկացուիլը անորոշ կը մնայ: Այս այսպէս ըլլալով կը նշանակէ թէ դրամատուն մը իր գործունէութեան համար օրհաններ ունի սակայն անոնց որոշ պարտականութիւն մը որոշած չէ: Այս պատճառաւ չենք ուզեր անոր կացութեան կշռին վրայի կրած ստացուածքի և դրամագլուխի փոփոխութիւնները ուսումնասիրել: Պիտի ուզենք ծանրանայ անոր բռնած ընթացքին վրայ ինչ որ՝ ԴՄՍՍՍՆ ՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը կոչուի:

Դրամատան մը գործունէութեան համար պէտք եղող քաղաքականութիւնները շատ մասերու կրնայինք բաժնել, որոնց գլխաւորներն են՝

- ա) փոխառութեան քաղաքականութիւն,
- բ) զեռեղման քաղաքականութիւն,
- գ) լիքիտիթէի քաղաքականութիւն,
- դ) տէվիզի քաղաքականութիւն:

ՓՈՆՍՌՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ դրամատան օտարներէ դրամ հայթայթելու մէջ բռնած ընթացքն է: Եթէ դրամատունը կարելիութիւնը ունինոր դրամագլուխներ շահաւոր օգտագործելու, այն ատեն օտարը կը քաջալերէ և անոր լաւ պայմաններ կը ներկայացնէ, օրինակ՝ բարձր տոկոսի սակ: Կամ թէ ձեռնարկը կարճ պայմանաժամով օտար դրամի պէտք չունենար և երկար ժամանակի մը համար պէտք կ'ունենայ և հոս իր փոխառութեան քաղաքականութիւնը կ'ուղուի միայն երկար պայմանաժամով ձգուած օտար դրամագլուխները քաջալերելու: Երբեմն ալ դրամատունը

մեծ գործունէութեան մէջ գտնուիլ չուզելով շատ քնջին սակով տոկոս մը կը վճարէ և կամ թէ շատ աննպաստ պայմաններ կ'առաջարկէ իրեն դրամ արամադրողներուն որպէս զի մէկ մասը հրաժարին դրամ արամադրելէ :

Դրամատունը իր ստացուածքները շահաբեր դասօրնելու համար զանազան գործունէութեանց մէջ կը գտնուի և այս պատճառաւ կարգ զեռեզումներ կ'ընէ, այսինքն դրամ կը արամադրէ և այս ալ անոր ԶԵՏԵՂՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ Է: Երբեմն դրամատունը օգտագործելու համար արժեթուղթ կը գնէ, երբեմն ալ մեծ մասամբ զանձամուրհակներ կը զեղջէ :

Ասոր փոխարէն կայ ԼԻՔԻՏԻԹԷԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ որով դրամատան օտարին դրամադուլսը ինչպէս ապահովուած ըլլալը կը տեսնենք, կրնայ ըլլալ որ օտարին դրամադուլսին փոխարէն զանձամուրհակներ զեղջուած ըլլան և դրամատունը օտարին պահանջին առջև իր զեղջած զանձամուրհակները կրկնակ զեղջ մը (Réescompte) շնորհիւ դրամի վերածէ և օտարը գոհացընէ, կամ թէ ան կարեւոր գանձի դումար մը կ'ունենայ օտարին հաւանական պահանջը գոհացնելու համար և կամ թէ արժեթուղթ կ'ունենայ և զայն պահանջքի մը առջև սակարանը կը ծախէ և ին :

Ասոնց փոխարէն դրամատունը ունի ՏԷՎԻՉԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ որով ան իր դերքը կ'որոշէ հանդէպ օտար դրամին: Տէվիզ ըսելով այն բոլոր օտար դրամներն կը հասկնանք, որոնք դրամատան մը ըլլայ թղթադրամ ըլլայ փոխգիր, ըլլայ արտասահմանի դրամատուններէ պահանջք ըլլալով գոյութիւն ունեցող ստացուածքները կը պարունակէ: Սակայն ասոնք անոր միայն զեռեզման մէջ ունեցած տէվիզի քաղաքակա-



նութիւնը ի յայտ կը բերեն. կայ նաև փոխառութեան մէջ ունեցած աէվիզի քաղաքականութիւնը, այսինքն օտարներուն եզոզ օտար դրամով պարտքերը:

Այս բոլորը կրնանք հաշուեկէիւն վրայ ուսումնասիրել:

Առնենք մեր 12 թիւ Ֆօրմիւլը եւ որուն դրամատան մը պակասիլը անսիջապէս կը հասկնանք:

Կը տեսնենք թէ դրամատունը առողջ ստացուածքի կազմ մը ունի որովհետեւ 60 % է սեփական դրամագրոյի համեմատութիւնը: Շահաբերութիւնն ալ լաւ եղած է քանի որ 140.000ը 15311 շահ մը տուած, արդիւնքի կէիւր, որ անոր գործունէութիւնը կը ներկայացնէ լաւ վիճակ մը ունի: Արժեքուղիերը շուրջ 10 % շահաբերութիւն մը ունեցած են: Գանձուած տոկոսները վնասուածներէն 7374 ոսկի աւելի եղած են: Ասոնց փոխարէն մեծ ծախս մը եղած չ'ըլլալը կը տեսնենք: Հասոյթներուն 83 %ը բաշխելի շահ մը եղած է:

Գալով անոր քաղաքականութեան, կը տեսնենք թէ ան իր փոխառութեան մէջ օտարէն շահ դրամ փոխ առնել ուզած չէ, զետեղման քաղաքականութեան մէջ կարեւորութիւն տուած է ամուր գանձ մը ունենալու, իր կացութեան կռիւն 36 %ը գանձին կը պակասի: Լիֆիթի քաղաքականութեան մէջ դրամատունը շահ զգոյշ գտնուած է, քանի որ 31 % օտար պահանջներու փոխարէն միայն գանձը 36 % է: Գալով սեփական քաղաքականութեան, կը տեսնենք թէ գանձը 22890 ոսկի օտար դրամ մտնել մը ունի, սակայն այս մասը կացութեան կէիւր մեզ որոշապէս չի ցուցներ քանի որ ան օտար դրամով պարտքերը եւ պահանջները ներքին դրամովներէն չի գանազաներ:

Դրամատան մը որ և է քաղաքականութեան ճիշտ կամ սխալ ըլլալը որոշելու համար հետեւեալ երկու պարագաները գիտնալ հարկ է՝

ա) տնտեսական միջավայրը,

բ) » կացութիւնը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՍՎԱՅԻ ըսելով ձեռնարկի մը գործունէութեան սահմանը կը հասկնանք, այսինքն իր գտնուած տեղը և յաճախորդներուն դասակարգը:

Դրամատան հաշուեկշիռը լուծուած ժամանակ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ շատ լաւ տեղեակ ըլլալու է, առանց ասոր դրամատան քաղաքականութիւնը չենք կրնար ըմբռնել: Օրինակ՝ նորմալ ժամանակի մը մէջ ունեցած բաձր տէվրի միջերբը կամ բարձր փոխառութիւնները և աննորմալ ժամանակուան մէջ ունեցածէն բոլորովին տարբեր նշանակութիւն մը կ'ունենայ:

## 5.- ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ

Ապահովագրութիւնը առեւտուրի այն ճիւղին վրայ է որ տնտեսութեան մը մէջ պատահող արկածներու թիւը որոշելէ վերջ որոշ գումարի մը պատկանող վտանգը

կը հաշուէ և այդ վտանդին վրայ շահ մըն ալ աւելցընելով ապահովագրելու գողէն զայն կը գտնուի: Օրինակ՝ ենթացողքին թէ քաղաքի մը մէջ 4000 տուն կայ և այս տուներէն տարեկանը 40 ին հրդեհ կը պատահի: Այս ըսել է թէ 100 տունէն մէկը կ'այրի: Ուրեմն ապահովագրական ձեռնարկը կ'որոշէ ապահովագրուած գումարէն 1 0/0 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՁԻՔ մը ասնել սակայն եթէ 1 0/0 անէր ինքը շահ մը ապահովուած պիտի չըլլար և այս պատճառաւ  $1\frac{1}{4}$  0/0 կը պահանջէ:

Ուրեմն ապահովագրական ընկերութիւնը անհատներու անձանօթ, սակայն հաւաքականութեան համար ծանօթ եղող որոշ վտանգները ապահովագրողէքի մը փոխարէն կ'ապահովագրէ, ապահովագրողին վնասը կը հատուցանէ արկածի մը պարագային և այս սպասարկութեան փոխարէն իբր վարձք ապահովագրողէք մը կը ստանայ:

Այսպէսով տարւոյն վերջը, կամ հաշուեկշիւը պատրաստուած ատեն ապահովագրողէքները գանձուած կ'ըլլան: Այս ապահովագրողէքները շահ նկատել ճիշտ պիտի չ'ըլլար, որովհետև տակաւին կրնայ ըլլալ որ ընկերութիւնը հատուցումներ ընէ արկածներու առջև: Այս պատճառաւ գանձուած ապահովագրողէքներուն մէկ մասը իբր պարտք կ'երեւայ ապահովագրական ընկերութեանց կացութեան կշռին վրայ: Այս պարագային ինչ արդիւնք տուր անորոշ է ապագայի մէջ: Նոյնպէս պարտք կ'երեւան պատահած արկածներուն փոխարժէքները, սակայն տոնք ևս տակաւին ճշդուած գումարներ չեն ըլլար և միայն ընկերութեան լուր տուած կ'ըլլայ թէ այնինչ ապահովագրողը արկածի մը հանդիպած և այս արկածէն յառաջ եկող վնասը յետագային է Իսպէնչեան, Հաշուեկետի լուծում

որ պիտի որոշուի: Ասկէ զատ բասիֆի վրայ որոշուած և տակաւին չի վճարուած վնասներու հատուցումները կը տեսնենք:

Գալով սեփական դրամադրութիւններուն անոնք շատ քիչ անգամ ամբողջով վճարուած կ'ըլլան, այսինքն ընկերութեան բաժնետէրերը իրենց մասնակցութիւնը միայն մասամբ բերած կ'ըլլան: Այս ի յայտ կուգայ երբ բասիֆի կողմը հիմնական դրամադրութիւն տակաւին չի գանձուած մասը նուազած ըլլայ կամ թէ չի գանձուածը աքթիֆին մաս կազմէ:

Գալով աքթիֆին հոն մասամբ կապուած ստացուածք մը կը տեսնենք ան ալ հետեւեալ պատճառաւ: Ապահովագրական ընկերութիւնները յաճախ իրարու բաժնետիրութիւնը կը գնեն որպէս զի արկածները կամ վնասները իրենց մէջ բաժնեն: Այս բաժնետիրութիւնը մասնակցութեան համար գնուած կ'ըլլան, այս պատճառաւ ծախու չեն և կապուած ստացուածք կը նկատուին: Գալով մնացեալ աքթիֆին ան ազատ ստացուածք անուանել հարկ պիտի ըլլար քանի որ ան միշտ ձեռնարկէն քաշուելու հնարաւորութիւնը տալու է: Ազատ ստացուածք կը համարուի, որովհետեւ անոր ղեկավարումը կամ օգտագործումը ապահովագրական ընկերութեանց օրկանիք գործունէութեան մաս չի կազմեր: Ապահովագրական ընկերութեան մը օրկանիք գործունէութիւնը կարելի եղածին չափ բարձր ապահովագրողչէք մը ստանալ և նուազ վնասուց հատուցում տալէ կը բաղկանայ: Այս ազատ ստացուածքը արժեթուղթերէ, դրամատունէ պահանջքէ, կալուածներէ և դրաւեալ փոխատուութիւններէ կը բաղկանայ:

Շատ անգամներ օրինական տրամադրութիւնները կ'որոշեն թէ ի՛նչերէ բաղկացած պէտք է ըլլայ ապա-

հովազրական ընկերութեան մը աքթիֆները: Այս վերջինին նպատակն է ընկերութիւնը միշտ կարող ընել փնասները հատուցանելու:

Երբեմն կամ յաճախ, օրինական տրամադրութեանց պատճառաւ, ապահովագրական ընկերութիւնները իրենց ըրած ապահովագրութիւններնին ուրիշ ընկերութեան մը ապահովագրեն (réassurance) և այս պատճառաւ իրենց ստացած ապահովագրողչէքին մէկ մասը անոր կուտան: Այսպիսի պարագայի մը տակ կամ սապէս կ'ըլլայ թէ՛ ընկերութիւնը իր արկածի պարագային համար ստանձնած հատուցումէն նուազ կ'արձանագրէ բասիֆի կողմը, կամ թէ՛ այսպէսով կրկնակ ապահովագրուած մասը իբր պահանջ կ'արձանագրէ աքթիֆի կողմը:

Ասոնք այսպէս ըլլալով ամեն ընկերութեան ըստ իր հաշուակալութեան, կամ ըստ իրեն երկրին օրէնքներուն առաւել կամ նուազ տարբերութիւններով կը պատրաստէ իր հաշուեկշիռները: Մենք այս բոլոր երկիրներու օրէնքները հոս ուսումնասիրել մեր նիւթէն հետանալ պիտի նկատէինք և ընդհանուրին ի զօրու եզող մասերը ուսումնասիրելով կը բաւականանք:

## 6.- ՔՕՆՑԵՐՆՆԵՐՈՒ ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԼՈՒԾՈՒՄԸ


Քօնցերն ըսելով այն առևտրական հաստատութիւնը կը հասկնանք որ իրեն կապուած շատ մը ձեռնարկներ կ'ունենայ և որոնց պարտականութիւնն է ճիւղի մը պէտք եղող բոլոր գործունէութիւնը իրենց շնորհիւ կատարել: Օրինակ՝ մետաղագործական քօնցիրն մը մետաղի հանքը, զայն գտելու համար բարձր փուռեր (Hauts fourneaux), զայն ծախելու համար մթերանոց-

ներ և, կամ թէ սպառելու համար ճարտարուեստական մեքենաներու գործարաններ, կամ նոյնիսկ երկաթուղագիծեր կը շինէ: Աստուծոյ ընդհանրապէս անհատն ընկերութիւններ կ'ըլլան և իրենք ալ իրենց կարգին անհատն ընկերութիւններ կը հաստատեն և անոնց բաժնէթուղթերը կը գնեն: Այս բաժնէթուղթերը մասնակցութեան բաժնէթուղթեր կ'ըլլան և ծախու չ'ըլլալնուն ձեռնարկին դոյութեան կապուած կըլլան և կապուած ստացուածքը կը նկատուին: Այս պատճառաւ քօնցերններէն շատեր իրենց ունեցած մասնակցութիւններն իբր իրենց կապուած ստացուածքը ցոյց տալով կը գահանան և ամեն տարի, հաշուեկշռի պատրաստութեան ժամանակ քօնցերնի պատկանող ընկերութեանց արդիւնքները իբր քօնցերնին շահը կամ վնասը կը նկատուի առանց իւրաքանչիւր ընկերութեան մասին մասնաւոր արձանագրութիւն մը ընելու: Երբեմն ալ քօնցերնին պատկանող ընկերութեանց հաշուեկշռներու զանազան մասերը գումարուելով քօնցերնին կեդրոնի հաշուեկշռին վրայ կ'արձանագրեն: Օրինակ՝ եթէ քօնցերն մը 4 ընկերութիւն կազմած է և եթէ իւրաքանչիւրը 1000 ի պատրաստ դրամ մը ունի քօնցերնին պատրաստ դրամը 4000 եղած կ'ըլլայ:

Քօնցերնի մը պատկանող զանազան ընկերութիւններ օրինական գեանի վրայ բոլորովին անկախ կ'ըլլան և առանձին կեդրոնէ մը կը ղեկավարուին և քօնցերները պատասխանատու չեն ըլլար սնանկութեան մը պարագային:

Հոլանդի, թըրքաի, քարթէի և լին.ի ձեռով եղող ընկերութիւնները արտաքնապէս քօնցերններուն կը նմանին, սակայն էական կէտերու մէջ իրարմէ առաւել կամ նուազ տարբերութիւններ ունին:

# ԼՈՒԾՄԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ



## 1.- ՀԱՇՈՒԵԿՇՈՒՆ ԵՐԲԵՄՆԻ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախորդ գլուխներուն մէջ տեսանք և ընդունեցինք որ հաշուեկշիռը իր կացութեան և արդիւնքի կշիռներով ձեռնարկին էութիւնը պատկերացնող տուեալ մըն է: Այս այսպէս ըլլալով երբեմն այնպիսի պարագաներու առջև կը գտնուինք ուր հաշուեկշիռը պատրաստողը զայն այս օգտակարութեանէն մասամբ կամ ամբողջովին հեռացուցած կ'ըլլայ: Այսպիսի պարագաներու տակ է որ ՀԱՇՈՒԵԿՇՈՒՆ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ մասին կը խօսուի, ինչ որ հետեւեալ պարագաները կը կազմէ.

- ա) անդխտակից պատրաստութեամբ հաշուեկշիռներ,
- բ) Սնխօս հաշուեկշիռներ,
- գ) Սխալ հաշուեկշիռներ,
- դ) Կեղծ հաշուեկշիռներ:

ՀԱՇՈՒԵԿՇՈՒՆ ԱՆԳԻՏԱԿԻԾ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԾ կ'ըլլայ երբ զայն պատրաստողը ծանօթ չ'ըլլայ հաշուեկշիռի մասնագիտութեան և մասնագիտական կարգ մը սխալներ ընէ: Օրինակ՝ երբ ձեռնարկ մը կարասիները մաս կազմել տայ իր շրջող ստացուածքին, կամ թէ երբ վերջին՝ զլխաւոր սիւնակին մէջ հանումներ կամ մէկէ աւելի գումարումներ ընէ: Այսպիսի պարագայի մը տակ լուծողը զայն նոր թուղթի մը վրայ մասնագիտական կա-

նոնները կիրարկելով վերստին կը պատրաստէ :

ՀԱՇՈՒԵԿՇԻՌՆԵՐԸ ԱՆՆՈՍ կը նկատուին երբ անոնք այնպէս մը ներկայացուին որ միայն օրինական պայմանները լրացնեն և ստոնք ալ շատ վիճելիօրէն : Անխօս հաշուեկշիռները մասամբ անանուն ընկերութեանց կողմէ կը հրատարակուին , որոնք երբեմն չեն ուզեր իրենց գաղտնիքները դուրս հանել : Զանազան երկիրներու օրէնքներն ալ մասամբ այսպիսի հաշուեկշիռներու պատրաստութիւնը թոյլատրած կ'ըլլանք երբ առևտրական օրէնքը անանուն ընկերութիւններուն կ'արտօնէ ձեռնարկի մը վնաս հասցունելիք գաղտնիքները հանրութենէն պահելու :

Երբեմն ալ հաշուեկշիռը սխալներ կը պարունակէ և որոնք ձեռնարկին կացութիւնը բոլորովին կը փոխեն : Օրինակ՝ Լոնթոնի Թէ Դեռնարկ մը 100000 ի կալուած մը ունի և այս կալուածը գրաւ դրուելով 40000 ի փոխառութիւն եղած է : Եթէ հոս գրաւական պարտքը առանց բասիֆի կողմը արձանագրելու զայն կալուածներէն հանելով անոր արժէքը աքթիֆի կողմը 60000 նշանակուի հոս ձեռնարկին իրական կացութիւնը պատկերացուած չ'ըլլար , քանի՛ որ գրաւի փոխարէն եղած փոխառութիւն մը ձեռնարկին վերջին ծայր նեղութիւնը կամ գրամի ստիպողականութիւնը ի յայտ կը բերէ :

Ասոնցմէ զատ կան ԿԵՂԾ ՀԱՇՈՒԵԿՇԻՌՆԵՐԸ որոնք պատրաստողին կողմէ գիտակցաբար եղած կ'ըլլան կեղծարարութեան մը համար : Օրինակ՝ երբ գոյութիւն չ'ունեցող ստացուածքներ անուանուին կամ պարտքերը աւելի կամ նուազ արձանագրուին :

Ասոնք հաշուեկշիռի մը երբեմնի կամ առ հատարակ անվստահութիւն ներկայացնող պարագաներն են : Ասոնք ներքին լուծման մէջ լաւ մը կրնան ուսումնասիրուիլ



քանի որ հաշիւները տեսնելու կարելիութիւնը ունինք: Արտաքին լուծողը այս ընելու երբեմն կարող է՛ ըլլար, հետեւաբար ան ուրիշ միջոցներու դիմելու պէտք ունի: Այս միջոցներուն զլխաւորները ձեռնարկի մը տեղեկագրութեան ուսումնասիրութիւնն է, իսկ միւսը տնտեսական կացութեան ուսումնասիրութիւնը:

Վիճակագրական գրութեամբ պատրաստուած հաշուեկշիռ մը, գրեթէ միշտ, հաշուեկշռին անկատար մասերը մէջտեղ կը հանէ:

## 2.- ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տեղեկագրութիւնը անանուն ընկերութեանց վարչական խորհուրդին կողմէ (*rapport du conseil d'administration*) տարեկան գործունէութենէն վերջը բաժնետէրներու հաւաքականութեան կը ներկայացուի:

Այս տեղեկատուութիւնը ի մասնաւորի կը ծառայէ հաշուեկշռին զանազան մասերը բացատրելու և թուանշանները աւելի խօսուն դարձնելու: Օրինակ՝ տեղեկագրութեան մէջ պէտք է ըսուած ըլլայ ծախուած ապրանքներու քանակը կամ որքան գործաւոր աշխատիլը են:

## 3.- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հաշուեկշռները անկատար կը նկատուին նաև երբ տնտեսական կացութիւնը փոփոխութեան մը ենթարկուի և այս պատճառաւ հաշուեկշիռ մը լուծած ժամանակնիս տնտեսական կացութեան լաւ տեղեակ ըլլալնիս հարկ


է: Օրինակ՝ տազնապի մը մէջ ունեցած բարձր ապրանքի մթերքի մը նշանակութիւնը սովորական ատենուանէն կը տարբերի:

Այս պատճառաւ անտեսական կացութիւնը կամ հրապարակը ուսումնասիրել հարկ է, ինչ որ օտար արտայայտութեամբ մը քօնփօնքթիւր կրնայինք ըսել: Հոս կ'ուզենք հրապարակներուն ոչ թէ միայն ներկան այլ նաև ապագան գտնել: Ասոնք ուրիշ կրնայինք գիտնալ: Այս անմիջապէս պատասխանուելիք հարցում մը չէ, քանի որ առևտրականի մը ամենէն դժուարին հանդիսացող պարագան է: Ասոնք գիտնալու համար կան անտեսական պարբերաթերթեր և կամ թէ մաս մը օրաթերթեր որոնք առևտրական բաժին մը կ'ունենան, որ այս հարցերով կը զբաղին և որոնց գլուխը կը գտնուին խմբագիրներ որոնք հմուտ կ'ըլլան անտեսական հարցերու:


Ասոնք երբեմն ուղղակի իրենց կարծիքը կը յայտնեն հրապարակին վրայ և կամ թէ վիճակագրական թուանշաններ կը դնեն: Վերջինները ընթերցողներու կողմէ է որ կը վերլուծուին:


Վերջին ատեններս կ'ուղուի հրապարակին ապագան նախատեսելու համար մասնաւոր գրութիւններ հիմնել ինչ որ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԵՐՄԱՉԱՓ կը կոչուի: Հոս կարգ մը տուեալները ապագայ հրապարակին կացութիւնը կրնան որոշել: Ասոնք հոս ըսել շատ շահաւոր ըլլալով հանդերձ կարող չենք այս կարճ բացատրութեանց մաս կազմել տալու երբ անոր ուսումնասիրութիւնը կը պահանջէ որ անտեսագիտական շատ մը խոր և նրբին մասերուն մէջ մտնենք: Արդէն ալ սակայն ուղղակի մեր նիւթը եզրղ հաշուելիչիւններու լուծման մասնագիտութեան մաս չի կազմէր:

ա.) Կացուքիւն




բ.) Արդիւն






ԿԱՄԻՔ Թիվ 2


ա. - Կացուցիչի Կրակիք



բ. - Արդյունքի Կրակիք



ԱՌԵՏՐԱՎԱՆ ԳԵՌՆԱՐԿԻ ԱՇ ՍԵՔՆԱԶԱՍ



ա.) Կացութիւն 31/12/1931 թ.

ԱՔՐՈՅ

ՌԱՍՆ

Կազմած ստացումներ	8 821 05	Սեփական դրամացույց	17 000 —
Մեկնումներ	3990.70	Օտար դրամացույց	6 392 70
Կազմածներ	4050.35	Երախտաւորում պարտեր	840.90
Կտրամներ	780.—	Պատահականներ	4070.05
Երջող ստացումներ	9 190 70	Պատահականներ	1481.75
Պատահականներ	870.—		
Ապրանքներ	3840.—		
Պատահականներ	500.—		
Նպաստներ	3980.70		
Վճար	380 05		
Եւ վճարուած դրամացույց	5 000 —		
	23 392 70		23 392 70

բ.) Կացութիւն 31/12/1931 թ.

ԱՔՐՈՅ

ՌԱՍՆ

Կազմած ստացումներ	750 —	Սեփական դրամացույց	14 196 10
Պատահականներ	750	Նպաստներ	12 915.80
Երջող ստացումներ	9 437 10	Շահ	1 290.30
Պատահականներ	3780.50	Օտար դրամացույց	2 242 —
Պատահականներ	4576.—	Պատահականներ	2242.—
Պատահականներ	580.—		
Պատահականներ սուրճով	490.60		
Պատահականներ	5 175 —		
Պատահականներ	4080.—		
Պատահականներ	1095.—		
Սեփական ծախսերու համար			
Պատահականներ	1 076 —		
	16 438 10		16 438 10

ա.) Կացութեան կէիո

		%	%			%	%
Կապուած ստացուած		3 866	4	Սեփական դրամագլուխ		63 589	72
Կտրախիներ	3866.—	4		Նախկինը	61500.—	70	
Շրջող ստացուած		75 223	85	Շահ	2089.—	2	
Պատահաս դրամ	965.—	1		Օտար դրամագլուխ		25 000	28
Դրամատունէ պահանջ	23624.—	27		Պատահանութիւններ	11500.—	13	
Ապրանք	40500.—	46		Պատահանութիւններ	13500.—	15	
Պատահանութիւններ	10134.—	11					
Ազատ ստացուած		9 500	11				
Արժէքուղբեր	9500.—	11					
		88 589	100			88 589	100

բ.) Կացութեան կէիո

		%	%			%	%
Կապուած ստացուած		3 866	4	Սեփական դրամագլուխ		63 589	72
Կտրախիներ	3866.—	100		Նախկինը	61500.—	97	
Շրջող ստացուած		75 223	85	Շահ	2089.—	3	
Պատահաս դրամ	965.—	1		Օտար դրամագլուխ		100	28
Դրամատունէ պահանջ	23624.—	31		Պատահանութիւններ	11500.—	46	
Ապրանք	40500.—	54		Պատահանութիւններ	13500.—	54	
Պատահանութիւններ	10134.—	14				100	
Ազատ ստացուած		9 500	11				
Արժէքուղբեր	9500.—	100					
		88 589	100			88 589	100



ա.) Արդիւնքի Կէիւ

		%	%		%	%
Գործաւնութեան ծախք	2 819	53		Գործաւնութեան շահ	5 250	99
Կարասիի նուազ արժէք. 384.--		7		Արժեքուրբերու շահաբ.	58	1
Վնասուած վարձք 1500.--		29				
Պատշտեկից բուշակ 935.--		17				
Անգանձելի պահանջք	400	8				
Զուտ շահ	2 089	39				
	5 308	100			5 308	100

բ.) Արդիւնքի Կէիւ

		%	%		%	%
Գործաւնութեան	2 819	53		Գործաւնութեան շահ	5 250	99
Կարասիի նուազ արժէք. 385.--		14		Արժեքուրբերու շահաբ.	58	1
Վնասուած վարձք 1500.--		53				
Պատշտեկից բուշակ 935.--		33				
		100				
Անգանձելի պահանջք	400	8				
Զուտ շահ	2 089	39				
	5 308	100			5 308	100

		+	-			+	-
Կապուսած ստացուածք	3 866	366		Սեփական դրամադրույթ	63 589		
Կարասիներ	3866.-			Երեւոյից	61500.-		
	75 223			Եւրո	2089.-		2089
Շրջող ստացուածք			14035				
Պատահական դրամ	965.-						
Դրամաւորութեան պահանջ	23624.-	23624		Օտար դրամադրույթ	25 000		
Արժանի	40500.-	500		Պատահականութեան	11500.-		8000
Պատահականութեան	10134.-	4134		Պատահականութեան	13500.-		4500
	9 500			Պատահականութեան			
Ազատ ստացուածք							
Արժանի	9500.-	28624	14035				
		14035					
	88 589	14589			88 589		14589

ա.) Կացութեան վիճակագրութիւն

Առ հազար կրճատւած 1=1000	1		2		3		4	
		%		%		%		%
<b>Ա.ՊՔ.ԻՑ</b>								
Կապուած ստացուած	4 205,—	30	5 300,—	29	5 570,—	31	8 800,—	45
Գործարան, մեքենայ, ելն.								
Շրջող ստացուած	375,3	3	566,4	3	534,3	3	480,5	2
Սնունկ	4 003,5	28	4 780,6	27	6 078,4	34	5 053,4	26
Պանամբ	2 007,2	14	2 500,7	14	2 060,7	10	2 507,8	13
Նախանիւք	3 570,1	25	4 816,—	27	4 008,3	22	2 708,3	14
Պատրաստ սպանք								
	14 161,1	100	17 963,7	100	18.251,7	100	19,550,—	100
<b>ԲԱՍՈՒՑ</b>								
Սեփական դրամագրութիւ	7 000,—	50	9 000,—	50	9 000,—	49	9 000,—	46
Հիմնական դրամագրութիւ	2 257,—	16	3 533,—	20	3 403,—	18	3 391,—	17
Պանեսներ	995,—	7	1 145,—	6	1 430,—	8	3 552,—	18
Շահ								
Օտար դրամագրութիւ								
Պարտաւորւթեր	2 500,—	17	2 475,—	14	2 450,—	14	1 425,—	7
Գրանասանց պարտքեր	580,3	4	607,3	3	680,3	4	1 143,4	7
Պարտաւորւթեր	828,8	6	1 203,4	7	1 288,4	7	1 038,6	5
	14 161,1	100	17 963,7	100	18.251,7	100	19,550,—	100

բ.) Աւդիւնքի վիճակագրութիւն

Առ հազար կրճատւած, 1=1000	1		2		3		4	
		%		%		%		%
<b>ՀԱՍՏՅՔՆԵՐ</b>								
Մշակուած սպրանճներու զոււարթ	6 740,3	100	7 050,6	100	8 007,5	100	15 790,6	100
<b>ԵԱՆՔՆԵՐ</b>								
Աւտօբիլանց	703,4	11	758,2	11	884,9	11	2 309,7	9
Նախանիւք	2 676,2	40	2 717,6	39	3 110,—	39	4 950,8	35
Գործաւորուղչէք	947,8	13	945,—	13	998,3	12	1 670,—	11
Պատեցնէլց բոսակ	960,—	13	1 007,8	14	1 140,3	14	2 160,4	15
Վանաւուման ծախքեր	420,4	7	434,7	6	400,—	5	784,3	5
Վնարուած տնտեսներ	37,5	1	42,3	1	44,—	1	353,4	2
Զուտ շահ	995,—	15	1 145,—	16	1 430,—	18	3 552,—	23
	6 740,3	100	7 050,6	100	8007,5	100	15 790,6	100

Սեփական եւ օտար դրամագլուխներու համեմատութիւնը  
 $72\% : 28\% = 3 : 1$

Օտար դրամագլուխին համեմատութիւնը ընդհանուր  
դրամագլուխի գումարին  $100\% : 28\% = 4 : 1$

Կապուած եւ շրջող սագուածքներու համեմատութիւնը  
 $4\% : 85\% = 1 : 21$

Կապուած սագուածքին համեմատութիւնը ընդհանուր  
սագուածքի գումարին  $4\% : 100 = 1 : 25$

Շրջող սագուածքին համեմատութիւնը ընդհանուր  
սագուածքի գումարին  $85 : 100 = 17 : 20$

\* \* \*

Շրջող սագուածքին դառնալը  
54.550 (գործառնութիւն) : 75.223 (Շրջ. սագ.) 72 %

Զուտ շահի համեմատութիւնը սեփական դրամագլուխին  
 $3\% : 97\% = 1 : 32$

Զուտ շահի համեմատութիւնը ընդհանուր դրամագլուխին  
 $2\% : 100 = 1 : 50$

Զուտ շահի համեմատութիւնը գործունեութեան  
 $2089 : 54550 \approx 4\%$  կամ  $1 : 25$

Զուտ շահի համեմատութիւնը գործունեութիւն ծախսերուն  
 $2089 : 2819 = 10 : 14$

Զուտ շահի համեմատութիւնը ոչ զուտ շահի գումարին  
 $39\% : 100\% = 2 : 5$

Սացուածք	ա.)	Գրամագլուխի կազմութիւն		Գրամագլուխ	
			%		%
Պատրաստ դրամ	20 000	—	100	Սեփական գրամագլուխ	15 000 — 75
				օտար երկար պայմանք. դրամով	5 000 — 25
	20 000	—	100		20 000 — 100

Սացուածք	բ.)	Սացուածքի կազմութիւն		Գրամագլուխ	
			%		%
Կապուած սացուածք	8 000	—	40	Սեփական գրամագլուխ	15 000 — 75
Շրջող սացուածք	10 000	—	50	օտար երկար պայմանք. դրամով	5 000 — 25
Ազատ »	2 000	—	10		20 000 — 100
	20 000	—	100		

Սացուածք	գ.)	Առեւտրական կազմութիւն		Գրամագլուխ	
			%		%
Կապուած սացուածք	8 000	—	40	Սեփական գրամագլուխ	15 000 — 25
Շրջող »	11 000	—	55	օտար երկար պայմանք. դրամով	5 000 — 75
Ազատ »	1 000	—	5		20 000 — 100
	20 000	—	100		

Անքիձ	դ.)	Կացութիւն		Բառիձ	
			%		%
Կապուած սացուածք	8 000	—	44	Սեփական գրամագլուխ	13 000 — 72
Շրջող »	9 000	—	50	օտար երկար պայմանք. դրամով	5 000 — 28
Ազատ »	1 000	—	6		18 000 — 100
	18 000	—	100		

Անքիձ	ե.)	Կացութիւն		Բառիձ	
			%		%
Կապուած սացուածք	8 000	—	40	Սեփական գրամագլուխ	15 000 — 75
Շրջող »	11 000	—	55	օտար երկար պայմանք. դրամով	5 000 — 25
Ազատ »	1 000	—	5		20 000 — 100
	20 000	—	100		

Ասացում	ա.) Դրամագրույի Կազմութիւն			Դրամագրույ		
			%			%
Պատաս քրամ	20 000	—	100	Սեփական դրամագրույ	5 000	— 25
				օտար երկար պայմանմ. դրամգլ.	15 000	— 75
	20 000	—	100		20 000	— 100

Ասացում	բ.) Ասացումի Կազմութիւն			Դրամագրույ		
			%			%
Կապուած սսացում	12 000	—	60	Սեփական դրամագրույ	5 000	— 25
Շրջող սսացում	8 000	—	40	օտար երկար պայմանմ. դրամգլ.	15 000	— 75
	20 000	—	100		20 000	— 100

Ասացում	գ.) Առեւտրական Կազմութիւն			Դրամագրույ		
			%			%
Կապուած սսացում	12 000	—	44	Սեփական դրամագրույ	5 000	— 19
Շրջող »	15 000	—	56	օտար երկար պայմանմ. դրամգլ.	15 000	— 55
				» կարն » »	7 000	— 26
	27 000	—	100		27 000	— 100

Արքիձ	դ.) Կացութիւն			Բառիձ		
			%			%
Կապուած սսացում	12 000	—	50	Սեփական դրամագրույ	1 000	— 4
Շրջող »	12 000	—	50	օտար երկար պայմանմ. դրամգլ.	15 000	— 63
				» կարն » »	8 000	— 33
	24 000	—	100		24 000	— 100

Արքիձ	ե.) Կացութիւն			Բառիձ		
			%			%
Կապուած սսացում	12 000	—	44	Սեփական դրամագրույ	1 000	— 4
Շրջող »	15 000	—	56	օտար երկար պայմանմ. դրամգլ.	13 000	— 48
				» կարն » »	13 000	— 48
	27 000	—	100		27 000	— 100

ա.) Կացութեան վիճակագրութիւն

Առ հազար կրնասուած, 1=1000	1	2	3 ա	3 բ	3 գ
<b>Ա.ԲԲԻՖ</b>					
Կալուածներ եւ կարասիներ	509,—	514,—	510,—	360,—	360,—
Սնտուկ եւ դրամատոնէ պահանջ	117,—	13,—	4,—	4,—	4,—
Ապրանքներ	230,—	443,—	430,—	380,—	231,5
Զանազան պահանջք	55,—	78,—	160,—	110,—	55,—
Վնաս		73,4	124,8	21.5	
	911,—	1.121,4	1.228,	875,5	650,5
<b>ԲԱՍԻՖ</b>					
Անուանական դրամագլուխ (սեփ.)	400,—	400,—	400,—	50,—	250,—
Պանեաս					25,—
Բաշխելի շահ	43,3	3,3	3,3		
Երկար պայմանք պարտքեր	330,6	319,6	315,—	315,—	355,—
Պարտաւորեցւածներ	137,1	243,—	290,—	290,—	
Իրամասանց պարտք		155,5	220,5	220,5	20,5
	911,—	1.121,4	1.228,8	875,5	650,5

բ.) Արդիւնքի վիճակագրութիւն

Առ հազար կրնասուած, 1=1000	1	2	3
<b>ԾԱԽՅԵՐ</b>			
Ընդհանուր ծախս	13,5	14,1	15,—
Ներածման մասն	21,—	42,—	12,—
Աւօրդիւնման	12,3	13,2	5,3
Խառն ծախսեր	7,1	13,3	12,3
Վնասուած տոկոսներ		9,8	21,3
Բաշխելի շահ	43,3	3,3	3,3
Նախորդ տարուան վնասը			73,4
	97,2	95,7	142,6
<b>ԱՆՍՈՐՆԵՐ</b>			
Նախորդ տարուան շահէն	1,7	3,3	3,3
Վնասուած շահ	92,6	10,—	14,5
Գանձուած տոկոսներ	2,9		
Վնաս		73,4	124,8
	97,2	95,7	142,6

Ա.Բ.Թ.Ի.Յ

ա.)

Հաւուսային մուտքի կէիւ

ԱՆՍԻՅ

Կալուածներ	45 700	—	Սեփական դրամագումար	40 000	—
Կարասիներ	578	—	Շահ	5 840	79
Ապրանքներ	17 847	64	Պարտաւորակներ	20 637	—
Գաւազաններ	8 793	50	Պարտաւորութիւն	13 000	—
Պարտաւորում	5 578	65			
Զանազան պարտաւորումներ	980	—			
	79 477	79		79 477	79

բ.) Հաւուսային կացութեան կէիւ

Գանձումներ			Սեփական դրամագումար	40,000	—	
Պարտաւորում	5,578	65	Գործունէութեան շահ	5,840	79	45840 79
Կալուածներ	42,010	—	Հաւուսային ծախս	4,205	64	
Ապրանքներ	18,117	80	Բաժնետէրերու մնացորդ առնելիք	20,000	—	24205 64
Կարասիներ	400	—				21635 15
Գաւազաններ	8,793	50				
Զանազան պարտաւորումներ	830	—				
		75729 95				
Վճարումներ						
Պարտաւորակներ	20,637					
Պարտաւորութիւն	13,000					
Եւ վճարում օտար դրամագումար	33,637					
Հաւուսային ծախս	457	80				
	34,094	80				
Բաժնետէրերու վճարում	20,000	—				
		54094 80				
Պարտաւորում		21635 15				

Ծախսեր

գ.) Հաւուսային արդիւնքի կէիւ

Հասոյթներ

Կալուածներէ ետեւ գանձում	3 690	Ապրանքներէ շահ	270	16
Կարասիներէ » »	178	Հաւուսային վնաս	4 205	64
Զեղեց. պարտաւորումներէ ետեւ գանձում	150			
Հաւուսային ծախս	457	80		
	4 475	80	4 475	80



Աբխ	Կացութեան կէի		Բախն		
Անշարձիչներ	37 800	15	Սեպտեմբերի դրամագլուխ	155 341	60
Կարձաններ հ.հ.	37800.-		Յնուանական դրամագլուխ	100000.-	
Գանն	93 355	36	Պանդաններ	40000.-	
Պատաս ներին դրամ	12546.-		Տան	15341.-	
Պատաս օտար դրամ	22890.-		Երկար պայմանաժամով օտար դրամագլուխ	34 500	13
Կաննիկ կարմներ	1134.-		Պատաս շուկներ	34560.-	
Կրամասներէ նօսքո պահանջ	56785.-		Կարձ պայմանաժամով օտար դրամագլուխ	47 258	18
Արժեքողբեր	60 340	23	Լօր հաւուկերնացներ	14671.-	
Մասնակցութեան բաններողբեր	34000.-		Նօսքո »	22267.-	
Պատարողբեր	26340.-		Պայմանաժամով պարտեր	10320.-	
Պահանջներ	55 361	21	Յարդարիչ հաշիւներ	22 042	9
Պատական հաւուկերնացներ	12944.-				
Պատաս շուկներ	22212.-				
Տօքօր	20205.-				
Յարդարիչ հաշիւներ	12 345	5			
	259 201	100		259 201	100

Ծախսեր	Արդիւնի կէի		Հասոյքներ		
Կալուածի եւայլն անօրքիւման	750	4	Մնացորդ նախորդ տարուրնէ	1 415	8
Գործառնութեան ծախսեր	1 245	6	Արժեքողբերու շահաբերութիւն	6 345	34
Տուրներ	1 270	7	Տոկոս	7 374	40
Բաշխիւի շահ	15 341	83	Միջնորդիկէ հ.հ.	1 002	5
			Շահ	2 470	13
	18 606	100		18 606	100

ՀԱՅՈՒԵԿԾԻՌՆԵՐՈՒ  
ԹՂԹԱԾՐԱՐ



3 (5) ԿՐԱՃԻՔ  
12 (32) ՖՕՐՄԻԻԼ



BB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM0533\***

255.07.02.01.06.00/

